

«DROSCHAK»
REVUE MENSUELLE
organe
de la F. R. A. D.

ԴՐՕՇԿԿ

№ 12
DECEMBRE
1929
PARIS (France)
KAMENSKI

«ՀԱՅ ՅԵՂՈՓՈՒՈՎԵՆ ԻՈՂՆԵԿՑՈՒԹԵՆ» ՕՐԻՈՆ

ՄԵՐԹ ԶԱԽ, ՄԵՐԹ ԱԶ

(«Եկեմք սուրբ գիրք»)

«Որո՞րդ այն թերթերը նորից անառնող են հնչեցնում. չուսմբ, օգիտութիւն. ասխատհարում դաւաճանները սպանում են հոմկուսի միութեան, ճեղքում են չումաչի սրճային պայքարի օժիտանական ճակատը»:

Ոգի՞ր են այդ զննողները թշնամիները», որ այնպէս յուզել են յայտ «Պրուզա-նեթին եւ ան-Պրուզա-նեթին: Ա՛հ որ դեռ նոր յայտարարեց, որ հոմկուսի ներքին անդորրութիւնը խանդարող թուր թշնամիները ջանջուում են. անխ թերութիւն օժի դուրս ընդմիշտ կզգանում է, Տրոչկին հղում է Մարտարայի կողմնաբան, արտղիկանները բանտարում ու սուսարայտերում են եւ կամ ծունկի եկած Ստայինի սուշն: Որտեղի՞ց է այս նոր վտանգը»:

«Զախը պարտած է, ճիշտ է, բայց այժմու էլ ասում են դուրս բարձրացրել: Այսպէս է խորհրդային կարգերի սրտմարտութիւնը. մերթ՝ մար, մերթ՝ ալ, ժամացոյցի ճճանակի պէս. արեւինեան ուղիղ գիծն է այս: Զախը թեւ, բարձրանում է ալ: Եւ ի՞նչ ալ. Զամախութեան կառավարութեան նախապէս Որտեղ, Զամախութեան Արհեստակցական Միութեան կառավարութեան Զամախի, Սրբաբղ Միջոցայինի զեկուար եւ հոմկուսի ամենակրկնակաւոր սեւարան, Լեւինի սրբելի աւակերտ Ռուսաբեր — սրտը են դիտարարում ամբ թերութեամբ, սրտը են իրենց րաճաթի շտեմարտերի հետ ընդգիւղ եւ կառուցութեան ուղիղ գիծ է կամ, սակե՛ք ճիշտ, ստայինեան միութեանութեան գիծ»:

Տարի ու կէս ստա՞ծ էր: Որտեղ, Ռուսաբերն, Տոմսի, Ստայինի մէկ ճակատ էին կողմնում արտղիկան վտանգի գիծ: Տրոչկին ծառայել էր հոմկուսի անճանաչման եւ բանարական զեկուսարութեան սպասեման գիծ: Եւ քարայում էր վերադարձ գիւղի սպանական կո-

մունիքի յեղափոխական գիւղերը: Երեսուսարութիւնը լայն նստանքներով անցնում էր նրա կողմը: Ա՛խ երբեք անցիւղով կուտուցանելու: յիմարական չ՛ որչից հիասթափում՝ Տրոչկու կուցերի մէջ էր սեւեում նա փրկութեան ճանապարհը: Աստղիկը ըմբռնեց սպանացող վտանգը, եւ Տրոչկու ու արտղիկաններին հաջիւր փակելուց յետո՛յ՝ վճուական շարժումով հոմկուսի զեկը զարճեց գիւղի մար, գիւղի Տրոչկու մատնանշած ուղիները: Այսպիսով յաղթանակեց. մարտերի սեւակար. բնականեց արտղիկը, թէ՛ եւ ստանց Տրոչկու:

Իրեն անկունարար այդ նոր յաղաքանուութեան գրեց «Նպաստեց պահը», որի նպատակն է, «հիւղ տար այ ընթացքում, խորհրդային արղիկանութիւնը հասցնել ժամանակակից պարպաշած երկրների արղիկանութեան աստիճանին եւ նոյնիսկ անցնել էլ: Բացի այդ՝ երկարադարձութիւնը լրարկած է չեղիւղական»՝ Նստարական անուսութեան սկզբունքով, «հասցանախային որճարաններին»՝ խոսնքներով: Կեկուսիական տարրի հաջանատակարարման տարրերում ջրոյց ուղւած գիմարութիւնը շեղարացնելու նպատակով նրաանեց «Նպաստեցիկ զարճաւանները կամ պիտական խաշոր կուտուսութեան անուսութեանը զեկը գիւղի եւ օպարտեւիկի կառավարութեան հաջանեղիկ պատանջը: Ահա արտղիկովի կուտուսան» նոր եւ անխկ ուղիղ ճանապարհը:

«Նպաստեց պահը», բնականաբար, չէր կարող չանդկուել սուր շննաղտու: Մ.՝ ու նեկարգեցութեան յայտնեւ. միջ, սիգեր էին կուտուսը յաղաքանախանութեան վերջին մնացորդները: Մի շարք յարթ ժամանականք եւ իրականութիւնը որ գիւղ մասամբ սեւանելու բանականութիւնը պահած կոմունիստները շխարհանցին զայց ստուր, որ այդ ճրպել-

ըը միջոց է լինելու երկրի ուժերի եւ նիւթական միջոցների անհաշիւ վատման եւ մահացու վտանգ խորհրդային իշխանութեան համար, որովհետեւ իրրեւ նրա անմիջական հետեանք լինելու է ընդհանուր անտեսական տագնապ, գիւղատնտեսութեան ալլախերում, միջակ ու աղքատ դիւղացիութեան եւ գիւղի ու քաղաքի յարաբերութիւնների վերջնական խրդում, հացամթերքի պակասութիւնը, սով եւ այլն:

«Հնգամեայ պլանի» ձեւարկից ճարտարաւեստացման կամ ստալինեան տրոցկիզմի կատարի հակառակորդներ դուրս եկան Բուխարինը, Ռեկովը, Տոմսկին, որոնց չուրջ համախմբւեցին բոլոր նրանք, ովքեր պաշտպանում էին խորհրդային արդիւնաբերութեան եւ գիւղի նւաճման աստիճանական զարգացման տեսակէտը: Թէ ճառերով ու յօդւածներով մամուլի էջերում, թէ կենտրոնական կոմիտէին ներկայացւած դրաւոր գեկուցումներով նրանք ալլախտում էին չէզոքացնել ստալինեան նոր փորձի արդէտաւոր հետեւանքները: Բայց Կոմկուսի ծոցում ազատ խօսքն ու քննադատութիւնը մահացու յանցանքներ են: Եւ ահա կուսակցական մեքենան յարեց այս նոր «ընդգիծողիներին» դէմ: Սկզբում զգուշ ու մանածապատ եղանակով, յետոյ՝ համարձակ ու դոեհօրէն մժոռական: «Աջ վտանգը» դարձաւ օրւայ կարգախօս: Բուխարինը վտարեց Կոմկուսի ընդհանուր քարտուղարի պաշտօնից, Ռեկովին ու Տոմսկին փաստօրէն առանձնացւեցին ժանտախտով պարկուճների պէս: Շատերին բանտարկեցին, աքսորեցին, պաշտօններից հեռացրին, պատասխանատուութեան ենթարկեցին «կուսակցական գծով», մինչեւ որ այս նոյնմթերքի գոմարեց Կոմկուսի կենտրոնի կոմիտէի ընդհանուր ժողովը, որ եւ կատարեց «աջ թեքումի պորազլուխներին» հաշւեփակը: Կենտրոն կոմիտէի ընդհանուր ժողովը, իրրեւ պատիժ Բուխարինին հեռացրեց Պոլիտբիւրօից, իսկ Ռեկովին ու Տոմսկին նախազգուշացում արւււ, որ եթէ վերջ չտան իրենց յանցանքն ու մտայնութեան, «կուսակցութիւնը չի յապաղի կիրառել համապատասխան կազմակերպական միջոցներ նրանց վերաբերմամբ»: Եւ խորհրդային իշխանութեան, համախորհրդային արհեստակցական միութիւնների եւ համաշխարհային կոմունիստական շարժման երեք պետերը փութացին հրապարակային մեղալագրով յայտարարել, թէ իրենց հայեացքները եղել են սխալ եւ կուսակցական գիծն է ուղիղը՝ խոսանալով մի ժամանակ «ամբողջ կուսակցութեան հետ միասին մժոռական կոխ մղել ընդդէմ բոլոր շեղումների կուսակցական ընդհանուր գծից եւ, ամենից առաջ, ընդդէմ աջ թեքման»:

Այս մարդկային վաւերագրով, սակայն, խնդիրը չապառւեց: Ընդհակառակը, մեղալագ

կանր առիթ դարձաւ նոր եւ աւելի անդուսպ յարձակումների: Կուսակցի տակ տոնեց մեղալագիրը ստորագրողների ուղղամտութիւնը. մեղալագիրը յայտարարեց մի ճարտիկ խոց, որով «աջ պատեհապաշտները» շարունակում են հաւատարիմ մնալ իրենց հաւատամքին, պահում են իրենց հատածամուլ ձգտումները, շարունակում են դաւել ու պայքարել կուսակցութեան ծոցում, «հակառակ իրենց գծի կատարեալ անակութեան»: Կոմկուսի պաշտօնաթերթ «Պրաւդա»ն շանթ ու կայծակ է թափում իր երկկայ խմբագրապետ Բուխարինի եւ Ռեկովի ու Տոմսկու գլուխներին: Մեղալագիրը ստորագրւած է, «աջ ընդդէմադիրները» ծուռկի են բերւած, «կուսակցական գիծը» յարթանակել է, բայց Ստալինը չի հանդատանում, եւ խորհրդային մամուլը անընդհատ աճաղանգ է հնչեցնում: Տաւացի կերպով կըրկնւում է «ձախ ընդդէմադիրների» պատմութիւնը: Ի՞նչն է դրա պատճառը:

Պատճառը նոյնն է, ինչ որ եւ առաջ. խնդիրը միայն Բուխարինի, Ռեկովի, Տոմսկու անձի մէջ է, այլ ընդհանուր երեւոյթի: Այս երբեակի գլխաւորում է մի շարժում, որ, տրոցկիզմի պէս, խորունկ արձաններ ունի ընկերային անհնարայն խաւերի մէջ: Տրոցկին արտայայտում էր բանւորութեան որոշ մասի եւ յեղափոխական երիտասարդութեան տենւանքները. տրոցկիզմը ձգտում էր շարունակել մարտական կոմունիզմի աւանդութիւնները, որոնք դեռ կենդանի էին Կոմկուսի շարքերում: Այդ էր պատճառը, որ Ստալինը ստիպւած եղաւ դիմել զաղափարական նահանջի: Տրոցկին անձնապէս պարտեց, բայց «ձախ թեքումի» հարցում նրա տեսակէտը յաղթող հանդիսացաւ:

Բուխարին-Ռեկով-Տոմսկի խմբակի գաղափարախօսութիւնը նոյնպէս կենդանի է խորհրդային իրականութեան մէջ. նա ներկայացնում է ընկերային մի ուրիշ խաւ՝ գիւղացիութիւնն ու երկրի տնտեսական յառաջդիմութեան ձգտող շրջանները, մանաւանդ, մտաւորականութիւնը: Բուխարին-Ռեկով-Տոմսկու մեղալագանն ու ջախջախումը կարող են լինել նրանց անձնական ողբերգութիւնը, բայց շարժումը դրանով չի վերանայ: Գիւղացիական տարերքը այնքան ուժեղ է Ռուսաստանում, երկրի տնտեսական վերաշինութեան տենւը՝ այնպէս բուռն մասնագէտների ու մտաւորականութեան մէջ, որ ո՛չ Գեպէուսն, ոչ էլ Ստալինը իր բոլոր համահարգներով չեն կարող պատենչ քայել նրա առջև: Տարժումը անխուսափելիօրէն կը զարգանայ ու կը ձեւակերպւի, մինչեւ որ հասնի իր ճակատադրական վարձանին:

Այսպիսով, Կոմկուսի ծոցում ծնունդ առնող թեքումները — ձախ թէ՛ աջ — առանձին անհատների շար կամ բարի կամքի արդիւնք

չեն, այլ արտայայտութիւններ են ընկերային ներքին խմորումները — իւրայատուկ դասակարգային պայքար: Բնականոն, ազատ պայմաններում այս պայքարը կը վերածւէր արհեստակցական ու քաղաքական շարժման սովորական ձեւերի: Սորհրդային իշխանութեան տակ դասակարգային պայքարն էլ կատարուած է Կոմկուսի ներքո: Երէկ գերակշռեց բանուորական տարերբը, եւ իշխանութիւնը թեքեց նրանց կողմը: Վաղը, Տաւանաբար, գերակշռութիւնը կանցնի գիւղացիական տարերբին, որ Ռուսաստանի հարազատ տարերբն է, եւ իշխանութիւնը հարկադրուած կը լինի անցնել նրա կողմը:

Հէնց այս միակ փաստը բաւական է տեսնելու համար, որ «սոցիալիստական առաջին պետութեան» մէջ գոյութիւն չունի եւ ո՛չ մի սոցիալիզմ. աղջատուած դասակարգային հա-

սարակակարգն է այնտեղ իշխողը՝ աւելի գուհիկ ու աւելի այլանդակ, քան դրամատիրական որեւէ երկրում: Այս փաստը հերք է եւ նրա համար, որ կոյրերն իսկ համոզեն, թէ Ստալինի բռնապետութեան համար կարեւորը ո՛չ թէ ընկերային զարգացման ընթացքն է, այլ մերկ տենչը իշխանութեան: Իսկանը իշխանութիւնն է, իսկ թէ «ձախ» միջոցներով կը պահուի նա, թէ «այ» — նշանակութիւն չունի:

Կրկնում է Ֆրանսական յեղափոխութեան պատմութիւնը. այնտեղ էլ «այ»-ն ու «ձախ»-ը իրար միտ էին ուսում յանուն իշխանութեան եւ, ի վերջոյ, կերան միմեանց: Անխուսափելիորէն նոյնն է լինելու եւ այստեղ. ապակէ ամանի մէջ փակուած սարգերի պէս Կոմկուսի պետերը միմեանց են ուսում: Եւ, ի հարկէ, կուտեն — «այ»-ը կը լինի ուսողը, թէ «ձախ»-ը — վերջին հաշուով նոյնը չէ՞:

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԲԱՌԱՍՆԱՄԵԱԿԻ ԱՌԹԻԻ

1930 թւին կը լրանայ Հ. Յ. Դաշնակցութեան հիմնադրութեան քառասնամեակը: Այդ առթիւ աստղարկութիւններ կային յօրեյան կատարելու, բայց Հ. Յ. Դաշնակցութեան 11րդ Ընդհանուր ժողովը, աչքի աւջեւ ունենալով քաղաքական աննպաստ պայմանները, հայ ժողովրդի ներկայ թշուառ վիճակը, որուց յօրեյան կատարել ապագային, Հայաստանի մէջ, իսկ մինչեւ այդ 1930 Նոկտեմբերին Հ. Յ. Դաշնակցութեան Օրւոյ Հանդէսները կատարել ասանձին չուքով:

Յօրեյանները, աւելի շուտ, ուրախ օրերի գործ են. Հ. Յ. Դաշնակցութիւնը, ի հարկէ, չի կրնար հանդէսներ կազմել եւ ուրախանայ, այն պահուն, երբ ամբողջ ժողովուրդը — բոլորայ Երկիր թէ արտասահման — կայրի ծանր տաղանայի օրեր: Բայց քառասնամեակի առիթ մըն է, որպէսզի յետադարձ հայեացք նետենք մեր բեղմնուոր անցեալին վրա եւ անկէ ներքինչման դասեր քաղենք ապագայ գործունէութեան համար: Հ. Յ. Դաշնակցութեան կեանքը լեցուն է հերոսական փայլուն գործերով ու գիւցազնական դրւագներով, որոնցմէ շատերը մնացած են բոլորովին անծանօթ ներկայ սերունդին: 1930 թ: ականր պէտք է լինի Հ. Յ. Դաշնակցութեան ճանաչման տարի: Այս առթիւ անհրաժեշտ է, որ.

1. 1930-ին, ամբողջ տարւոյ ընթացքին, դաշնակցական մամուլի եւ բանուոր քարոզչութեան նիւթ դասնայ հայ յեղափոխական

շարժման եւ, ի մասնաւորի, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւնը:

2. Հրատարակութեան տրւին անցեալին յուշեր, յեղափոխական ձեւնարկներու պատմութիւններ, յեղափոխական գործունէութեան վայրերու նկարագրութիւններ, ուսումնասիրութիւններ եւ քարոզչական յօււածներ մեր կուսակցութեան կեանքի այլ եւ այլ փուլերու եւ երևոյթներու մասին:

3. Հրատարակութիւններու մէջ գետեղին նկարներ դաշնակցական գործիչներու եւ յեղափոխական վայրերու ու հաստատութիւններու:

4. Կուսակցական դասընթացներու եւ խմբական ու կոմիտէական զբաղումներու մէջ յայն տեղ տրւի Դաշնակցութեան պատմութեան:

5. Մամուլի եւ քարոզչութեան նիւթ դարձի Հ. Յ. Դաշնակցութեան ծրագրի պարզաբանումն ու ժողովրդականացումը, ինչպէս եւ ներկայ ու ապագայ գործընթակերպի լուսարանութիւնը:

Թ՛ո՛ղ 1930-ին, ամբողջ տարի անընդհատ, Հ. Յ. Դաշնակցութեան քառասնամեայ կեանքը կազմէ մեր մամուլի եւ բեմերու գլխաւոր նիւթը: 1930 թւականը պէտք է լինի Հ. Յ. Դաշնակցութեան ճանաչման տարի:

Հ. Յ. Դաշնակցութեան ԲԻԻՐՕ

Մտածումներ Լ. Յ. Դաւենակցութեան մասին

Մեր կուսակցութիւնը կոչուած է Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն: Իր կազմութեան օրերին նրա անունն էր «Հայ յեղափոխականների դաշնակցութիւն»: Նոյն նպատակին ձգտող, բայց տարբեր իմբակցութեանց պատկանող Հայ յեղափոխականներ, դաշնակցելով իրար հետ ընդհանուր գործի համար՝ կազմեցին մեր կուսակցութիւնը: Այսպիսով իր կազմութեան օրերին նրա նպատակը գործնական էր: Նա ոչ այնքան հետամուտ էր ամէն կրօնով համամիտ մարդիկ գտնելու և թերելու իրար քով, որքան նոյն գործին ու նպատակին ձգտող յեղափոխականներ դարձնելու իրար դաշնակից: Այս պատճառով նա գործեր ունեցաւ, առաջ քան Մրազիբ ունեւար: Դրանք տարբեր մտայնութիւնն ունեցող մարդիկ էին, բայց բոլորովին նոյն գործին ու նպատակին էին հետամուտ. այդ նպատակը տանկապատկան Հայաստանի ազատագրութիւնն էր: Մտածումի նոյնութիւնն ապախող նախապայման էր կուսակցութեանն անդամակցելու: Մրազիբ ընդհանուր դժերը նոյն էին և պատճառարանութիւնն ընդհանրապէս նոյն հիմքերն ունէր, բայց այդ հանգամանքը առաջնակարգ նշանակութիւն չունէր. կարևորը գործն էր: Ով որ ձգտում էր հայ ժողովրդի ազատագրութեան և գործնապէս աշխատում էր այդ ազատակի համար, գրանով իսկ իրաւունք էր ստանում Դաշնակցութեան անդամակցելու: Ժողովուրդի խաւերից դուրս եկած գործիչները ընաւ մտահոգ չէին այն մասին թէ Ի՞նչն է իրենց պայքարի վերջնական նպատակը. « ազատութիւն », ասում էին նրանք և զէնք անոնում, անցնում էր կերհի՛ր հարստահար ժողովուրդին օգնելու համար և հայերին սպատելու թիւրքի լուծից: Մտաւորական խաւն էր, որ երբեմն գրամարտ էր մղում Մրազիբի համար. մարտիկը գիտէր իր թշնամին իբր թիւրք և գնում էր նրա ձեռքից հայ ազատելու:

Կուսակցութեան գործնական բնոյթը արգելք էր դառնում ծրարաբան խնդիրների վրա երկարօրէն կանգ առնելու և այդ կարգի հարցեր ընդունւմ էին ու նրանց շուրջը պայքար ստեղծում առանցալպէս այն մարդիկ ու իմբակները, որ գործի մէջ թեքանում էին: Դաշնակցութեան հիմնադիրներն անգամ Մրազբային խնդիրներին մէջ շատ բարակը չէին մտնում: Ընդհանրապէս պարզ էր շարժման նպատակը — այդքանը բաւ էր գործեր յղանալու, կազմակերպելու և վարելու համար: Ոչ թէ չէին գիտակցում Մրազբային խնդիրներին արժեքը, այլ չէին կարծում, որ նրանց ման գնելութիւնն ու լուծումը գործնական յեղափոխութեան համար անխուսափելի անհրաժեշտութիւն լինէր: Այս պատճառով մի որեւէ յեղափոխական ձեռնարկի Մրազիբն աւելի շատ ժամանակ էր խլում և աւելի մեծ վիճաբա-

նութեանց տեղիք տալիս, քան բովանդակ կուսակցութեան ընդհանուր Մրազիբի մշակումը: Հաւանօրէն ամենքը մտածում էին. «նախ ազատագրենք, յետոյ կր տեսնենք թէ ինչպէս պէտք է կազմակերպել ժողովուրդի կեանքը»: Այս գործնական ոգին մեր կուսակցութեան հիմնական յատկութիւնն է եղած սկզբին և շարունակուած է մնալ մինչև այսօր: Մրազբային խնդիրները հիմա շատ աւելի արժեք ունեն, քան առաջ, բայց շարունակուած են նազ արժեք ունենալ քան գործնական յեղափոխութեան խնդիրները:

Սկզբում կուսակցութիւնը կոչուած էր «Կայ Յեղափոխականների Դաշնակցութիւն », բայց շուտով դարձաւ « Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն »: Այս հանգամանքը անհետեւանք չմնաց յետագային: Կուսակցականների գիտակցութեան մէջ Դաշնակցութիւնն իբր յեղափոխական կուսակցութիւն սկսաւ ձևաւորելու աւելի, քան իբր յեղափոխականների դաշնակցութիւն: Ուշադրութիւնը՝ ժամանակի քնթացքին՝ կուսակցութեան անդամներ յորակից անցաւ բուն իսկ կուսակցութեան բնոյթին: Ոչ այնքան յեղափոխականների դաշնակցութիւն, այլ իսկապէս մարդկանց միութիւն, այլ յեղափոխական դաշնակցութիւն, այսինքն յեղափոխական մի որոշ Մրազիբ հետապնդող կուսակցութիւն, որ ունի յեղափոխական գործելակերպ: Եւ աստիճանաբար Դաշնակցութիւնը դարձաւ ոչ թէ առհասարակ յեղափոխականների միութիւն, այլ դաշնակցական իմաստով յեղափոխականների կազմակերպութիւն: Հիմա նա նոյն մտածումն ու Մրազիբն ունեցող յեղափոխականների կուս միութիւն է և ոչ թէ նոյն նպատակն ունեցող յեղափոխականների դաշնակցութիւն: Հիմա մեր նպատակներն ունեցող մարդիկ, որ գործակցում են մեզ, դրանով չեն դառնում «դաշնակցական». նրանք անք այսօր համարում ենք գործակիցներ, հասակիրներ, ակախիցներ, օժանդակներ, բայց ոչ կուսակցականներ և մեր կազմակերպութեան անդամներ: Մենք չենք մերժում նրանց գործակցութիւնն ու աջակցութիւնը, բայց նրանց տարբերում ենք մեզանից: Մենք նրանց նոյնպէս յեղափոխական ենք համարում, բայց ոչ դաշնակցական: Նրանց «յեղափոխական» ճանաչելու հետևանքով է, որ մենք ընդունում ենք նրանց գործակցութիւնը և հնար ենք տալիս մեր կազմակերպութեան մէջ և մեր պօռչի տակ հետապնդելու իրենց նպատակները, որ նաև մերն են, բայց մենք նրանց չառում ենք մեզանից և չենք համարում մեր կուսակցութեան անդամ: Այսպիսով ոչ ամենքը, ոչ յեղափոխական են, գրանով իսկ դաշնակցական են և ոչ ամենքը, որ ձգտում են հայ ժողովուրդի ազատագրութեան յեղափոխական ճանապարհով՝ դրանով իսկ մեր

կուսակցութեան անդամ են: Կուսակցութիւնը հիմա գործակցում է այլամիտներէ հետ, բայց չի նոյնանում նրանց հետ իբր նոյն կուսակցութիւն: Գործնական խնդիրները գերազուտ են այսօր, ինչպէս որ էին երէկ, բայց նրանք բնու չեն համարում կուսակցական միակ շարտիր՝ իր անդամներին զօրելու համար: Մէջ ժամանակ մեզ գործակցողը, թէկուզ և չլինէր համախոհ, համարում էր կուսակից, այսօր կուսակից է նա, որ ոչ միայն գործակցում է մեզ այլ և համախոհ է մեզ:

Այս հանդամները մեր կուսակցութիւնը դարձնում է մի կուս միութիւն և մեծապէս նպաստում է նրաները և ուժին և կարգապահութեան: Նա վերացնում է նախօրէն ամէն տարտամութիւն և զբառնում ամէն հարձանք ամէն ներքին քաջայում: Որովհետև գործն ու նպատակը մեծ ազդեակութիւն են մարդկանց միացման համար, բայց աւելի մեծ ու զօրաւոր ազդեակներ են մտածում և նկարագրի նոյնութիւնը: Արանով «գործակիցները» տարբերում են «քնկերները»: Գործակիցները յաւաքին զէպջում հաստատրիմ են նոյն գործին, իսկ «քնկերները» նոյն կուսակցութեան, որ ոչ միայն այդ գործն ունի, այլ և շատ ուրիշ գործեր: Գործերի յաջող կամ անաջող վախճանը կարող է երկարաժեռ կամ կարճատև դարձնել գործակցութիւնը, բայց կուսակցական ընկերների կարող մնում է ամուր և անխորտակելի թէ լաւ, թէ վատ օրերին: Ու թէ է մեր կուսակցութիւնն այլ ևս չի կոչուում «Հայ յեղափոխականների դաշնակցութիւն», բայց նա մնում է և պէտք է մնայ իբր «յեղափոխական Դաշնակցութիւն»: Մարդկանց միջև հիմա ընտանք կնք անում, բայց գործի բնոյթը պահում ենք նոյնը: Դաշնակցութիւնը հիմա այլապես յեղափոխականների միութիւն չէ, այլ նոյնամիտ ու նոյնատիպ յեղափոխականների ընկերութիւն: Եւջալը հիմա մենք դնում ենք «յեղափոխական» բառի վրա, որ մեզ համար ուրոյն բովանդակութիւն ունի և բովանդակ կուսակցութեան բնոյթն ենք ուզում շեշտած լինել աւելի, քան նրա անդամների բնոյթը: Մենք հիմա տարբեր տիպար ենք և տարբեր մտայնութիւն յեղափոխականների շրջանում, առաջ միայն յեղափոխական էինք ոչ յեղափոխական հանրութեան մէջ: Հիմա մենք «դաշնակցական» յեղափոխականների կուսակցութիւն ենք, աւելի լաւ է ասել՝ «քնկերութիւն» ենք, ինչպէս խորին իմաստութեամբ կոչած է հայ ժողովուրդը՝ մեզ անւանելով «քնկերութեան մարդիկ»:

* * *

Մեր կուսակցութիւնը կոչուում է «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն»: Իր հայ բառով նախորշած է մեր կուսակցութեան հիմնական գծերից մի քանիսը: Նա ուրեմն մի հայ կուսակցութիւն է: Այս կարճ բառը ընդարձակ միութեան տեղիք է տալիս:

Լինելով հայ կուսակցութիւն, զրանով իսկ Դաշնակցութիւնը սահմանափակ կուսակցութիւն է: Իր կազմակերպական դաշտը վերջանում է այնտեղ, ուր վերջանում է հայ ժողովուրդը: Նա իր անդամներն անում է հայերի միջև և ամէն տեղ, ուր որ հայեր կան: Պատահաւոր օրեկ այլապի կարող է անդամ

լինել Դաշնակցութեան, բայց կուսակցութեան նպատակը հայ յեղափոխական տիպարների և ձեռքերի կազմակերպութիւնն է և հայ յեղափոխական գործի ղեկավարութիւնը: Նա մի որոշ տեղ ամփոփած կազմակերպութիւն չէ, որովհետև ամփոփ չէ ինքը հայութիւնը: Նա հայութեան մէջն է և նրանից է իր սնունդը ստանում՝ ներթափանց թէ բարոյական, ուստի դնում է հայութեան յետեկց՝ թէ՛ նրան և թէ՛ իրան մենակ չթողնելու համար: Նա կարող է այլազգի կազմակերպութեանց համարիլի ու գործակից լինել, բայց նա ինքն իր մէջ մնում է հայկական և օտար կազմակերպութիւններից դատուում է իբր ուրոյն ազգի կազմակերպութիւն: Իր ժողովրդի ներքս նա գտնուում է միւս կազմակերպութիւններից իր մտածումով, Ծրագրով, Կանոնադրով ու գործնական կրթով, իսկ օտարներից իր ազգային պիտակով՝ ամենից ստալ: Նա որեւ միջազային յեղափոխական կուսակցութեան ազգային հատուած չէ, այլ ինքնուրոյն և անկախ կուսակցութիւն է մի ուրոյն ազգի: Ազգի ուրոյնութիւնը սահման է Դաշնակցութեան, ինչպէս ինքն իր դրոյնութեամբ զօրավոր է ազգի ուրոյնութեան: Ազգի ինքնութեան արտայայտիչներից մէկն է նա: Ինչպէս հայ էկեղեցին հայութեան ուրոյն կազմակերպութիւնն է տիեզերական քրիստոնէութեան, այնպէս էլ Դաշնակցութիւնը հայութեան ուրոյն կազմակերպութիւնն է տիեզերական յեղափոխութեան: Իր հիմքերով տիեզերական Դաշնակցութիւնը է և մնում է ազգային և հայ՝ իր ծաւալման սահմաններով: Համաշխարհային յեղափոխական մտքի հայ գործակալն է Դաշնակցութիւնը հայոց ազգի շրջանում: Համաշխարհային ազատագրական շարժման գործակալն է նա հայութեան մէջ: Իբր մարտի՛ նա օտար չէ մարդկային իրաւական և ընկերային գերագոյն ըմբռնումներին, բայց այդ ըմբռնումները նա ձգտում է իրացնել հայ կենանքի մէջ և հայերի ձեռքով: Արա համար նա համակիր է յեղափոխական շարժմաների ուր և պատահան և աջակից է նրանց, ուր հանուած է իր ձեռքը: Բայց զրանով չի նոյնանում նրանց հետ իր Ծրագրով ու Կանոնադրով, այլ նման է բնոյթով՝ սակայն անձաա իր գործի միջավայրով և անդամներով:

Այս լայն բառի իմաստը ուրոյն բովանդակութիւն է ստացած Հայաստանի անդրապետութեան ստեղծումի ընթացքին և այնուհետև: Մեր Ծրագրերը պահանջում էր երկու լայնօրէն ինքնավար հայ շրջաններ՝ մէկը Խուսաստանում և միւրը Տաճկաստանում: Նա պահանջում էր Կովկասի հայաշատ դաւառները գատել վարչապէս ու դարձնել մի ինքնավար շրջան, իսկ Տաճկաստանի հայաշատ դաւառները գատել վարչապէս ու դարձնել մի ուրիշ ինքնավար շրջան: Կովկասի ինքնավար շրջանը նա պահանջում էր դաշնակցօրէն կապել թաթարական և վրացական ինքնավար շրջանների հետ և իբր մի դաշնակցօրէն կապած վարչական միաւոր՝ դաշնակցական կազմով կցել Խուսաստանին, իսկ Տաճկաստանի հայաբնակ ինքնավար շրջանը անմիջօրէն կապել Տաճկաստանին: Այսպիսով մենք պահանջում էինք ինքնավար երկու շրջան վարչապէս գատ և քաղաքականապէս անանուտ: Մենք ձգտում էինք թէ՛ թիւրքիայում և թէ՛ Խուսաստանում ներքնապէս անկախ լինել մեր գործերի մէջ և արտաքուստ միացած: պե-

տական հանուր գործերը թողնել պետութեան և շրջանի ներքին գործերը վարել մեր ձեռքով: Այս ծրագիրը մերժում էին ամենքը, քանի զեռ ծրագիր էր միայն. այսօր երբ իրացած է, մերժում ենք մենք, նրա յղացողներն ու մշակողներն և պաշտպանում են նրանք, որ երբեմն մերժում էին շարաշար:

Նախորդ Ծրագրով մենք մի ապգային կուսակցութիւն էինք, մեր կազմակերպութեան և պահանջների տեսակէտով, որ գործում էինք տարբեր պետութեանց մէջ: Կուսակցութեան միութեան հիմունքը հայ ժողովուրդի միութիւնն էր, որ ապրում էր անջատ՝ Ռուսաստանում և թիւրքիայում երկու տարբեր իրաւական կարգերի տակ, երկու տարբեր քննարկային և անտեսական պայմանների մէջ, երկու տարբեր ցեղազբաւան միջավայրում: Հայութիւնը մէկ էր իբր ժողովուրդ, բայց գատ էր իբր քաղաքացի. և այս պատճառով Դաշնակցութիւնը մէկ էր իբր հայ կազմակերպութիւն, բայց գատ էր իբր տարբեր երկիրների կուսակցութիւն: Նա թիւրքիայում մէկն էր թիւրքիայի կուսակցութիւններից և Ռուսաստանում մէկը Ռուսաստանի կուսակցութիւններից: Նա մէկ էր իբր հայ դաշնակցութիւն, բայց երկու էր իբր տարբեր պետութեանց քաղաքացին ազգակ: Նրա նպատակը միևնոյն հայ ժողովուրդի քաղաքական և տնտեսական բարեկեցութիւնն էր, բայց երկու տարբեր երկիրներին մէջ: Երկու երկրի մէջ և նա յեղափոխական կուսակցութիւն էր և հետաճում էր միապետական կարգերի վերացման. երկու վայրում և բնական դաշնակիցն էր այն բոլոր կուսակցութեանց ու ճոսանքների, որ նոյն նպատակն ունէին այդ վայրերի մէջ: Այդ է պատճառը, որ նա դործակցում էր ուրիշ յեղափոխական կուսակցութեանց հետ Ռուսաստանում և Երեստարդ թիւրքերի հետ Տաճկաստանում: Որովհետև Դաշնակցութիւնը լինելով մի և անբաժան միասնական թիւրքիայի ներքին քաղաքական ազդակներից մէկն էր, ուստի մասնակցում էր այդ երկրի ներքին յեղափոխական և քաղաքական խնդիրների լուծման. նոյն պահածքն ունէր նա և Ռուսաստանում: Նա յեղափոխական էր թէ՛ Ռուսաստանում, թէ՛ Տաճկաստանում և այդ երկիրների աղաքացի քաղաքացին լինելով՝ նա ոուս հայրենասէր էր Ռուսաստանում և թիւրք հայրենասէր Տաճկաստանում, միշտ մնալով հայ ժողովուրդասէր և իր ապրած պետութեանց ներքին յեղաշրջումը համարելով նախապայման իր պատկանած ժողովուրդը բարեկեցութեան: Նա ձգտում էր հայերին նոյնիրաւ քաղաքացի դարձնել թէ՛ Ռուսաստանում, թէ՛ թիւրքիայում և աշխատում էր այն դադափարը պատւաստել տիրապետող ազգերին, թէ հայրենիքը ոչ միայն իրանց է պատկանում այլ միւս ժողովուրդների հետ նաև հայերին և հետևապէս հայերը ոչ թէ պէտք է հպատակներ նկատուին, այլ նոյնիրաւ քաղաքացիներ: Իրբն Ռուսաստանի իրաւագործի քաղաքացին նա սահմանադրական կարգ էր պահանջում և ներքին լայն ինքնավարութիւն Ռուսաստանի մէջ բուն իսկ ուսապղի իրաւագործի պահպանների հետ միասին. նոյն պահանջները նա դնում էր նաև Տաճկաստանում նոյն հիմունքներով միւս իրաւագործի ազգերի և թիւրք քաղաքացիների հետ միասին: Նա մի կողմից աշխատում էր նոյն իրաւունքներն ապահովել հայ ժողովուրդ-

դին ինչ որ արդէն ունէին ոուսն ու թիւրքը իրենց հայրենիքում, միւս կողմից նա գործակցում էր նրանց նոր իրաւունքներ ձեռք բերելու և նոր կարգեր ստեղծելու ամենէն համար, ուրեմն և իր համար: Նա մասնակցում էր այդ երկիրների թէ շինարարութեան՝ իր աշխատանքով և թէ յեղափոխութեան՝ իր գործերով: Սահմանափակ էր Դաշնակցութիւնը հայ ժողովուրդի ծոցում, բայց անարձակ էր իր գործունէութեան դաշտը: Նա մասնակցում էր Բազուի բանուրական ցոյցերին ու գործադուլներին և Պարսկաստանի ուսանողական շարժումներին, թէև Բազուի ու Պարսկաստանի շին, իսկ ինքը նոյն երկրի իրաւագործ քաղաքացին էր, ուստի հարածում էր հին կարգի ամէն տեղ, որ հանդիպում էր նրան:

Այսպիսով Դաշնակցութիւնը նախորդ շրջանում ոչ այնքան հայրենիքն ունէր նկատի, որքան հայութիւնը: Իր քաղաքական պահանջը ակելի չէր քան յայն ինքնավարութիւն հայրենակ գաւառների: Նա հիմք առնում էր հայ տարրի քնակավայրը ոչ պատմական իմաստով, այլ խտութեան չափով: Բարբախտաբար, հայութիւնը խիտ էր այն գաւառներում, որ երբեմն նրա քաղաքական հայրենիքն էին կարգում: Հայրենիքի գաղափարը նա ստորազատում էր քնակավայրի գաղափարին: Եթէ խտորէն բնորոշենք՝ Դաշնակցութիւնը նախորդ շրջանում յեղափոխական ազգասէր էր և ոչ յեղափոխական հայրենասէր: Գուցէ կային ոմանք, որ կարծում էին թէ լայն ինքնավարութիւնը մի կայան է անկախութեան ճամբին, բայց Դաշնակցութեան զեկավար խաւերի մէջ անջատողական միտումներ չկային: Ռուս միապետական մամուլն էր, որ հայերին վերադրում էր այդ հակումը և հայերն անկեղծութեամբ և խորին վրդովումով մերժում էին այդ մեղադրանքը ոչ թէ քաղաքականութիւն անելով, այլ իրողութիւնը մէջտեղ հանալով: Գուցէ առաջին մտածողները ունէին այդ գաղափարը, բայց նա երբեք լրջօրէն տեղ չէ դրաւած կուսակցութեան իմացութեան մէջ:

Այսպիսով Դաշնակցութիւնը ոչ թէ ազատ հայրենիք ստեղծելու էր հետաճում, այլ բարեկեցիկ հայ ժողովուրդ՝ իր բնավայրում: Ոչ թէ անջատական էր անկախութեան իմաստով, այլ ինքնավարական էր դաշնակցական իմաստով: Ոչ թէ ձգտում էր հայրենակ գաւառները անջատել Ռուսաստանից ու թիւրքիայից և իրար կցելով ստեղծել մի ազատ և անկախ Հայաստան, այլ աշխատում էր հայ ժողովուրդի բնավայրեր գատուել վարչապէս իբր ուրոյն, ներքնապէս ինքնավար շրջաններ, սակայն, կապած այն պետութեան, որի մէջ պատմութիւնը դրած էր հայ ժողովուրդին: Նա ձգտում էր մայրենի լիզով դատ ու դատաստան ունենալ և կրթութիւն, գաւառի ներքին գործերն ինքը վարել և իր կրթում, բայց ձգտում չունէր իր գործն ունենալու, իր պատան ու երկաթուղին և իր դրամը: Սա մի ձգտում էր պահելու ազգն ու ազգայնութիւնը իբր թիւ և կերպարանք՝ պետական օրէնքների բարեփոխ հովանու տակ: Նա ձգտում էր հայերին իրաւունք ապահովելու, որ իբր հայ ապրեն օտար ազգի պետութեան մէջ ոչ թէ նրանց բարեացակամութեան շնորհիւ, այլ պետական օրէնքի երաշխեքով. ոչ թէ հանդուրժ-

լած մի տարր, այլ իբր իրաւաստե և իրաւատէր ազգ: Ուստի նա կուսակից էր դաշնակցորէն կազմւած Ռուսաստանի և Թիւրքիայի, ուր հայաբնակ գաւառները միանաբար՝ իբր ուրոյն վարչական միւտը՝ կազմելու էին այդ պետութեանց բաղադրիչ մասերը: Նրա համար քաղաքական կազմութեան օրինակ էր հանդիսանում Չեխերիան և Աւստրիան. Չեխերիան իբր տիպար Կովկասի համար, ուր տարբեր ազգեր առանց իրենց մշակութային ինքնութիւնը ժխտելու՝ ապրում են մի վարչական կարգի տակ, իսկ Աւստրիան իբր վարչական տարբեր միութեանց միութիւն: Այս լուծումը, որ տեսապէս թւում էր բանական և արդար, կարծում էին թէ լաւագոյն լուծումն է, որ ապահովում է ազգերի ինքնութիւնը և կեր է տալիս պետութեանց միարար քաղաքականութեան: Այս լուծումը պետութեան և պետական ժողովուրդի կամքը սահմանափակում էր համապետական ինդիքներով, իսկ տարբեր ազգերի ինքնապարտութիւնը՝ ներքին ինդիքներով: Այն ամենը, որ համապետական արժէք ու նշանակութիւն ունէր թողնում էր կենտրոնական իշխանութեան, ուր Հայն ունէին նաև տարբեր ազգերն իրենց թիւ համեմատ, իսկ այն ամենը, որ տեղական նշանակութիւն ունէր, թողնում էր տարբեր ազգերին կազմակերպելու և վարելու: Ազգերը հաշտուում էին կլանել մեծ պետութեանց մէջ իբր քաղաքական միաւոր, բայց ձգտում էին չհետևել իրենց ինքնութիւնը իբր վարչական և մշակութային միաւոր: Այս մտածման և ծրագրի հիմունքը այն համոզումն էր, որ Ռուսաստանը բնաւ Կովկասից հեռանալու չէ և չկայ մի ոյժ, որ ստիպէ նրան հեռանալ: Տաճիկն անգոր է, Պարսկաստանը թույլ, Եւրոպան բաժան և տարամերժ, Չինաստանը՝ թմրած, Ճափոնը՝ հեռու, ուստի և անշահագրգիռ:

Մեծ պատերազմը, սակայն, գլխիվայր շրջեց ամէն նախատեսութիւն: Ռուսաստանը հեռացաւ և Կովկասը մնաց մենակ ու ազատ: Մի պահ Դաշնակցութեան Մրազիբը գործադրութեան յարմարութիւն ունեցաւ գոնէ Կովկասի համար: Յեղափոխութեան շրջանին Կովկասը դարձաւ վարչապէս գաւառւած միաւոր, բայց կապւած Ռուսաստանին: Այդ վիճակը դեռ լաւ չորոշւած՝ Կովկասը իբր Կովկաս, մնալով երեք ժողովուրդի միացեալ պետութիւն, բաժանեց Ռուսաստանից: Այն տարբեր, որ սկզբունքով դէմ էին ամէն մի վարչական բաժանման և դաւանում էին մի և նմարման Ռուսաստան — վրաց ընկերվար-ոսմկավարները — առաջինն եղան, որ անջատեցին Վրաստանը Կովկասից՝ հակառակ Դաշնակցութեան կամքին ու ցանկութեան: Դաշնակցութիւնն այսպիսով ստիպւած եղաւ երեսը դարձնելու դէպի հայաբնակ գաւառները, որ արդէն դաւանւած էին նրա ուշադրութիւնը ինքնապաշտպանութեան տեսակէտով: Պատմութիւնն այսպիսով մղեց Դաշնակցութիւնը դէպի հայրենիք և ինքնավար բայց դաշնակցորէն Ռուսաստանին կապւած հայաբնակ գաւառների կուսակիցները դարձան Միացեալ և Անկախ Հայաստանի աշտպաններ: Քաղաքական մտքի այս յեղաշրջումը կատարւեց ազգամիջեան պայքարների և ընդհարումների և հայ թուրքական ուժերի բախման թո՛ւ ու բո՛հի մէջ: Դաշնակցութիւնը քաղաքական տեսակէտով դարձաւ մի բարբոտիկն նոր կուսակցութիւն, մնալով, սակայն, մի

և նոյն: Նա հիմա նոյնպէս ձգտում էր հայ ժողովուրդի բարեկեցութեան, բայց ոչ թէ օտար պետութեանց շրջափոխ մէջ, այլ նրա բուն պատմական հայրենիքում: Ժողովուրդի բարեկեցութիւնը նա այլ ևս չէր կապում Ռուսաստանի և Թիւրքիոյ ներքին բարեփոխութեան, այլ իր հայրենիքի — Հայաստանի ապատութեան հետ: Նա դազում էր այլ ևս Ռուսաստանի և Թիւրքիայի ներքին կուսակցութիւններին մէկը լինելու և գործած մասնակցութիւն ունենալու նրանց ներքին յեղաշրջման մէջ, այլ դառնում էր Հայաստանի գործած ու ղեկավար կուսակցութիւնը, որ ձգտում էր հայաբնակ բոլոր շրջաններն անջատել ու միասին իրար՝ ստեղծելու համար միացեալ և անկախ Հայաստան: Նա որ անջատողական չէր, հիմա դարձաւ անջատման կողմնակից: Նա որ պահանջում էր դաշնակցորէն միացեալ Կովկաս, հիմա դարձաւ ազգայնորէն անջատ և սահմանատաւ Կովկասի կուսակից: Նա, որ գործում էր Ռուսաստանի և Թիւրքիայի բովանդակ տարածութեան վրա այդ պետութեանց անբրաւ կարգերի դէմ՝ ամփոփեց իր գործունէութիւնը Հայաստանի մէջ, դարձ հայութիւնը նկատելով իբր օտանդակ ազգակ հանուր Հայրենիքի: Այսպիսով իր քաղաքական գործունէութեան դաշար նեղացաւ, բայց ստացաւ մի նոր և ցորուն հիմունք: Հայրենիքը: Ոչ թէ հայ ժողովուրդի բարեկեցութիւնն միայն դարձաւ իր նպատակը, այլ «բարեկեցիկ հայն իր պատ և միացեալ հայրենիքում» դարձաւ իր կարգաբար: Սա մի հիմնական փոփոխութիւն էր Դաշնակցութեան Մրազիբի, մտայնութեան ու գործի մէջ, որ դեռ ևս չի ձևակերպւած իբր Մրազբային պատմական տեսաբանութիւն, բայց տաս տարուց աւելի է, որ գործած ոյժ է իրական կեանքի մէջ և իբր ղեկավար սկզբունք ընթացք է առյիւս մեր մտածումին ու գործին:

Իրանով ճշտուում է Դաշնակցութեան վերաբերումը դէպի գաղութներն ու բնիկ հայութիւնը: Առաջ նա հայերի մի կուսակցութիւն էր, որ յեղափոխութեան ճամբով աշխատում էր բարեշրջել այն երկրիների կարգերը, ուր հայութիւն էր ապրում՝ առաւելապէս աշխատելով բարեփոխել հայ սեփազոյն գանձանքերի բարեկեցութիւնը Ռուսաստանում և Թիւրքիայում: «Հայ յեղափոխական դաշնակցութեան» հայ բառի մէջ նա դուռն էր բայց քաղաքական բովանդակութիւնը: Հիմա նա հայ բառի մէջ դուռն է տարբեր քաղաքական բովանդակութիւն: Նա կրկին հայ ժողովուրդի բարեկեցութեան է ձգտում, բայց ոչ թէ քաղաքացիական, այլ քաղաքական. նորից ընկերվար է, բայց ոչ Ռուսաստանի և Թիւրքիայի ընկերվար կեանքն է աշխատում յեղաշրջել, այլ Հայաստանի ընկերվար կեանքը ընկերվար հիմքերի վրա դնել: «Հայաստանն» այսպիսով իբր ուրոյն պահանջ հիմա մտնում է իր քաղաքական Մրազիբի մէջ, որ առաջ չկար: Առաջ պահանջաւոր հայաբնակ գաւառներ էին վարչապէս ինքնավար, հիմա նա ինքնավար շրջաններ է պահանջում քաղաքականապէս ազատ և անկախ: Նա առաջ աշխատում էր հայ տարբեր քաղաքացիական իրաւունքներն ապահովել օտար պետութեանց մէջ և ուզում էր նրանց տիրակից դառնալ, հիմա նա ձգտում է հայերի քաղաքական իրաւունքներն ապահովել նրա բուն հայրենիքում — Հայաստանի մէջ, ուր ձգտում է նրանց միա-

հեծան տէր գարծնել: Իր գործունէութեան շեշտը նա հիմա դնում է ոչ թէ քաղաքացիական, այլ քաղաքական իրաւունքների վրա և Հայաստան է պահանջում, Հայ Ժողովուրդին քաղաքական իրաւունքներ ապահովելու համար: Որովհետև եթէ հայն ունենայ քաղաքական իրաւունք իր հայրենիքի մէջ, այսինքն յինի տէր ու տնօրէն իր կեանքի և հայրենիքի իբր անկախ պետութիւն, այն ժամանակ միմիայն իր կամքից կախած կը լինի իր քաղաքացիական իրաւունքները գծել և իր սնտեսական և ընկերային կեանքը տնօրինել: Նա հիմա չի հրաժարուում իր հին գերից լինել համայն հայութեան իրաւանց պաշտպան ամէն տեղ, ուր ապրում են նրանք. բայց մինչդեռ գաղութներէ մէջ աշխատում է հայերի իրաւունքը ձեռնարկել և ապահովել իբր ուրոյն ազգային գանգաւած՝ մշակութային իմաստով, նա աշխատում է հայ Ժողովուրդին իրաւունքներ ապահովել բուն իսկ իր հայրենիքում՝ քաղաքական իմաստով: Գաղութները այսօր ևս նրա համար օժանդակ ազգակ են բուն հայրենաբնակ հայութեան բարեկեցութեան համար, բայց մինչդեռ առաջ նրանց օգտագործում էր հայութեան ինքնավարական իրաւունքներն ապահովելու, այսօր հրաւիրում է աջակցել նրանց քաղաքական անկախ գոյութեան պայքարին:

Եւ այս ձգտումը օրաուր կայծառանում է դաշնակցականի և նրա շնորհիւ հայ մարդու գիտակցութեան մէջ: Աւելի արդար է և հնարաւոր, որ հայութիւնը քաղաքական իրաւունքներ ունենայ իր հայրենիքի մէջ, քան այն բոլոր վայրերում, ուր ապրում է նա: Աւելի բանական, արդար և իրաւացի է հայութեան պատմական ընտելացրը անջատել ու միացած տալ նրան իբր հայրենիք՝ ուրիշ ազգերի նման և նրանց հաւասար՝ իր քաղաքական կեանքով ապրելու, քան ամէն մի պետութեան մէջ քաղաքացիական իրաւունքներ ապահովել ազգի հատուածներին: Սա մինչև իսկ անհնարին է, թէ գործնապէս, որովհետև դատ հայաբնակ վայրեր չկան օտար պետութեանց մէջ և թէ հոգեբանօրէն, որովհետև ամէն տեղ նա մի հիւր է և ամենուր նա հիւր է գզում իրան: Ամէն տեղ, ուր հայն ապրում է, որքան և լայն քաղաքացիական իրաւունքներ ունենայ, որքան և նոյնիբարև դառնայ ընկի տարբին—նա միշտ հիւր կը նկատուի և հիւր կը զգայ իրան, եթէ շարունակէ իբր հայ ապրել իր ուրոյն մշակութային կեանքով ու լեզուով: Եւ այն օրը նա կարող է երկրի տէրերից մէկը նկատուել և քաղաքական իրաւունքներ ունենալ, երբ հրաժարի իր ուրոյն ազգայնութիւնից, մշակոյթից ու լեզուից և դառ-

նայ բուրդար Բուլղարիայի մէջ, արար՝ Սուրիա և Եգիպտոս, յոյն՝ Յունաստանում և այլն: Արդ՝ հայութիւնն իրաւունք ունի ապրելու իբր ուրոյն ազգ իր ուրոյն կերպարանքով: Նոյն իրաւունքն ունին և այն մեծ ազգերը, որոնց հայրենիքի հովանու տակ ապրում են հայերը: Նրանք իրաւամբ իրանց տէր են համարում իրենց հայրենիքի և չեն կարող իրենց դարաւոր կեանքի սարգ ու կարգը փոխել հայ գանգաւածների ազգային պահանջներին յարմարելու համար: Լուսազոյն դէպքում նրանք կարող են հանդուրժել, որ նրանց մօտ ու նրանց պետութեան մէջ հայերն ապրեն իբր ուրոյն համայնք իրենց մշակութային կերպարանքը պահելով. բայց մեկ համարել իրանցից մէկը, իրանց հաւասար իրաւունքներ ունեցող իրենց հայրենիքի վրա — սա անհնարին է հոգեբանօրէն և անիրաւացի իրաւօրէն: Քաղաքացական լրիւ իրաւունքներ ամէն ազգ միմիայն իր հայրենիքում կարող է վայելել, այսինքն այն երկրի մէջ, որ իրն է միայն և ուրիշ ոչ ոքի չի պատկանում: Որքան և հիւրինկալը բարեկամ լինի՝ հիւրն իրան ազատ կարող է զգալ միայն իր տան մէջ: Ոչ ոք կարող է ազատ զգալ իրան օտար երկրի մէջ: Ամէն ազգ պետք է իր քաղաքական հայրենիքն ունենայ: Այս հաստատուն եզրակացութեան եկած է Դաշնակցութիւնը անցնելով ծանր փորձութեանց միջից և այս գիտակցութիւնը պէտք է խորանայ հայութեան մէջ, որ պահանջն զգայ սեփական տուն ու հայրենիք ստեղծելու: Այսպէս ուրեմն, մի ժամանակ իր անունին «հայ» բառը կցելով՝ Դաշնակցութիւնը «հայոց ազգ» էր հասկանում և նրա բարեկեցութիւնը՝ Ռուսաստանում և Տաճկաստանում. այսօր էրբ ասում է հայ՝ հասկանում է ազատ հայութիւն միացեալ և անկախ Հայաստանի մէջ: Դաշնակցութիւնը հայ կուսակցութիւն է ոչ միայն նրա համար, որ հայ են իր անդամները, գործում է հայութեան մէջ և հայ գանգաւածի բարեկեցութեան է հետամուտ, ուր էլ որ լինեն, այլ հայ է, որովհետև ձգտում է ազատ հայութիւն ստեղծել ազատ Հայաստանի մէջ: Նա հիմա ոչ թէ ասում է «ազգ», այլ՝ «ազգ և հայրենիք»: Ոչ թէ բարեկեցիկ ազգ է տիրող ցեղին նոյնիբարև, այլ բարեկեցիկ և բոլոր պետութեանց նոյնիբարև հայրենիք ու ազգ: Ոչ ինքնավար հայութիւն, այլ անկախ հայութիւն, ոչ թէ Հայաբնակ գաւառների գաղտ-գաղտ միութիւն, այլ անջատուած հայրենիքի միացեալ և անկախ գոյութիւն:

Ն. ՀԱՆԳՈՅՑ

(Շարունակելի)

Չ Ո Մ Ը

Չոմ — տարօրինակ բառ թէ՛ իր կազմով և թէ բովանդակութեամբ:

Չոմ՝ նշանակում է Չափահաս Որբերի Միութիւն:

Չափահաս Որբերի Միութիւն... Բայց հէնց այս խօսքը տարօրինակ ու անհասկանալի չէ՞: Ի՞նչ ասել է «չափահաս որբ», ո՞վ կարող է այդ «միութեան» անդամ լինել: Ե՛ն, օրինակի համար, որ և «չափահաս» եմ և «որբ», կարո՞ւղ եմ լինել: Կամ ինձանից ասելի տարիքաւորը կամ երիտասարդը՞...

Եթէ այո՛, այն ժամանակ ի՞նչ իմաստ ունի «միութիւնը»: Եթէ ո՛չ, քերականութեամբ և տրամաբանօրէն մտածող մարդկանց համար կը մնայ բոլորովին անհասկանալի «չափահաս որբ» արտասայտութիւնը: Առհասարակ, անընթացիկ կը դառնայ չափահաս որբերի միութեան հնարաւորութիւնը:

Ինչպէ՞ս թէ «չափահաս որբերի միութիւն»: Միութիւնները կազմակերպւում են ընկերային կամ դադարաւիարական յատկանիշներով. միեւնոյն վիճակն ունեցող կամ նիւթական ու զարդափարական միեւնոյն նպատակներին հետամուտ եղող անհատների համախմբումն է միութիւնը: Իսկ որբութիւնը ո՛չ ընկերային վիճակ է ոչ զարդափարակցութեան կամ շահակցութեան նշան. «որբ» հասկացողութիւնն իր մէջ կրում է բազմապիսի ընկերային տարրեր և այլազան զարդափարական կամ բարոյական ձգտումներ, ինչպէս և ինքը հասարակութիւնը, որին պատկանում է որբը: Չափահաս որբերի միութիւն՝ տրամաբանօրէն նոյնն է, ինչ որ, օրինակի համար, «հօրաքոյր չունեցողների միութիւն», այսինքն՝ տրամաբանական անհեթեթութիւն:

Բայց և այնպէս «Չափահաս Որբերի Միութեան» գոյութիւնը փաստ է: Փաստ է և այն, որ Չոմ բառը, իբրև արտասայտութիւն, կամաց-կամաց ջարդաքայտական իրաւունքներ է ստանում «այնքին լեզուի մէջ: Ի՞նչո՞վ բացատրել այս. կամ՝ տրամաբանութիւնն է սխալուում, կամ՝ մեր կեանքը ունի իր առանձին տրամաբանութիւնը: Ճիշտը, անկասկած, վերջինն է. մեր կեանքում ի՞նչն է տրամաբանական, որ այս խնդրում պարտաւորւած լինենք հաշի առնելու նրա օրէնքները: Տրամաբանական է, որ Հայաստանը մեայ դատարկ, իսկ հայ ժողովուրդը մի կտոր հող չունենայ իր գլուխը դնելու համար:

Այո՛, Չոմը փաստ է: Բայց սխալւած կը լինենք, եթէ նրա իմաստը հասկանանք բաւական նեղ ստույժով, այսինքն՝ գուտ որբերի կազմակերպութիւն: Զեականօրէն, այո՛, Չոմ նշանակում է չափահաս որբերի միութիւն, իրապէս՝ նրա սահմանները շատ անելի լայն են: Չոմ՝ նշանակում է դադութահայ նոր սերունդը. այն սերունդը, որ առաջ եկաւ պատերազմի ընթացքին և

տեղահանութեանց, ջարդաքայտական կռիւների ու արտազաղթի օրերին՝ անհող, անհայրենիք, անօջաղ ու, մեծ մասով, ծնողական դուրգուրանքից դուրկ, հալածական և աշխարհի չորս հովերին տրւած — ծնողագուրկ որբ թէ ծնողատէր՝ միեւնոյնն է: Այս այն սերունդն է, որ հետզհետէ աճում, հասունանում է և դալիս է կեանքի պայքարում փոխարինելու մեզ: Մեր յաջորդն է լինելու նա և, հետևաբար, արժանի է ամենալուրջ և գործվալի ուշադրութեան մեր կողմից: Մենք պարտաւոր ենք ճանաչել նրան, կապւած լինել նրա հետ հողեկան կապերով և մեր կեանքի փորձով՝ օգնել նրան իր զարգացման ճանապարհին:

Ինչպէ՞ս է բնորոշում նոր սերունդը ինքը իրեն: Չոմի պաշտօնաթերթը «Երկունք»-ի մէջ կարդում ենք. «Ձայնիմ, ուր, անհանգիստ, յաւակնոտ, ինքնավստահ, անվախ, վրձաբոտ, կուսգան, բաց վերքի վրա աղ, քաջասպի պէս այրող, քաջասպի պէս կսկծալի, պղպեղի պէս տափ, արագ և անգուր, ինչպէս ելիկորականութիւնը») — ահա Չոմը: Ճիշտ է, այս յատկանիշները տրւած են Չոմի լեզուին, բայց չէ՞ որ լեզուն նկարագրի արտասայտութիւնն է — ոճը՝ մարդն է: Այդ լեզուով կարող է խօսել միայն համապատասխան քնաւորութիւն ունեցողը:

«Պէտք չէ մոռանալ նաև, — աւելացնում է «Երկունք»-ը, որ այս սերունդը լաւ հայիցիլ գիտէ»:

Այս է Չոմի կարծիքը իր մասին, և բնորոշումը, ընդհանուր առմամբ, սխալ չէ, միայն թերի է: Չոմը ունի և ուրիշ յատկութիւններ՝ անելի կարեւոր և անելի աչքի գարնող:

Ամենից առաջ զարգացման ու դաստիարակութեան խնդիրը: Չոմը այս տեսակէտից դժբախտ սերունդ է. շատերը դպրոցի երես անգամ չեն տեսել, ուրիշներ հազիւ կարդալը-բերել են սովորել, և սակաւ բարխաւորները միայն կարողացել են հասնել երկրորդական ու բարձրագոյն ստման բարձունքները: Մեր նոր սերունդի միտքը մնացել է խոպան, քնաւորութիւն՝ անտաշ և մտաւոր հորիզոնը՝ նեղ: Այստեղից են բխում «Երկունք»-ի լիշատ յատկութիւնները. «Ջրալիմ» է, «յաւակնոտ», «հայհոյել» գիտէ, կըթոտ, անհանդուրժող — յատկութիւններ, որ «Երկունք»-ը արժանապարտ է պարծանքով և, կարծես, ուղում է իրէտալականացնել, մինչդեռ նրանք դժբախտութիւն են ո՛չ միայն նոր սերունդի, այլ և բովանդակ ազգի համար: Երիտասարդութիւնը, առհասարակ, «յաւակնոտ» է, ամէն տեղ և բոլոր ժամանակներում էլ լինեցալտասահ է ու «կուսգան», այլպէս նա երիտասարդութիւն չէր

*) «Երկունք», Օրկան Զ. Ե. Ռ. Միութեան, 1929 յունիս Ձ 3, էջ 41: Ընդձումները մերն են. Ս. Վ.:

լինի, բայց զբար չեա միասին նա ունենում է կամ ձգտում է ունենալ և մտաւոր լայն պատրաստութիւն, աշխատում է գինեւէլ գիտական զննքերով, գառնալ մտաւոր առաջնորդը իր հասարակութեան:

Անհատիւմ, այսօրայ մեր սերունդը մտաւոր զարգացումով և ազգային-շարժաբանական պատրաստութեամբ շատ յետ է նախկին սերունդներէ համեմատութեամբ: Ինչպէս անկասկած է և այն, որ մեր մշակութիւնը, պատերազմից յետոյ, շատ է յետ մնացել և յաջորդականութեան ու վերելքի թելը կտրուել է: Մշակութիւն ծաւալումը սուղի է ունենում չորրորդական ուղղութեամբ, լայնքով, բայց ոչ խորքով: ույլ մնացած հները զեւ ստեղծագործում են, նորիւ շար էփէ են պատրաստում փոխարինելու համար հներին: Եւ այս երևոյթը բացատրող պատճառների մէջ յետին տեղը չի գրաւում ներկայ սերնդի մտաւոր զարգացման թերութիւնը:

Մեղադրե՞լ նրան այս թերութեան համար: Ի հարկէ, ո՛չ: Անխղճութիւն կը լինէր մեղադրանքի խօսք ստելը: Ի՞նչ ենք տւել նրան, որ ինչ պահանջներ: Յիշեցէ՛ք ի՞նչ կեանք է ապրել նա և ինչ է նրա այսօրը: Աշխարհիս երեսին շկայ մէկը, որ ապրած լինի մեր նոր սերնդի ապրած գարձօրանքը: Անհայրենիք, անօժաւ, շատերը ծնողազուրկ, գերի կամ տարադիր, թափառական անապատներում կամ ճորտ թիրբական ազարակների մէջ, անօթի, մերկ, բոկոտան, արհամարհանքի և հալածանքի առարկայ ամենքի կողմից — երջանիկները միայն որբանոց ու գլորոց էին ընկնում: Այս սերունդն է աճա մեր նոր սերունդը: Ի՞նչ է վերջած նրան, որ ինչ պահանջի: Եւ հակառակ դրան, նա շայտանք, չիքացաւ, չկորու իսպառ, այլ մնաց մարմնով առողջ և հողով արի: Եւ աճա գալիս է լծուրում ազգային յառաջադիմութեան սայլին: Ինչ որ բերում է իր հետ դրակներ՝ նա ինքն է նաճել, բռունցքով և ստամոնքով է ձեռք բերել. բացասականը՝ վատ մարդիկ և վատ պայմաններն են պատուաստել նրա մէջ:

Իսկ դրական շատ գծեր կան: Ամբից առաջ՝ արտակարգ տոկոսութիւնը: Չարքաշ ու հնարամիտ՝ Չովը ունի երկաթէ կամք, նախաձեռնող է ու գործնական — յատկութիւններ, որոնցով այնքան էլ հարուստ չէին նախորդ սերունդները: Անապատներից և արտաբազմարկից, դաղթականութեան ճամբաներից ու ազարակներից է բերում նա բնաւորութեան այս գծերը, առանց որոնց յետպատերազմեան աշխարհում մարդ հեշտութեամբ կարող է ոտքի տակ գնալ: Ինչ ուզում էք սակ, բայց չէք կարող չընդունել, որ Չովը ոտքի տակ գնալիք սերունդ չէ: Հները ընկճուում են յաճախ, կորցնում են մտքի և հոգու արիւթիւնը, հաւատը — Չովը ամուր է նոր հատուցացող կաղնիի պէս, որ գոտոյ արհամարհանքով է նայում փոթորիկների երեսին: Աւելին. նա փոթորիկ է որոնում, որովհետև փոթորիկներից է սպասում իր իղձերի իրականացումը:

Մի ուրիշ յատկութիւն, որով կեանք է մտել Չովը — մոլեռանդ հայրենասիրութիւնն է և անչէլ հաւատը վերջնական յաղթանակի: Լսեցէ՛ք մեր երիտասարդութեան խօսած ճառերն ու երգած երգերը, կարդացէ՛ք գրածները, անանջ դէքք նրա խօսակցութիւններին. ընտանիքի կամ ընկերների մտերմական շրջա-

նակում — պողպատէ վճռականութիւն է ժայթքում և պարտքի շեշտած գիտակցութիւն հանդէպ հայրենիքի: Կարծես Դանակցութեան առաջին սերնդի գանձն է հնչում նրանց բերանից: Պետտնրի, Արամ Արամեանների, Վաղղէնների, Դուսանների, Մարտիրի, Գէորգ Չուռուշների հոյին է յօտում:

Կարևոր է և մի ուրիշ հանդամանք: Հայրենասիրութիւնը Չովի մէջ վերացական գաղափար չէ, նա ծագում է կեանքից և անձնական կեցութիւնից: Հայրենիքի ողբերգութիւնը մեր երիտասարդ սերնդի մեծ մասի համար նաև անձնական ողբերգութիւն է. հայրենիքի կորուստը նոյնացած է ծնողների, հարգատանքի, մարքենի բոյնի կորստեան հետ: Վերանաճել հայրենիքը՝ նշանակում է յետ ստանալ անձնական կորուստը, վերաշինել սեփական օջախը: Ամէն որբ մի պատէր ունի նաճատակած ծնողից և Չեմ ուխտ իր ծնողի հանդէպ: Հայրենիքի վերանաճումը նաև անհատական ուխտի և ստանձնած պարտականութեան կատարումն է շատերի համար:

Հայրենիքի ու ծնողի կորուստը Չովի հոգու մէջ ատելութեան թոյն է, անսահման վրէժ է լեռնացրել թշնամու նկատմամբ, շատ անգամ տարբարայն, բռուն և անդուսպ վրէժ, որ սահման չի ճանաչում: Այս զգացումը՝ յաճախ չարակցած ու կոյր՝ ազգային-քաղաքական ահազին դործօն է և պատմական մեծ դեր ունի կատարելիք մեր ազատագրական պայքարի մէջ: Նա դեռ նոր է ձևակերպւում և չի կարող չարութիւն մօտիկ ապագայում:

Յետպատերազմական աշխարհում, ուր մարդիկ և հաւաքականութիւններ դարձել են տարապայմանօրէն նեղմիտ ու ետապաշտ, երբ օտարակերութիւնը համարում է ազգային առաքինութիւն և ամէն ժողովուրդ ձգտում է ամփոփել սեփական սահմաններ մէջ, ամէն բան ծառայեցնել սեփական շահին ու սեփական վայելքին և զրկել ու հարստահարել բոլոր նրանց, որոնք գուրկ են հայրենիքից և իշխանութիւնից — տարօրինակ և անբնական շպէտք է թւայ և Չովի յայտնաբերած ետապաշտ սէրը դէպի իր հաւաքականութիւնը. ամէն ինչ հայի համար է և հայից դուրս՝ ամէն բան անարժէք է: Նախկին սերունդներից մերից գաղափարներով էին տողորած, բայց առաջայ սերունդները և ուրիշ պայմաններում էին ապրում: Այժմ մարդը, ակելի քան երբեք, դարձել է դազան. ինքնապահպանութեան կենդանական բնագոյն է տիրապետող ամենքի, հետեւաբար և Չովի մէջ:

Ներսի հանդէպ, սակայն, Չովը այլասէր է: Գուցէ միայն Դանակցութեան առաջին սերունդների մօտ փոխադարձ օգնութեան բնազդը արտայայտուել է այնպէս ինքնարժու և ուժգին, ինչպէս մեր նոր, ակելի ճիշտ է սակ, որ սերնդի մէջ: Ճիշտ է, օգնութիւնը կատարում է ժամանակակից ձևերով, բայց... որբը որբին է օգնական: Եթէ որբութիւնը զաջակցէր իրար, որբը որբին չլինէր նեցուկ, շատ շատերը մինչև այժմ կորած կը լինէին կեանքի ծովում: Այն ինչ, ո՛չ միայն չեն կորել, այլ և որբ զանդաճները հայութեան ամենատոկուն, կենսունակ և յառաջադիմող մասն են կազմում այսօր:

Նոր սերնդէ կենսունակութեան ապացոյց է հնչոց

ինքը Չովը, իրրև կազմակերպութիւն, իր բոլոր ձեռնարկն և արտայայտութիւններով: Մի-երկու տարին բաւական եղաւ, որպէսզի որբարնակ բոլոր երկրներում առաջ դան ամբողջ միութիւններ, որոնք իրենց հակադէմոկրատիկ են ստեղծ մեր կրիստոսադոքտիստական և իսկ տեղ-տեղ և տնտեսական-քաղաքական գոյացացումը: Բարձրագոյն հրատարակութիւններ կենտրոնական «Երկրային»-ից սկսած մինչև որբարնային ու դպրոցական խմորատպաններ, տարբեր խօսքերով ու թախով միևնոյն միտքն են կրկնում — լուսաւորութիւն, կազմակերպութիւն, միութիւն՝ ներքաբերելու համար հայրենիքի ազատութեան վերջ գործին: Աննշան երևոյթ չէ այս:

Այս յօդածի նպատակը Չովի բացասական ու դրական յատկութիւնների համեմատական դնահատութիւն տալը և նրա զարգացման ուղիները դժեւը չէ. կենքը ինքը կը գծէ պէտք եղած ուղիները: Մեր նպատակն էր այս կողմը հրաւիրել հանրային, բայց, մանաւանդ, մեր կուսակցութեան ուշադրութիւնը: Չովից են դուրս գալու վաղը մեր գործի շարունակողները. մենք պարտաւոր ենք մտածել, թէ ո՞ւր մենքն է անցնելու այն դրոշակը, որ այսօր գտնուում է մեր սերնդի ձեռքին: Պարտաւոր ենք ուշադրութեամբ լսել նրա որտե՞ր բարախումներին, աշարջութեամբ հետեւել նրա հոգում կատարող խմորումներին, օգնել նրան իր որոնումներին մէջ: Մանաւանդ որ օգնութեան մեծ կարիք ունի մեր այս սերունդը:

Հէնց, թէկուզ, մտաւոր անունդի հարցը: «Կուսական» լինելն ու «հայհոյել դիտնալը» թուում է թէ բաւական չէ. միայն «ինքնապատահութեամբ» և «անվախութեամբ» էլ անկարելի է գոհանալ: Ժամանակակից կենսաբան ուրիշ պահանջներ էլ է դնում: Ընդարձակ և խորունկ գիտութիւն կայ, որ այսօր հիմքն է կազմում թէ՛ անհատի և թէ՛ ընկերութեան գոյութեան: Գիտութիւնն է որոշում ժողովուրդների բարխտը. զօրաւոր և ապահով է նա, ով գինեւած է արդի գիտութեան գէնքերով: Աւանց գիտութեան շկայ հանրային ու տնտեսական տեսական յատկաբանութիւն, չկայ և անձի ու ժողովրդի ապահովութիւն: Այս չպէտք է մոռանայ Չովը. չպէտք է մոռանան, մանաւանդ, չմական հակառակորդ կենաբանները:

Միայն ընդհանուր գիտութիւնն էլ դեռ բաւական չէ. հասարակական մարդը, իր անձնական նեղ հետաքրքրութիւններից դուրս գտնող հարցերով էլ զբաղող անհատը պէտք ունի և մասնաւոր՝ իր շրջապատի ու գործի վաւարի գիտակցութեան, հասարակական գիտութեան: Հայոց պատմութեան և հայ իրականութեան ծանօթութիւնը, որ նոյնպէս բաւական թոյլ է Չովի մէջ, պէտք է կամով առանձին մտահոգութեան աւարկայ: «Երկունքը» իր իմբապրակտիկ մէջ կուստանում է տալ «որբ» բառի գիտական և հոգեբանական բացատրութիւնը», անհամեմատ աւելի մեծ պահանջ կայ որբերի գանդածին հիմնական նիւթ տալ մեր ազգային միջավայրի մասին և որբերին դաստիարակել ու հասունացնել գիտակից ու պարտասուած հայ քաղաքացիները:

Մեծ դժբախտութիւն է մեր այս սերնդի համար և հայրենի երկրից կտրուած լինելը. Հայաստանի ճանաչման ու զարգացման թուլութիւնը: Մէկը Միւրիայում է մեծացել, միւրը՝ արքայական անապատներում, ուրիշը՝ Յունաստանում կամ Ֆրանսիայում — նրանք Հայաստանի մտապատկերը չունեն. Հայաստանը նրանց համար անձև ու անկերպարանք գաղափար, երազական տեսիլք, որ դեռ շատ ուժեղ է գործուած նրանց հոգիներում: Բայց չպէտք է մոռանալ և ժամանակի քայքայիչ աշխատանքը. այն որ այսօր պայծառ է, հետգհետէ կաղտոտանայ ու կը քնչի: Հայրենասիրութեան բուռն զգացմունքն էլ չի օգնի, եթէ այդ զգացմունքը չամբացի գիտակցութեան շարխով:

Չովի հարցը կարեւոր հարց է: Մենք ո՞չ միայն շտապեցինք ամբողջ նիւթը, այլ և գիտակցօրէն բաց թողինք նրա մասերից շատերը: Կարեւոր է այն էր, որ հանրային ուշադրութիւնը դարձի նրա վրա, և դրա համար այսքանը բաւական է: Անհրաժեշտ է շատ զբաղել մեր նոր սերնդի ներկայով և ապագայով: Անհրաժեշտ է լաւ ճանաչել նրան: Անհրաժեշտ է նպատակել նրա զարգացման ու կատարելագործութեան: Եւ երբեք չմոռանալ, որ այսօրայ գործի վրա եղող սերունդը անընդհատ և արագ մաշուում է, և Չովից պէտք է դուրս ելնեն նրան փոխարինողները:

Ս. ՎՐԱՑԵԱՆ

Խորհրդային իշխանութիւնը եւ թուրանական շարժումը

Տարածած կարծիք է, որ, իբր թէ, խորհրդային իշխանութիւնը հայ ժողովրդին տւեց խաղաղութիւն և ապահովեց նրա ֆիզիքական գոյութիւնը: Առերևոյթս այդպէս էլ թւում է: Սակայն, բաւական է մի քիչ անլի խորը դիտել իրերի դրութիւնը, որպէսզի այս լուստես և թիւր տեսակէտը մէջտեղից վերանայ:

Կասկածից դուրս է, որ հայ ժողովրդի ամենափտանգաւոր ոստիւր եղել է և մնում է թիւրքը, մահաւանդ իր քաղաքական նոր՝ թուրանական ձևակերպումով: Ընդ. Չարեանդի «Միացեալ, Անկախ Թուրանիա» գրքի մէջ բաւական լրիւ կերպով ներկայացւած է այդ նոր թիւրքի դէմքը: Ներկայումս, Յորհրդային Միութեան սահմանների մէջ գիտուող երևոյթները, մէկ անելորդ անգամ ևս շեշտում են թուրանական շարժման ծաւալման հետևանքով առաջացող վտանգաւոր կացութիւնը: Որպէսզի այդ շարժման հետ առնչութիւն ունեցող դէպքերն անլի յտակ լուսարանեն, անհրաժեշտ է մօտից ծանօթանալ նրան և թիւրք-խորհրդային յարաբերութիւններին:

Հիմք ունենալով ընդ. Չարեանդի վերոյիշեալ ուսումնասիրութիւնը, թուրանական շարժումը մեզ ներկայանում է հետևեալ ձևով.—

Համաթուրանականութիւն կոչում է քաղաքական այն ուղղութիւնը, որի նպատակն է Միջերկրական ծովից սկսած մինչև չինական սահմաններն ապրող թուրանական ժողովուրդներին համախմբել ազգային-պետական մէկ դրօշի տակ: Ուշագրաւ է, որ թուրանական գաղափարը ծնունդ է առել ոչ թէ Տաճկաստանում, այլ Ռուսաստանի սահմաններում ապրող թուրք-թաթարական ժողովուրդների ծոցում: Սա բացատրում է նրանով, որ Ռուսաստանում անլի էր զգալի գերիշխող ժողովրդի ազգային ճնշումն ու ձուլող քաղաքականութիւնը: Իրենց կենցաղային — մշակութային առանձնայատկութիւնները և, զլիսաւորապէս, կրօն պաշտպանելու նպատակով, թուրք-թաթար հայրենասէրները ազգային-պաշտպանողական միջոցների են դիմում՝ արթնացնելով մի կողմից իրենց ժողովուրդների մէջ ազգային ոգին և, միև կողմից, իրենց աչքերը յառելով դէպի Պոլիս, ուր նստած էր մահմետական աշխարհի գլուխ՝ խալիֆան:

Ռուսական առաջին՝ 1905թ. յեղափոխութեան շրջանին այդ շարժումը առանձին թափ է առնում. նա աստիճանաբար կրօնական-մշակութային խնդրից ձևափոխում է քաղաքական համաթուրանական յոսանքի գաղափարի: Բայց վերականգնող բնակցիկան շտապ կասեցնում է նրա զարգացումը, և համաթուրանականութեան գաղափարաբանները հարկադրում են ապաստանել Թիւրքիա, Արշուլ-Համիդի մօտ, որ հոգեւոր-

քաղաքական ղեկավար էր համախմբական շարժման և ձգտում խալիֆայական աթոռի շուրջ համախմբել մահմետական ողջ աշխարհը: Այդ է պատճառը, որ թուրանական ազգային ձգտումներն այնքան էլ չէին խրախուսւում նրա կողմից: Իրենք, համաթուրանականութեան սերմնացաններն էլ շատ չէին ոգևորում սուլթանի համախմբական քաղաքականութեամբ: Թուրանական գործիչների միակ նպատակն էր՝ Թիւրքիայի ուշադրութիւնը դարձնել դէպի հիւսիս՝ Ազրբէջանից մինչև Թուրքեստան:

Համիդի անկումից յետոյ, իշխանութեան գլուխ կելող իթթիլատականները, սկզբնական շրջանում, նոյնպէս շտարեցին թուրանական հետանկարներով: Սրանք էլ օթօմանական քաղաքականութիւն վարեցին — երկրի այլատարր ժողովուրդներից ստեղծել մէկ ուժեղ ազգային Տաճկաստան: Մի քաղաքականութիւն, որ, ի հարկէ, չէր կարող զաւթուրանականների հաշին, որոնք ձգտում էին միատարր թիւրք պետութեան վերածել Տաճկաստանը, այն ինչ օթօմանիզմը ուղղում էր այլազգի ժողովուրդների իրաւունքները հաւասարեցնել իշխող թիւրք ժողովրդի իրաւունքին:

Երեսասարդ Թիւրքերի օթօմանիզմը երկար շտեւեց: Բայկանեան պատերազմից յետոյ նրանք խալստ հրաժարւում են այս գաղափարից՝ վերջնականօրէն յարելով թուրանական շարժման: 1912թ. Տաճկաստանում հիմք է դրում Թիւրք Օնաղնիքին, որոնց հետապնդած նպատակն էր՝ «թիւրք ժողովրդի դաստիարակութիւնը, նրա մտաւորական, բնկերային, տնտեսական մակարդակի բարձրացումը, թիւրք լիզի և ցեղի կատարելագործումը»: Այդ օճաղները մինչև այժմս էլ գոյութիւն ունին և դարձել են թուրանական գաղափարը սարածող դորաւոր ազդակներ:

Թիւրքական ուժեր պետութիւն ստեղծելու և թուրանական ծրագիրն ստալ ջրելու տեսակէտից մեծ խոչընդոտ էր հայ ժողովուրդը իր դատով, բարենորոգումների պահանջով և, իբրև հետևանք բարենորոգումների պահանջի, օտար միջամտութիւններով: Այս արգելքը վերացնելը իթթիլատական Թիւրքիայի համար դառնում է հրատապ խնդիր, որը և յաջողւում է կիսովին համաշխարհային պատերազմի ընթացքին՝ Տաճկահայաստանի հայ ազգաբնակչութեան խոշոր մասի տեղահանութեամբ և քնանշումով:

1917թ. փետրւարեան յեղափոխութեան օրերին թուրք-թաթարական ներկայացուցիչները ցոյց են տալիս անշատողական բացայայտ արամադրութիւն, որ արտասայտեց նոյն թիւ մայիսին Մոսկուայում և աշտանը Կապանում կայացած մահմետական համադրումարների մէջ: Հետաքրքրական է, որ, անդրկովկասեան

Թուրքերը ձգտում էին Ռուսաստանից անջատել ոչ թէ պետական անկախ կենսիչ ունենալու նպատակով, այլ Տաճկաստանին միանալու համար : Այս ձգտումն առանձնապէս շեշտեց, երբ 1918թ. տաճկական բանակը սկսեց առաջանալ դէպի Կովկաս : Միայն Դաշնակիցների յաղթանակի հետևանքով էր, որ այդ միացումը դուրս չեկաւ : Թէև զինագլխարկով թուրքական քաղաքականութիւնը զրկեց իր գլխաւոր յենարան — Տաճկաստանից, բայց շուտով Անատոլիայում սկսեց քեմալական ազգային շարժումը, որին և յաջողեց փրկել Տաճկաստանը վերջնական փլուզումից : Քեմալականներն էլ, հաւատարիմ իրենց նախորդների քաղաքականութեան, աճէն միջոց դորձադրեցին խորտակելու համար հայկական դատը և այդպիսով կամուրջ ստեղծելու Տաճկաստանի և Ռուսաստանում ապրող թուրք-թաթարական ժողովուրդների միջև : Բոլշևիկները իրախուսանքով և դորձոն օժանդակութեամբ, Տաճկաստանին, 1920թ. վերջերին յաջողեց վերջ դնել Հայաստանի անկախ գոյութեան, իսկ 1923թ., Լոզանում, թաղել հայկական դատը : Նաև քեմալական յաղթանակի և Թիւրք-խորհրդային փոխյարաբերութիւնների շնորհիւ այսօր թուրքական շարժումը մտել է պատմական նոր փուլի մէջ :

Մուսկալի և Անգորայի փոխյարաբերութիւնները բոլոր ծախքերը ներկայումս բացած կարելի է համարել և այլևս շատ քիչ գաղտնիք է մնում : Այս տեսակէտից խտացւած և արժէքաւոր նիւթ է տրւած կոմունիստ Բ. Բորանի վերջերս Մուսկալում լոյս տեսած ռուսերէն «Հայաստան», միջուկային դիւանագիտութիւն և խորհրդային Միութիւն» երկհատոր սուրբ աշխատութեան մէջ : Գրքի երկրորդ հատորն ամբողջովին նւիրւած է հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ տեղի ունեցած անցքերին և, մասնաւորապէս, Թիւրք-խորհրդային յարաբերութիւններին : Մասնաւոր, ուրեմն, Հայաստանին վերաբերող այս խնդրին՝ էջներով բուռն-էիկ պատմաբանի տւած տեղեկութիւններին :

Արևելեան ժողովուրդների կոմունիստական կազմակերպութիւնների համառուսական երկրորդ համագումարում արտասանւած իր մէկ ճառի մէջ Լենինը այսպէս էր ձևակերպում իրենց քաղաքականութիւնը.—

«Ինքնբարտիւքեան հասկանալի է, որ բանուրութիւնը վերջնականօրէն կարող է յաղթանակել միայն միասնաբար բոլոր առաջաւոր երկրներում . մենք, ռուսներ, սկսում ենք այն գործը, որը յետագային կամրացնէ գերման, ֆրանսական կամ անգլիական բանուրութիւնը . սակայն, մենք տեսնում ենք, որ առանց գաղութային ժողովուրդների և, առաջին հերթին, Արևելքի ժողովուրդների աշխատաւոր զանգածների օժանդակութեան, բանուրութիւնը չի յաղթանակի» :

Իսկ մէկ ուրիշ ատիթիվ, նա գրում է.— «Հնարաւոր է, որ առանձին յայտնի դէպքերում մասնակին հակասի ընդհանուրին (յստիք ազգերի ինֆորմացիան մասին է. Ա. Ա.) . այս դէպքում պէտք է մերժել այն (մասնակիին Ա. Ա.), որովհետև եւրոպական մի քանի խոշոր և խոշորագոյն ժողովուրդների ազատագրու-

թեան շահերը աւելի բարձր են, քան մանր ազգերի ազատագրական շարժման շահերը» :

Լենինի ընդգծած այս ուղիով էլ ընթացաւ բուռն-էիկեան քաղաքականութիւնը :

Համաշխարհային յեղափոխութեան իրականացումը պահանջում է արևմտեան աշխարհակալութեան խորտակում : Եւրոպական և ամերիկեան դրամատիքութեան հարածներու համար անհրաժեշտ է զրկել նրան գաղութներից և Արևելքում ունեցած գերիշխանութիւնից, որ հնարաւոր է գաղութներին և արևելեան ժողովուրդներին ազգային-յեղափոխական սպաքարի ճանապարհով : Այդ պայքարին զուգընթաց կազմակերպւում է արևմտեան երկրների բանուրութիւնը՝ կրպ հաստատելով արևելեան և գաղութային ժողովուրդների հետ : Արևելքում մղւող պայքարի յաջողութեան դէպքում, թուլացած դրամատիքութիւնը չի դիմանայ բանուրութեան յեղափոխական գործին և, այսպիսով, հնարաւոր կը դառնայ սոցիալիզմի կառուցումը խորհրդային Ռուսաստանի նախաձեռնութեամբ և անկախութեամբ :

Հետևաբար, արևելեան հացը կազմում է համաշխարհային յեղափոխութեան և խորհրդային միջուկային քաղաքականութեան անկախաբար : Իսկ խորհրդային Ռուսաստանի քաղաքականութիւնը այն դէպքում միայն յաջողութիւն կունենայ, երբ նրան օգնի Թիւրքիան, յանձն առնելով Արևելքի ազգային-ազատագրական շարժման գաղափարական և քաղաքական ղեկավարութիւնը : Ուստի և անհրաժեշտ է որ Թիւրքիան լինի անկախ և ուժեղ պետութիւն, որի օրինակը կը խրախուսի և կը հրահրի մասնաւորապէս միւս ժողովուրդներին էլ : Եւ քանի որ Թիւրքիայի հզօրացման համար խոչընդոտ է հանդիսանում հայկական հացը, որը ուղղւած է գլխաւորապէս Թիւրքիայի դէմ, ապա, ուրեմն, համաշխարհային յեղափոխութեան շահը պահանջում է միանշա՛մ ընդ միշտ ազատել Թիւրքիան այդ վտանգից՝ զոհաբերելով հայկական «մասնակի» խնդիրը :

Ան և խորհրդային քաղաքականութեան ամբողջ ուղղվածությունը :

Բոլոր ճնշւած ժողովուրդների ինքնորոշումը խորհրդային քաղաքականութեան հիմնական մէկ ըսկզբունքն է : Արդ, ի՞նչ մտտեցում են ունեցել բուռնէիկները հայ ժողովրդի ինքնորոշման խնդրին :

Իշխանութեան գլուխ անցնելուն պէս, ազգային գործերի կոմիտար Ստալինը մի յայտարարութեամբ յայտնում է ի գիտութիւն աշխարհի, որ խորհրդային իշխանութիւնը ընդունում է Տաճկահայաստանի ազատ ինքնորոշման իրաւունքը . «Միայն հոկտեմբերեան յեղափոխութիւնն է ի վիճակի վերջնականապէս ազատագրել ճնշւած ժողովուրդներին» . . .

Սկզբունքային այս յայտարարութեան յաջորդում է ժողովուրդական Կոմիտարների խորհրդի Տաճկահայաստանի վերաբերեալ յատուկ հրամանը՝ ստորագրւած Լենինի և նրան Ստալինի կողմից : Հրաման իր մէջ արդէն պարունակում է մի շարք գործնական որոշումներ : «Ժող. Կոմ. խորհուրդը յայտարարում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի զէնդացիա-բանուրական կառավարութիւնը կը պաշտպանի Ռուսաստանի կողմից զրաւած Տաճկահայաստանի ազատ ինքնորոշումը

մինչև կատարեալ անկախութիւն: ... Որոշում է՝
1) Դուրս հանել Տաճկահայաստանից ռուսական զորքերը...»:

Այսպիսով, որպէսզի ազատ ինքնորոշումը լոկ խօսք ըլինի, հէնց առաջին հերթին պէտք է հեռացնել ճօտաք» զորքերը: Այդ քայլը կարևոր էր նաև այն տեսակէտից, որ միւս արևելեան ժողովուրդները Հայաստանի օրինակով Համոզեան, որ, իբրք, Պորսրդային Ռուսաստանը նաևճողական քաղաքականութիւն չի հետապնդում...

Հուր ու բոց տեղալով տաճիկ-գերմանական ջարդարք իմպերիալիզմի դիլիքն, Մոսկուան յանձն է առնում պաշտպանել Տայ ժողովրդի արդար իրուունքները: Մակըն, այդ չի իստեղարում, որ մի քանի ամիս յետոյ նոյն Մոսկուան ստորագրի Բրեստ-Լիտովսկի դաշնագիրը, որի չորրորդ կէտի համաձայն, Ռուսաստանը պարտաւորում է ոչ միայն դատարկել Անատոլիայի արևելեան նահանգները, այլ և յանձնել Թիւրքիային Արդահանի, Ղարսի և Բաթումի շրջանները: Եւ այդ դաշնագիրը խորհրդային կառավարութիւնը ստորագրում է՝ քաջ գիտնալով, որ «գերմանական տաճիկ կռուիցիան, Անդրկովկասի տիրապետելու ծրագրից դուրս, հետապնդում էր նաև մէկ ուրիշ նպատակ՝ Ֆիլիքթայի ոչնչացնել հայութիւնը» (Բորեանի մտտնանշած գիրքը, Բ հատ., էջ՝ 57):

Դաշնակիցների յաղթանակը և դինաւադարին յաջողող քեմալական շարժումը բոլորովին տարբեր հուների մէջ են դնում Թիւրք-խորհրդային յարաբերութիւնները: Բողոքիները առաջ բացում է արևելքի յեղափոխութեան հետանգրներ, որի առաջապահը, նրանց կարծիքով, Հանդիսանում է վերածննդ Թիւրքիան: Այս անգամ էլ խորհրդային իշխանութիւնը դաւադրօրէն տապալում է Հայկական Հարցը: Դաշնակիցներին և, դիլաւորապէս, Անդրիային հարևանելու դիտումով՝ բողոքիները թէ ևս թիկունք են դառնում քեմալական շարժմանը՝ սպանալով ամբողջ մահմետական աշխարհը ոտքի հանել Արևմուտքի դէմ:

1919թ. սկսում են բանակցութիւններ Գեմալի և խորհրդային կառավարութեան միջև: Իսկ նոյն թւ.՝ Մազի ժողովում, ուր հաստատում է Ազգային Ուխտը և Հայաստանի դէմ բանաձև անցնում, մասնակցում է նաև Մոսկուայի ներկայացուցիչը: 1920թ. ամառը (ըստ Բորեանի, էջ՝ 302) սկսում են Անգորայի և Մոսկուայի միջև դաշինք կնքելու բանակցութիւնները: 1920թ. օգոստոս 15-ին Բազում, Երրորդ Միջազգային Նիսիանոսութեամբ, զումարում է Արևելքի ժողովուրդների համագումար, որին, ի միջի այլոց, մասնակցում է և էնվեր փաշան... Թիւրք աշխատաւորութեան կողմից:

Այդ բանակցութիւնները և համագումարի անմիջական հետևանքով, նոյն թիկ սեպտեմբեր 28-ին, Թիւրքական արևելեան բանակը սկսեց իր յարձակումները Հայաստանի Հանրապետութեան դէմ: Յանուն Արևելքի յեղափոխութեան, Պորսրդ. Ռուսաստանը համաձայնեց իր ուժի մէջ թողնել Բրեստ-Լիտովսկի Թիւրքիային վերաբերող չորրորդ կէտը: Եւ Թիւրքը դինու ուժով զբաւեց իրեն շնորհած այդ իրուունքը:

Թիւրք-հայկական պատերազմի ընթացքին, Ռուսաստանը

աստանն էլ, Պորսրդ. Ազրբէջանի դժով, յարձակեց Հայաստանի Հանրապետութեան վրա, և 1920թ. դեկտեմբեր 2-ին պարտւած Հայաստանը զարձաւ խորհրդային:

Հայաստանի խորհրդայնացումն անհրաժեշտ էր բողոքիներին մի քանի առաջադրումներով: Նախ, Հայաստանն աշխարհազրկան դիրքով սահմանակից երկրներին և Պարսկաստանին, և նրա օրինակին կարող էին հետևել և պարսիկ ու Թիւրք աշխատաւորները՝ խորհրդայնացնելով նաև իրենց երկրները: Երկրորդ, Թիւրքիայի համոզումն այն էր, որ հայկական Հարցը հրահրողներն ու պաշտպանողներն Անդրկովկասի հայերն էին: Եւ որպէսզի հայկական Հարցը վերջնականապէս լուծւի, անհրաժեշտ էր՝ «անդրկովկասեան հայերին կապել ռուսական իրականութեանը և միանգամ ընդմիշտ նրանց ուշադրութիւնը հեռացնել Տաճկահայաստանից և աջոյտիով ազատել Թիւրքերին հայկական Հարցից և հայկական վտանգից» (Բորեան, էջ՝ 283): Եւ երրորդ, հատեցնել Թիւրքերին ու հայերին և կապելով բարեկամական դաշինքով, նրանց ուշադրութիւնը Տաճկահայաստանի Հարցից դարձնել դէպի Եւրոպական և ամերիկեան աշխարհակալութեան: «Հաշտութիւնը» կայացաւ 1921թ. հոկտեմբեր 13-ին Ղարսում: Խօսքը այդ մասին տանք բողոքի Բորեանին. — «Հաշտութեան այդ դաշինքը կոչւում է՝ «Ղարսի բարեկամական դաշինք»: «Բարեկամական դաշինք» թէ ըստ էութեան և թէ ըստ ձևի քաղաքական տեսակէտից չէր ներկայացնում իրենից միջազգային իրաւունքի մի ինքնուրույն գործողութիւն, այլ կրկնում և հաստատում էր 1921թ. հարաւ 16-ին Մոսկուայում Պորսրդային Ռուսաստանի և Տաճկաստանի միջև կնքւած դաշինքը:

«Բացի այդ, դրանով (Ղարսի դաշնագրով, Ա. Ա.) Ռուսաստանը իրագործում է այն պարտաւորութիւնները, որ ստանձնել էր յիշած դաշնագրի (Մաւկաւյի, Ա. Ա.) հետևեալ՝ 15րդ յօդւածով. «Ռուսաստանը պարտաւորում է անդրկովկասեան հանրապետութիւնների նկատմամբ առնել քայլեր, որպէսզի այդ հանրապետութիւնները Թիւրքիայի հետ կնքելիք դաշնագրերի մէջ ճանաչեն ներկայ դաշնագրի իրենց վերաբերող յօդւածները»: «Թիւրքիան աւելի հեռուներն է գնում՝ «Թիւրքիայի և Պորսրդային Հայաստանի ու Պորսրդային Ազրբէջանի կառավարութիւնները համաձայնում են (պարզ է, որ Ռուսաստանի և Թիւրքիայի միջև կնքւած դաշնագրի երրորդ յօդւածի ուժով), որ Նախիջևանի շրջանը ինքնավար Նողմաս և կազմում Ազրբէջանի հովանիի տակ»: «Այս յօդւածով Հայաստանը վերջնական պարտութեան է ենթարկւում Թիւրքիայի առաջ»: «Թէև 1921թ. հոկտ. 13-ին Պորսրդային Հայաստանի և Թիւրքիայի միջև Պորսրդ. Ռուսաստանի մասնակցութեամբ կնքւած հաշտութիւն, բայց, ըստ էութեան, այդ Հայաստանի համոզման և ամենախայտաւակ հաշտութիւնն էր» (էջ՝ 300):

* * *

Պաշտպանել հայկական դա՞տը, թէ՛ առաջնորդել Պորսրդ. Ռուսաստանի և համաշխարհային յեղափոխութեան շահերով:

Պորճրդային զինանախաճառները, Արևելքի ազգային-ազատագրական շարժումները համարելով նախադուռ Արևմուտքի սոցիալիստական յեղափոխութեան, հայ դատը ընդունեց զամսակից՝ երևոյթի և ստորադասեց այն ընդհանուր-համաշխարհայինի շահերին: Հայաստանի առաջին Յեղիոմի կոչը ուղղած Տաճկաստանի յեղափոխական կառավարութեան՝ բարեկամաբար լուծելու վիճելի հարցերը, ոչ մի արդիւնք չուհեցաւ, որովհետեւ Թիւրքիան կարականապէս յայտարարեց, թէ թոյլ չի տայ հայերին զգրաւել Թիւրք աշխատուոր զիւրացու հողերը: Յենարան ունենալով Ռուսաստանը՝ Տաճկաստանը թելադրեց իր կամքը և Դարուսմ կնքեց «պատմութեան մէջ շտեմանած մի ծանր դաշնագիր» (Բորևան): Այս դաշնագրով, խորհրդային զինանախաճառներէն ընդունալ զնաց Թիւրքիայի նաճուրկական քաղաքականութեանը, որը, ինչպէս տեսանք, մտադիր չէ կանչ առնել Ախուրեանի ասիերին...

Մինչև այսօր էլ զեմալական Թիւրքիան, օգտագործելով Պորճրդ. Ռուսաստանի բարեկամութիւնը, առանց միջոցների մէջ խողովի ղեկում, հող և պատրաստում ապագայ նոր նաճուսմների համար: Ներկայ Թիւրքիան այլ ևս նախկին աստական-կլերապաշտ երկիրը չէ: Այժմս Թիւրք պետութիւնը զանուսմ է առևտրա-արդիւնարեական բուրժուադիանի ձեռքին, որը մէկ կողմից վերացնում է իր զարգացմանը խանգարող ներքին միջնադարեան կաշկանդումները, միւս կողմից՝ Թիւրքիայից դուրս նորանոր շահերն ու զարգացմանը որոնում: Այս տեսակէտից, Թիւրքիայում իշխող դասակարգի շահերին միանալովս համապատասխանում է թուրանական դաշտաբար:

Հայաստանի նկատմամբ զեմալական Թիւրքիայի բռնած դիրքը ոչնչով չտարբերեց թուրանական դաշտաբարին յարող Երևտասարգ Թիւրքերի քաղաքականութիւնից: «Թիւրք Օճաղների» գործած դերը ոչ մի կասուած չի թողնում, որ թուրանական քարոզը կազմում է նրա ամենօրեան արշաւասանը: Իսկ Թիւրքիայի յեղափոխականութեան այլևս ոչ ոք չի հաւատում, — անդամ բռնեիկները:

Այսպէս, «Պրաւա»-ն, 1928թ. նոյ. 11-ին գրում է՝ «Միժարելի է այլևս խօսել զեմալական բուրժուադիայի յեղափոխականութեան մասին: Քեմալական բուրժուադիան թշնամի է թէ հողային յեղափոխութեան և թէ՛ բանուրների ու զիւրացիներին»:

Իսկ երբ 1927թ. Անգորայում կայացած «Թիւրք Օճաղների» համապումարում Քեմալը յայտարարեց, թէ՛ «Թիւրքիան որպէս պետութիւն խլում է իր քաղաքականութիւնը Թիւրքիան Ռուսաստանի կողմէն» (ուրեմն մինչ այդ խլում չի եղել Ա. Ա.), խորճրդային կառավարութեան պաշտօնաթերթ «Իրվիստիա»-ն 1927թ. մայիս 20-ին գրեց. «այդ դեռ չի նշանակում (Քեմալի յայտարարութիւնը, Ա. Ա.), որ Թիւրքիայում այլևս չեն մնացել համաթիւրքերտներ և համաթուրանականներ: Յայտնի է, որ սպաստուորներ միայն զերեզմանը կուղղի»...

Պորճրդային մամուլի թերահաւատութիւնը միանգամայն իրաւացի է, որովհետեւ թուրանականութիւնից

«կարկը խող» Քեմալի գործակալների աշխատանքը Պորճրդային Միութեան սահմաններում ապրող թուրանական ժողովուրդների մէջ բոլորովին տարբեր բաներ են ապացուցանում:

Այս տեսակէտից շատ հետաքրքրական տեղեկութիւններ հարողից համաթիւրքիական Կոմունիստական Կուսակցութեան կենտր. կոմիտէի փոխանդամ Կարայիւր, որը 1927թ. մասնաւոր քննիչի պաշտօնով հետազոտել էր խորճրդային թուրք-թաթարական հանրապետութիւնները: Իր տեղեկագիրը տպեց (յօդուածի ձևով) «Պրաւա»-յի 1927թ. դեկտ. 30-ի համարի մէջ:

Արձանագրելով, որ ընդհանուր ամսամբ թուրք-թաթարական երկրներում կոմունիստական բմբուսմները և կազմակերպութիւնները շատ թոյլ են, Կարայիւր մատնանչում է, որ այդ հանրապետութիւնները պետական կենճն ու մշակոյթը ամբողջապէս գտնուած է խորճրդային իշխանութեան անհարգապատ տարրերի ձեռքին: Մի շարք տեղերում, ինչպէս օրինակ, Դաղքաստանում, Երկրի տէրն ու տնօրէնը օսմանեան բանակի նախկին սպաներն են: Կարայիւր գտնում է, որ «Թուրք-թաթարական հանրապետութիւնների մէջ բանուորական ոգիով դաստիարակութիւնը ոչ միայն հարկ եղած բարձրութեան վրայ չի դրւած, այլ նոյնիսկ զեռակուած էլ չի»:

«Պէտք է խոստովանել, շարունակում է Կարայիւր, որ կղերական բարոյականը և հոգևորականութեան ազդեցութիւնը դեռ ևս տիրապետում են մեր դպրոցներում: Կղերական և մանր քաղքենիական դաշտաբարականութիւնը շատ ամուր բոյն է հիւսել մեր դպրոցների մէջ: Այնտեղ շատ է աչքի գաբնում մանր քաղքենիական ազգային թիթու ազգասիրութիւնը»: «Դադասանի դպրոցների դասաղբերի տերտը լուծում տաճկերէն է, այն ինչ այնտեղ այդ լեզուի միանգամայն խորթ է: Դրա պատճառն այն է, որ Դադասանի կրթական գործավարութեան համար դասաղբեր կազմողները Թիւրք բանակի մնացող սպաները և կամ նոյն Թիւրք զերիներն են: Այդ մարկանց շանքերի շտրճու է, որ ներկայումս Երևտասարգութիւնը դաստիարակում է տաճկերէն լեզուով: Դադասանի մէջ հրատարակող բոլոր ամսադրերը, թերթերը, դասաղբերը և մնացած գրականութիւնը տաճկերէն է»:

«Նոյնը և Ազրբէջանում: Ինչո՞ւ: Որովհետեւ մտաւորականութեան մեծ մասը համաթիւրքական տրամագրութիւններ ունի և մտածում է, թէ տաճիկ լեզու արժատացումով կարելի կը լինի մօտեմալ տաճիկներին և կազմել համաթիւրքական պետութիւն: Նոյն տրամագրութիւններն ունեն նաև Ուղբեկիստանը, Թիւրքմէն-Կիւրդանը և միւս թուրք-թաթարական հանրապետութիւնները»:

«Թաթարիստանի հանրապետութեան ղեկավարներից մէկը՝ Ալլիման Իբրահիմով իր «Թրքաբանական համապումարի արդիւնքները» անուսով գրքի մէջ հետևեալ բնորոշում է տալիս նոր արբուքներին. — «Նոր այլուրեանքների խնդիրը հին է, սուս միապետութեան և Իսլամի պայքարի խնդիր»: Թաթարիստանի մէջ սպագրեւ է կէս միլիոն օրինակ Դուրան:

«Ազրբէջանի դասաղբերից մէկի մէջ գրւած է...

ես թուրք եմ: Իմ հաւատն ու ծագումը ամենից բարձր են:

Մարդ պէտք է իր հայրենիքի ստրուկը լինի, իմ կուրծքը և ես ամբողջովին լցած ենք կրակով: Թուրքը չի կարող հանգիստ նստել իր տան մէջ...»: Կարայիի գիտողութիւններն ընդհանուր ընդթ են կրում՝ վերաբերելով բոլոր թուրք-թաթարական երկիրներին: Սակայն, այս տարի, խորհրդային մամուլը աւելի բացորոշ կերպով մատնանշեց Աղբրէջանում գոտեթիւն ունեցող թերութիւնները: Ահազանգը հնչեցրեց Մոսկան («Կոմսոմոլսկայա Պրաւդա», 1929թ. 11 օգ.), որին ձայնակցեց անդրկովկասեան բովանդակ մամուլը:

Պարզեց, որ Աղբրէջանի կուսակցական և պետական մեքենան վերից վար լեցուն է մուսաւաթական և իթթիհատական տարրերով, որ շտանոնին արգանակալան խմբերի վերածնունտ փորձեր են եղել և «տեղ տեղ արգանակին հարցերում խեղաթիւրել է դասակարգային դիժը», որ նման տրամադրութիւններ ունեցող «Աղբրէջանի Կոմկուսի նախկին ղեկավարութիւնը դիմադրութիւն կազմակերպեց, որը վերածեց պայքարի ընդդէմ անդրերկրային կոմիտէի»: և, ինչպէս ակնարկներէից երևում է, նաև ընդդէմ Համամիութենական Կենտր. Կոմիտէի («Ոորհրդ. Հայաստան», 1929թ. 15 և 20 օգ.):

Որհրդ. Աղբրէջանի ղեկավարութեան ընկերային-քաղաքական և կենցաղային վիճակը մերկացնող բազմաթիւ օրինակներից առանձնապէս աչքի են գարնում կուսակցութեան կենտր. կոմիտէի քարտուղար Իւսուֆ Գարամովը և փոստ-հեռագրային կոմիտար Իլդրիմը: Երկուսն էլ Աղբրէջանի մուսաւաթ կառավարութեան օրով իրենց սխրագործութիւններով յայտնի դարձած մուսաւաթականներ են և նոյն մուսաւաթական ոգով մտած Կոմունիստական կուսակցութեան շարքերը ինք տարի ղեկավարել են Հայաստանի սահմանակից երկրի պետական կենտր.:

Մոսկայի և Ղարսի դաշնագրերով նոյն Աղբրէջանին կցած նախկարյուսն էր, ուր 1925թ. Բիկովն անձամբ քննութիւն կատարելով՝ փոխեց ամբողջ կառավարական-վարչական կազմը, որի մեծ մասը ենթարկւեց դատի կամ աքսորեց: Պարզեց, որ կառավարութեան մէջ նստած են Գեմալի գործակալներ և մուսաւաթականներ:

Սակայն, թուրք-թաթարական երկրներում երևան հանած իրադարձութիւնների գլուխ գործոցը կազմում է «սուլթան-գալիւտեթիւնը», որի մասին մանրամասն անդեկութիւններ է հաղորդում Կոմունիստական կուսակցութեան կենտրոնաթերթ «Պրաւդա»-ն իր 1929թ. նոյ. 4 թիւ մէջ:

Սուլթան-գալիւտեթիւնը է յայտնի թաթար բուլեղիկ: Դեռ 1920 թիւն, համաձայն չլինելով կուսակցութեան վարած արգանակի քաղաքականութեան հետ, նա կապ է հաստատում բաշկիր և թաթար արգանակներին հետ՝ միատեմանակ իր շուրջ համախմբելով արգանակի տրամադրութիւններ ունեցող բուլեղիկներին: 1923ին բացայայտ պայքար է սկսում կուսակցութեան արգանակի քաղաքականութեան դէմ՝ յարաբերութեան մէջ մտնելով Որհրդային Արևելքի և արտասահմանեան տարազիր բուրժուա-արգանակաւան տարրերի հետ: Նոյն թիւն նա

արտաքուսում է կուսակցութեան շարքերից: 1929թ. Սուլթան-գալիւտեթի կուսակցիցները, նրա ղեկավարութեամբ «ձևակերպուում են, որպէս համարաւորակաւ հակալեզափոխակաւ գաղափարաբանութիւն» (ընդգծումը «Պրաւդա»-ինն է):

Կուսակցութեան շարքերից արտաքուսումը յետոյ, Սուլթան-գալիւտեթի աւելի գործոն պայքար է սկսում խորհրդային վարչաձևի դէմ: Առաջին հերթին, իր կողմը դրաւելով կուսակցական և անկուսակցական բոլոր դժգոհ տարրերին, նա մշակում է իրենց ծրագիրն ու գործելակերպը:

Ծրագիրը պահանջում է նախ և առաջ արևելեան հանրապետութիւններն ու շրջանները ապաստարել խորհրդային տիրապետութիւնից: «Նախկին Ռուսաստանը, աւաւած է ծրագրի մէջ, վերականգնած Որհրդային Միութիւն անւան տակ, երկարատև լինել չի կարող: Նա անցողակի է և ժամանակաւոր: Ռուս ժողովրդի գերիշխանութեանը միւս ժողովուրդների վրա փոխարինի վերջիններիս դիկտատուրան ուսաների վրա»: Ծրագիրը համաձայն չի բուլեղիկների այն տեսակէտին, որ, եթէ բանտարկութիւնը Եւրոպայում տիրապետի, դրանից ճնշւած մարդկութեան ընկերային կենտրոնաւաններն քարտուղարութիւնը կուսակցութիւնը բարեկեցիկ վիճակ կունենայ միայն այն դէպքում, երբ կը յաջողի «գաղութներին և կիսազաղութներին իրենց տիրապետութիւնը հաստատել մայր-երկրի վրա»:

Որհրդային Արևելքի հանրապետութիւնները և շրջանները՝ խորհրդային ձևը, ըստ սուլթան-գալիւտեթի կենտր. պէտք է փոխարինել «թուրանական պետութեամբ»: Թուրանական պետութեան հիմնական կորիզը կազմելու են՝ Թաթարաստանը, Բաշկիրիան, Ղազախաստանը, Ուզբեկստանը, Տաճիկիստանը, Թուրքմենիստանը և ուրիշ երկրները: Թուրանական պետութեան ընդունելու է արգանակ-ժողովրդավարական հանրապետութեան ձև:

Սուլթան-գալիւտեթի կենտր. մտածում են նոր կուսակցութիւն հիմնել: Այդ նպատակով նրանք «հաստատարակէս կապում են բանտարական ընդդիմադիրների, տրոյկիստների, վրաց անկախողականների և Ղրիմի, Բաշկիրիստանի և Աղբրէջանի արգանակ տրամադրութիւններ յայտնաբերող կոմունիստներին հետ»: Բացի այդ, Որհրդային Միութեան մի շարք վարչերում (Մոսկա, Ղրիմ, Կազան և այլն), խմբակներ են կազմակերպում, խորհրդակցութիւններ սարքում և փորձում են կենտրոն ստեղծել, որպէսզի 1929թ. ընթացքում գումարեն գաղափարի խորհրդաժողով:

«Սակայն, միայն դրանով չի սահմանափակում սուլթան-գալիւտեթի կենտր. ծրագիրը, գրում է «Պրաւդա»-ն: Սուլթան-գալիւտեթի կենտր. շախատել են երևալ և միջազգային բեմի վրա: Նրանց ծրագիրն առաջադրում է ստեղծել «գաղութներին ինտերնացիոնալ»: Եթէ ի նկատի առնենք, որ սուլթան-գալիւտեթի կենտր. փորձեր են արել կապել Կոմիտէի հետ (Չինաստանի արգանակ կուսակցութիւն, Ա. Ա.) և բացայայտ համակրում են քեմալականութեան, այսպէս հասկանալի կը լինի «գաղութային ինտերնացիոնալ» բուրժուա-արգանակաւան բնոյթը»:

* * *

Յօղաձծի առաջին մասում դիտմամբ երկար կանոն առկնք թուրանական շարժման և խորհրդային արևելյան քաղաքականութեան վրայ, որպէսզի մի աւելորդ անգամ ևս յայտնի դառնայ, թէ ինչպէս է այդ մեքենայութիւններին զոհ դնացել հայ ժողովուրդը և հայկական դատը և, յիտոյ, աւելի ցայտուն երևայ այն կապը, որ դոյութիւն ունի այդ քաղաքականութեան և ներկայ իրադարձութիւնների միջև:

Համեմատութիւնը ցոյց է տալիս, որ թուրանական շարժման նպատակը, ինչպէս անցեալում, այնպէս և այսօր, թէ Տաճկաստանում և թէ խորհրդային երկիրներում, մէկ նպատակ է հետապնդում՝ ստեղծել թուրանական պետութիւն, որի մաս են կազմելու Միջերկրական ծովից մինչև չինական սահմաններն ապրող բոլոր թուրանական ժողովուրդները: Թուրանական շարժման թէ սկզբնական շրջանի գաղափարաստները, թէ «Թիրք Օջաղներ» ղեկավարները և թէ խորհրդային երկրների դրոժիշները, այդ նպատակին հասնելու համար, լքելի նոյնացման խնդիր են առաջադրում և իրենց գաղափարները տարածելու և թուրանական ժողովուրդների մէջ կայս ամբացնելու համար դիմում են դեղաբուստական դրականութեան: Եւ, վերջապէս, եթէ այդ աշխատանքը կատարուի է օտմանեան բանակի սպանել միջոցով և թուրանական գաղափարն արծարծող խորհրդային դրոժիշները «համակրանք են տածում քեմալականների հանդէպ», ապա պարզ է, որ, ինչպէս անցեալում, ներկայումս ևլ թուրանականները իրենց յոյսերը կապել են Տաճկաստանի հետ:

Երկրորդ. — «Աւելիան-գալիեականութիւնը» և Արևելքի քաղաքական կացութիւնը գալիս են հաստատելու, որ խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականութիւնը միանգամայն սնանկ դուրս եկաւ: «Համաշխարհային յեղափոխութեան նախադուտ» Արևելքի ազգային-ազատագրական շարժումը բոլրէկիկների երազած ուղիով չընթացաւ: Ձիւնաստանը և Տաճկաստանը սիրով ընդունեցին խորհրդային դրամն ու դիւանագիտական ու նիւթական արկղերը: Սակայն, երբ այդ երկրներում ազգային իշխանութիւն հաստատուեց, կարծիր վտանգից սարսափած ազգային բուրժուազիան ոչ թէ խորհրդայինացման ուղիով դնաց, այլ ձեռք պարզեց արևմտեան դրամատէրերին: Այսօր, բոլրէկիկների օժանդակութեամբ յաջողութեան հասած չինական ազգային կոտալարութիւնը դատական պատերազմի մէջ է Պորթուգ. Ռուսաստանի հետ: Իսկ քեմալական Տաճկաստանը, որն իր գոյութեամբ ամենից շատ բոլրէկիկներին է պարտական, ոչ միայն չղեկավարեց սիւրիացիների ու մարօկցիների ապստամբութիւնները, այլ և հարթեց իր վէճերը աշխարհակալ Անգլիայի և Ֆրանսայի հետ՝ գրելով Մուսուլի և Սիւրիայի սահմանային խնդիրներում: Ոչ մէկ երաշխիք չկայ, թէ վաղը Տաճկաստանն էլ չի կարող հետեւել Ձիւնաս-

տանի օրինակին... Այնպէս որ «պատմութեան մէջ շտեմուած» Գարսի անարգար դաշնագիրը ոչնչով չարդարացրեց Մոսկուայի յոյսերը և այսօր իր դէմ ունի մի աշխարհակալ Թիւրքիա՝ դէպի հիւսիս յառած ալքերով:

Երրորդ. — «Աւելիան-գալիեականութիւնը» գալիս է ստելու, որ ազգային ողով համակած թուրք-թաթար-վրացի կոմունիստները խորհրդային իշխանութեան ղեկադրակելու նպատակով փորձեր են անում միանալու, մի բան, որ վաղուց յայտնի էր մեզ: Այդ ժողովուրդները արտասահմանեան տարագրութիւնը նոյնպէս միացած է («Պրոմէթէ»): Թէ դրսի տարագիրները և թէ ներսի կոմունիստները խորհրդային վարչաձևը տապալելու միջոցները մէկը համարում են Տաճկաստանի օժանդակութիւնը: Անգամ վրաց մենչելիկները նոյն գործելակերպին են հետևում (1927 թ. Ժորձանիայի և Ն. Ռամիչիւրու հրահանգ-նամակները կարգեաձէին):

Չորրորդ. — Թուրանական ծրագիրը իրականութիւն է թէ ցնորք, մեղ համար այնքան էլ կարևոր է: Իրողութիւնն այն է, որ նման ձգտում գոյութիւն ունի և այդ ձգտումն իսկ մահացու վտանգ է հայ ժողովրդի համար: Մանաւանդ, որ այդ վտանգին դիմադրուող նախկին Ռուսաստանն այլևս գոյութիւն չունի: Ընդհանրապէս, այսօրայ Ռուսաստանը իր կոյր և սին քաղաքականութեամբ անդիտակցօրէն շուր է լեցնում այդ շարժման անիւին՝ մահացու հարածներ հացնելով Հայաստանին և հայութեան:

Շատ ճիշտ է նկատում Ջարեանդի գրքի ուսուերէն հրատարակութեան յառաջարանի մէջ յայտնի արևելագէտ Ա. Մանդէլշտեյնը, թէ՛ այսօր դերերը փոխել են: Եթէ մինչև յեղափոխութիւն (1917 թ.) Ռուսաստանն էր հանդիսանում քրիստոնեայ ժողովուրդների ազատարար տաճկական լոժից, ներկայումս, Ռուսաստանի տիրապետութեան տակ ապրող մահմետական ժողովուրդների ազատարար դերը ստանձնել է Տաճկաստանը:

Կասկածից դուրս է, որ այս բոլոր վերիվայրումներն անպայման ճակատադրօրէն կանդորադառնան հայ ժողովրդի վիճակի վրայ: Հայաստանի խորհրդայինացման Գրդ տարեդարձին մութ ամպեր են կուտակուում հայ ժողովրդի գլխին: Պէտք է գիտնանք, որ ո՛չ դրսից կարող ենք օգնութիւն յուսալ, ո՛չ հետեւել մեր դրացիների գործելակերպին և ոչ էլ մեր կոմունիստներն են պաշտպանում մեզ:

Ուրեմն ի՞նչ անել:

Այս հարցի պատասխանը տւել է «Իրօշակ»-ի նախորդ թւի խմբագրականը՝ «Ինչպէս միշտ, այս անգամ էլ հայ ժողովուրդը ինքը պէտք է տեսնի իր գլխի նաքը, ինքը պէտք է փնտրէ իր փիկութիւնը: Ուրիշ էլք չկայ»...

ԱՇՈՏ-ԱՐՄՈՒՆԻ

Յ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆԵՆ

ՍԵՒ-ՔԱՐԵՑԻ ՍԱՔՕԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

«Դրօշակ»-ի ներկայ համարից սկսում ենք հրատարակել Սեֆարեցի Սաֆօի ինքնակենսագրութիւնը: Սաֆօն Գուճաճի, Անդրանիկի, Մարտտի կարողութիւններով օժտւած իմրարայեաններից էր. Գոշնակցութեան մէջ նա աշխատել է սկսած հէկց առաջին օրերից, որով նրա յաշտերը վերին աստիճանի քանգագին նիւթ են թէ յեղափոխական սերնդի դաստիարակութեան և թէ պատմական տեսակետից: Ափսոս միայն, որ մեք ձեռքի տակ գտնող ձեռագիրը հասնում է լոկ միևնչև իննսական քուականների վերջերը, այն ինչ Սաֆօի մարտական կեանքի ամենափոքրիկ շրջանը, դրանից յետոյ է տեղի ունեցել. հայ յեղափոխութեան ամենից անլի շքեղ էջերը յետոյ են հիւսել: Գրե՛լ է Սաֆօն և այս վերջին շրջանի յաշտերը, — մեզ յայտնի չէ:

Սաֆօի գրածքի մէջ մենք կատարում ենք միայն քերականական ուղղումներ և շատ չնչին ռեակցիոն յարդարումներ: Դեռում ենք նաև որոշ ծանօթութիւններ գործող անձերի մասին: Դժբախտաբար, մի քանի անուններ ու ծածկանուններ մեզ համար էլ մնում են անյայտ. որքա՛ն երախտապարտ պիտի իննենք, եթէ իրագիկ մարդիկ տան մեզ պակասած տեղեկութիւնները: Աւելորդ ենք համարում խօսք անել Սաֆօի գրութեան ձևի ու ոճի մասին. պարզ, անքեղեք, մանկական գրոյցի պէս վնաս — նա ուղղակի հմայում է բնութեցողին, անխառն վայելի է տալիս նրա սրտին ու մտքին: Սաֆօի ոճը հէկց ինքը Սաֆօն է:

ԽՄԲ.

Ես ծնւել եմ 1870 թ. յունւար 14-ին, Ղազախ գաւառի Սե Գար գիւղում:

12 տարեկան էի, ապրում էի գիւղում: Շատ էի ուզում կարգաւորել սովորել, բայց գիւղում ուսումնարան չկար: Մեր հարեանի երկխեղը կարգում էին գիւղում, տիրացուի մօտ: Իմ հայրը ինձ համար մէկ այրբէնարան առաւ, որ ես էլ սովորեմ: Ես զգնացի տիրացուի մօտ. աւելի լաւ համարեցի գիւղի դուքանչու մօտ համ կարգաւոր սովորել, Կամ առևտուր, որպէսզի ապագայում գիւղում դուքանչի դառնամ: Մնացի երեք տարի, բացի այդ ու բէնից է՛լ ուրիշ բան չէի սովորում. միայն կախիլի ժամանակ խուրջիւր ուսուցչած դուքանի ապառիկներն էի ժողովում՝ գարի կամ ցորեն:

Երբ տեսայ որ բան չեմ դառնալու, զնացի Ղազախ քաղաք, ձրի մտայ մէկ վաճառականի մօտ, որպէսզի լաւ կարգաւորել սովորեմ: Մնացի երկու տարի, էի

բան շտվորեցի: Դուրս եկայ այդտեղից, զնացի Գանձակ: Անտառապետի մօտ կային մեր գիւղացի ծառայողներ, նրանք ինչդեցին անտառապետին, որ ինձ էլ ընդունի ծառայութեան մէջ: Պ. Անտառապետը բարի մարդ էր, ինձ էլ վերցրեց:

Ես շատ հաւատարիմ էի իմ ծառայութեան մէջ: Մի անգամ ինձ ուղարկեց Գանձակից փող ստանալու: Ես փողը ստացայ. վերադառնալու ժամանակ մու՛թն էր. Գանձակից պէտք է գնայի Հաջիբեանը գիւղը: Ծանապարհին աւազակները յարձակեցին վրաս, թեթև վերաւորեցին աջ թևիցս: Երկար կուեղուց յետոյ, ճանապարհորդներ դուրս եկան, աւազակները փախան, ես հասայ անտառապետի մօտ: Նա շատ ուրախացաւ, որ փողեքը չեմ տւել աւազակներին. նշանակեց ինձ արհիզիլ*) և ինձ համար հանել տեց մի արծաթէ մեդալ:

Ծառայեցի երեք տարի. այդ տեղից էլ բան դուրս չեկաւ: Այդ պաշտօնից դուրս եկայ, վերադարձայ կրկին իմ հայրենի Ղազախը:

1890 թիւն էր. եկիւ էի տուն: Մի անգամ փոքր եղբորս ծեծեցի: Եղբայրս լալով զնաց հօրս մօտ: Հայրս բարկացաւ վրաս և սասց. «Հա՛, շան որդի, եկել ես տուն երեսաների՞ն ևս ծեծում: Գնա՛ մեռիլ Արբաւհամ Տէր-Արբաւհամեանի**) պէս, որ ոսկորներիդ վրա վանք չինեմ»:

Հօրս սասձ խօսքը շատ վատ աղղեց վրաս: Հէնց նոյն օրն էլ ձին նստեցի ու զնացի Ղազախ: Ուզում էի մտնել մէկ դուքան հաց ուտելու, տեսնեմ՝ մէկ բարակ, բարձրահասակ երիտասարդ նստած հաց է ուտում: Առանց որ ես բարեմ, հրաւիրեց ինձ և խնդրեց, որ ես էլ հետը հաց ուտեմ:

Հաց ուտելու ժամանակ սկսեց ինձ հարց ու փորձ անել. ո՞ր տեղացի ես, կարգաւ գիտե՞ս և զանազան բաներ: Պատասխանեցի որ այս ինչ գիւղացի եմ, ինքս էլ որեւէ գործ չունեմ:

Հաց ուտելուց յետոյ, տեց ինձ մի քանի փոքրիկ դրքոյկներ՝ «Աղբայիր», «Ննիչերի» և երկու ուրիշ դրքոյկ: Վերջը մնաւ բարե սասց ու զնաց: Յետոյ իմացայ, որ այդ երիտասարդը Սարգիս Կուկունեանն էր:

Ես կարդացի «Աղբայիր»-ը և ողևորեցի: Սկսեցի իմ ընկերների մէջ խօսել, թէ մի խումբ կարգվեց ու

*) Անտառապախ:
**) Տէր-Արբաւհամեանի մասին տեղեկութիւն ունեցողներին խնդրում ենք հաղորդել «Դրօշակ»-ին:

գնանք: Բայց չէի իմանում, թէ ո՞ր պէտք է գնանք:
 Մի օր Աղտառֆայում խօսում էի ու կարդում էի «Աղբյուր»-ը, բայց վա՛յ էն կարդալուն, որ ես էի կարդում: Տեսնեմ՝ ինձ ծանօթ Ա. Չալեանցը, կանչեց ինձ և սասց, թէ՛ «լաւ չես տնում, որ այդպէս խօսում ես բորբի մօտ»: Ես ասացի՝ «Ի՞նչ կայ որ, մենք պէտք է գնանք Հայաստան: Նա ինձ տարաւ իրա մօտ, պատմեց բորբի մանրամասն, թէ՛ Ս. Կուկունեանը գնացել է սամանապոլիս, ուղեցել է անցնել, բռնուել է: Ես խնդրեցի, որ ինձ ծանօթացնի զբանց չետ: Իսկոյն երկուսով նստեցինք երկաթուղին և գնացինք Թիֆլիս, Թոփալեանի* մօտ:

Մնացի երեք օր: Յետոյ 4 Հոգով գնացինք Գիւմրի: Հէնց մտանք կայարանը, ես ստարտի** չարցին պատասխանեցի, որ երկրաչափի մօտ ծառայող եմ: Իմ ընկերները գնացին տեսնելու միտաների չեա, ես էլ գնացի վարձելի մէկ սենեակ: Երեկոյան մուտն էր, տեսնեմ՝ ոստիկանատան սրբաւաւը***, Աբաթ Մեկեանցը մի քանի ոստիկաններով եկաւ Հարցրեց իմ որոնողացի լինելը: Ասացի՝ Ղազախեցի եմ, երկրաչափի ծառայող, անցադրի էլ ունեմ, աղիս մօտ է: Հարցրեց՝ ո՞ր է աղիք: Ասացի՛, որ գնացել էի ծանօթներին մօտ: Պ. Մեկեանցը սկսեց պատմել, թէ՛ «Ղազախեցի փախել են մի քանի բանտարկեալներ, չեաւազրել են մեզ, որ բռնեց: Այս ոստիկանի չեա գնացէք աղիք մօտ, աւաւտեանն ժամը 8-ին դայ յանրկայանայ, որ դու նրա ծառան ես, կամ անցադրիք բեր տեսնեք»:

Ես ոստիկանի չեա գնացի կայարանը, Հարցրե՛ ստարտից՝ «Ո՞ր է աղին»: Նա պատասխանեց, թէ՛ դեռ չի եկել: Ոստիկանն էլ իմացաւ, որ աղին դեռ չի եկել, իսկ մեր իրերը այդտեղ էին:

Վերադարձանք Մեկեանցի մօտ. պատմեցի, որ աղին դեռ չի եկել: Նա ինձ յանձնեց իմ սենեակի տիրոջը, որպէսզի առաւօտեան գնամ ներկայանամ ոստիկանատուն:

Առաւօտեան ժամը 6-ին վերցրի գնեցերս, ծածկեցի եպֆիլիոմս և դուրս եկայ: Խազէյինը**** Հարցրեց՝ «Ո՞ր ես գնում»: Ասացի, որ գնամ տեսնեմ՝ աղին եկել է, անցադրս տանեմ ներկայանանմ, ապա թէ՛ ոչ կը գան զահլէս կը տանեն: Միամիտ խազէյինը ասաց. «Գնա՛, գնա՛, ողորմի չօրը չօղուն»:

Հիմի գուրս եմ եկել, չեմ իմանում՝ ո՞րը գնամ: Առաջին անգամն էր, որ եկել էի Գիւմրի, ոչ ոքի չեա ծանօթ չէի: Փողոցով գնում էի, տեսայ մեր զերդացիներին: Ձէի ուզում, որ նրանք իմանան իմ նպատակը, մտայ մէկ շայշիի դուբան: Աղտեղ իրեսայ մի քանի դարիժմանդ տղերք կարա***** են խաղում: Էլ չվախեցայ: Հէնց մտնելուս պէս ինձ Հարցրին, թէ՛ «Դու մերոնցէ՞ն ես»: Ասացի՛ «Այո՛»: Ձեռաց փոխեցին շորերս ու փախցրին տարան Խղմալեանի***** մօտ:

*) Թոփալեան — Գիւստապիար Միքայէլեան, կոչուում էր և Չոլախեան:
 **) Պետ, աւագ, խնուող կայարանի պետ:
 ***) Թաղայիի ոստիկանապետ:
 ****) Խազէյին — տէր, տանուտէր:
 *****) կարտ — բուլք:
 *****) Թ. Նզմալեան — ծանօթ մանկավարժ, հա-

Աղտեղ իմացայ, որ իմ ընկերներս բռնուել են: Նամակ գրեցի ընկերներս, որ՝ «Եթէ՛ ձեզ ինձ համար են բռնել, դամ՝ ազատեցէ՛ք. ինձ մի այնպիսի յանցանք չունեմ. պէտք է տանեն Ղազախ ու բաց թողնեն»: Նրանք գրեցին, որ՝ «մենք կազատուե՛ք, դու գնա՛, էլ մի սպասի մեզ»:

Ես մնացի շարած դրուժեան մէջ: Ուզում էի գնայ աւազակապետ Աբաբօի մօտ, բայց վաւաղ չկար: Մի շարաթ մնացի, յետոյ ուղարկեցին Երեւան Գ. —ի*) մօտ: Գ. —ըն ինձ ուղարկեց ութ Հոլու չեա Պարսկաստան, Սալմաստ:

Մասանք Մալմաստ, Թորոսը** այնտեղ չէր. պէտք է գնայինք Թաւրիզ, ոտքով հասանք Թորոսի մօտ: Նա պատմեց, թէ՛ դործ չկայ՝ պէտք է յետ դառնանք: Ես ասացի, որ յետ չեմ դառնայ, եկել եմ՝ պէտք է գնամ Աբաբօի մօտ:

Մի գիշեր քնած էի. տեսայ՝ եկան կանչեցին, թէ՛ «Վե՛ր կաց, գնանք»: Ես ուրախ-ուրախ վեր կացայ, հազայ շորերս ու գնացի, բայց չէի իմանում, թէ՛ ուր եմ գնում: Երեք օրից յետոյ տեսնում եմ կրկին Աբաբօ: Մնացի բուրբովին ստաւծ: Հարցնում եմ ուղեկցիս, թէ՛ ո՞ր ես տանում ինձ: Նա նոր միայն պատմեց, թէ՛ «որովհետեւ դործ չկայ, դու պէտք է գնաս Ռուսաստան»:

Ես շատ մտածեցի, բայց ոչինչ չկարողացայ անել. ո՞րը գնամ, քանի որ խամ եմ ամէն կողմից:

Վերջապէս, հասանք Մուրթ Ստեփանոս Նախախավկայի վանքը: Միւս օրը անցայ Աբաբօ ու կամաց-կամաց գնացի Երեւան: Երեք օր մնացի այնտեղ: Հիմա ես փող չունեմ, ամաւում եմ ուզել, քանի որ մի գործ չեմ արել: Չորրորդ օրն էր, գնացի դէպի Չանգու դեւո, կանգնեցի կամըլի վրա, մտածում էի. «Ճէ՛ր Աստուած, այս ի՞նչ բան էր, որ արի. փող չունեմ, ես էլ քաղցած եմ, չունիս ծախեմ՝ ամօթ է, գնամ կրկին Ղազախ՝ էլի ամօթ է. ի՞նչ կասեն մեր գիւղի ջահել-ջուլեներ, կը ծագրեն՝ կասեն՝ դնաց Հայաստան ու վերադարձաւ առանց մի բան անելու»...

Հէնց այսպէս մտածում էի, տեսնեմ՝ մի ձայն կանչեց ինձ և տեղ մի ծրարի չեա մի քանի մասէթ փող: Գ. —ըն էր. ծրարը պէտք է տանէի Թիֆլիս:

Գնացի Թոփալեանի ուտեղ, նրան բանտարկել էին: Կրկին մնացի ստաւծ. էլ ուրիշ ծանօթ չունէի: Ի՞նչ անեմ, ո՞րը գնամ: Տեսնեմ՝ ինձ մօտ եկաւ մէկ երիտասարդ, Հարցրեց ինձ. ես պատմեցի, որ նամակ ունեմ պ. Թոփալեանի վրայ, բայց նրան, ղժբախտաբար, բռնել են: Առաւ ծրարը և ինձ ստաւաւ իրա մօտ:

Չորս օր մնացի, յետոյ 5 Հոգով կրկին գնացինք Գիւմրի: Այնտեղ բաժանեցինք. ընկերներս գնացին դէպի Էրզրում, իսկ ես կրկին Սալմաստ:

91 Թաւառն էր, երբ Գիւմրիում բաժանեցի ընկերներիցս: Իս կկայ Երեւան: Գ. —ըն ինձ 9 մարդով ուղարկեց: Ելլ հասանք Աբաբօ, գնամիջի Օհանք ինձ

աարակական ու դաշնակցական գործիչ: Եղի է Անրիկ-կալուս Տիգրանեան անուանով:
 *) Գեղեւն Ախարոնեան — Երեւանի յայտնի դաշնակցական գործիչ:
 **) Գալուստ Ալոյշեանը:

խարեց. վերջրեց մեր անցազրհնէրը, ասաց, որ զբուժանաց անցազրի կարող էք անցնել»: Երբ անցանք, թուրք ծառայողները մեզանցի հինգական մանկէք փող առին: Իմ փողը հատաւ: Ես կրկին եկայ Օհանի մօտ, փող խնդրեցի պարուք, ասացի՝ «Ճանապարհի ծախս չունենմ»: Ես վերջրեց իմ արծաթէ զեամարը ու տեց 10 բուրջի:

Վերջապէս, հասանք Սալմաստ՝ Թորոսի մօտ: Ինձ ուղարկեց Սր. Ստեփանոս Նախավկայի վանքը, որպէս թէ վանքի կողմերը սովորեմ իրեր տեղափոխել:

Մէկ տարի մնացի որպէս ծառայ վարդապետին: 92 թիւն էր. եկաւ ինձ մօտ Գոթոթը*): Ինձ ուղարկեց Դեբրեկի վանքը Զաքիի**): Ինձ ուղարկեց և Պետոս***):

Մայիս ամիսն էր: Ես եկել էի Սալմաստ գործով: Իմ ընկեր Մովսէսը առնում է մէկ ջրիւղ ծառայ ու գնում սարը, տեսնում է մի խումբ քերդեր և քարի տակին կապած հինգ եղ: Սկսում է հրացան արձակել քերդերի վրա. սրանք փախչում մտնում են ձորը. Մովսէսը հէնց իմանում է, թէ քերդերը փախել են. դուրս է դալիս դիրքից, գնում է, որ եղները ըզի: Այդ ժամանակ, յանկարծ, քերդերը յարձակում են վրան, չորս գողախով ընկնում է: Մինչև եղների մօտ հասնելը Մովսէսը սպանում է քերդերից երկուսին:

Ես Սալմաստից վերադարձայ վանք: Տեսնեմ՝ ծառան եկաւ ասաց, թէ Մովսէսին սպանեցին: Ութ ձիւտորով գնացիք Դուշման Դարա. որքան ման եկանք, քերդերին չգտանք: Մովսէսին զրինք ձիւտ վրա. ճանապարհին հողին աւանդեց:

Մովսէսի սպանելուց յետոյ, պարսկաց ու տաճկաց սահմանազլիի քերդերը թշնամացան մեզ: Վանքում կայինք մօտ 50 կամաւորներ: Այնտեղ էր և Միքայելը: Վանքում կար երկու կուսակցութիւն՝ դաշնակցական և արմենական: Չայնքի մեծամասնութիւնը ուղում էր վանքին պարիսպ շինել, փոքրամասնութիւնը՝ սներ: Վճուռեց պարիսպ շինել, ու շինեցին: Զբաղեց երկու ամիս, եկաւ Դոս խանը 500 մարդով, քանդել տեց պարիսպը և անցազրի պահանջեց կամաւորներից: Մեզանից ոչ ոք անցազրի չունէր. չունէր և Զաքին: Մի քանի օրից յետոյ Զաքին գնաց Թաւրիզ վանքի գործերի համար, արմենականները փախան, իսկ մենք, որպէս դաշնակցական, մնացինք վանքում՝ ես, Զալլաղը, Վարդանը****): և Լևոնը: Սալմաստի դատարի կողմից միւտ գալիս էին, պահանջում մեզանից անցազրի. մենք էլ ստիպւած ցերեկները փախչում էինք մօտի սարը, իսկ զիշերը վերադառնում էինք վանք:

Զալլաղը, Վարդանը և Լևոնը գնացին Թաւրիզ Զաքիի մօտ: Ես էլ պէտք է գնայի, բայց չէի իմանում ո՞ւր: Ուղում էի Հեռանայ. նոյն օրը եկան մի խումբ գինակիր կամաւորներ, որոնք Սալմաստից գէնք էին

տեղափոխում Վան, Պետոսի մօտ: Ես, որպէս երկրի ծանօթ, նրանց տարի մինչև սահմանադրուի: Ես էլ ուղում էի Հեռաները զնալ Վան, բայց չտրին, որովհետև քրդական շորեր չունէի: Համբուրեցինք ու բաժանեցինք:

Ես մնացի. երկար մտածում էի՝ ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ: Միակ յոյս Նախավկայի վանքն էր, որին ծանօթ էի: Հեծայ ձիւ ու գնացի գէլդի Նախավկան: Դերիկը մնաց ծառաների ձեռքում:

Երբ Նախավկայ հասայ, ի՞նչ տեսնեմ. վանքը բոլորովին աւերակ էր. միայն մէկ թուրք ծառայ էր մնացել, որ պատեց, թէ վարդապետին կողպտեցին, և նա ստիպւած եղաւ գնալ Նախիջևան բողոքելու:

Ես մի-երկու օր մնացի վանքում, յետոյ նստայ ձիւ ու ճանապարհ ընկայ գէլդի Նախիջևան: Երբ հասայ կամիր վանքի առաջը, տեսայ մէկ բարձրահասակ հոգևորական: Նա որ ինձ տեսաւ, գնաց իր ունեանի: Ես ուրախացայ, երբ տեսայ այդ մարդուն: Առանց զինուորներին յայտնելու ուղղակի անցայ Երասխի միւս կողմը: Ծառ թրջւած էի, ուղում էի, որ չօրերս մղեմ, չորացնեմ: Մէկ վարդապետ եկաւ ինձ մօտ, ասաց, որ սրբազանը կանչում է: Ասացի՝ «ո՞վ է այդ սրբազանը»: Ասաց՝ Ա՛. Սեղբաքեանն է»: Երբ լսեցի այլ անունը, շատ ուրախացայ. ուղղակի վագեցի մօտը: Պատմեցի մեր գլխի եկած բոլոր եղելու թիւնները: Միւս օրը ինձ տեց վանքի բանային ու վէջերութեան մի թուղթ: Ու վերադարձայ վանքը:

93 թիւն էր: Թաւրիզից մի տոմսակ ստացայ, զբուրեմ էր. «Սաթո՛, ամսիս այս ինչին արի Զուլֆա, լեզ յանձնելու բան ունենմ»: Ստորագրւած էր՝ «Յովնան»: Վերջրի վանքի ծառան ու գնացի Զուլֆա: Ուշացել էի. Յովնանը անցել էր, ես շտախի նրան:

Ուղայից առիցք մի քանի հատ հարկաւոր իրեր և վերադարձանք: Արաքսից անցնելիս զինուորների հետ կրիւ ունեցանք. ծառան վիրաւորեց, կողքից թեթեւ վէջք ստացաւ: Հասանք վանք: Տեսնեմ՝ մէկ երիտասարդ վանքում ինձ տեց մէկ նամակ Զաքիի անունով: Միւս օրը արուստեան ծառան եկաւ, ասաց, որ աւագակապետ Քեալալայ Հախիվարին կանչում է ինձ: Ես առանց հրացանի գնացի նրա մօտ. լաւ ճանաչում էի նրան: Վերջապէս, ինձ ասաց. «Քեզ մօտ եկել է մէկ հարուստ մարդ, կամ 50 բուրջի առ տուր մեկ, կամ դու գնա՛ գիւղ, մենք կառնենք նրանից»:

Ի հարկէ, ես չէի թողի մի՛նակ: Մտաւները գնացել էին գիւղ, ինձ մօտ էր միայն մէկ փոքրիկ երիտասարդ: Աւագակների հետ երկար խօսելուց յետոյ, տեսնեմ՝ ուղում են դուռը փակել վրա, ինձ թողնել դուրս: Որ նկատեի այդ խորամանկութիւնը, իսկոյն մտայ ներս և ասացի՝ «Այս ի՞նչ էք անում»: Հէնց այս էլ ասում, աւագակապետ ուղեց ինձ բռնել: Ես սուրս քաշեցի, որովհետեւ ինձ պաշտպանեմ մինչև հրացանիս հասնելը: Սուրս հանելիս կպաւ աւագակապետի երեսին, կարեց ականջը, երեսն ու քիթը: Աւագակապետ թողեց ու ընկաւ զետիւն. միւսները փախան գէլդի վանքի բակը, սկսեցին հրացան արձակել վրա: Ես վագեցի, հրացանս վերջրի, ուղղեցի աւագակների կողմը և երկայնիս ուղարկեցի, որ հասար տանի գիւղը, ծառաները գան, որ կարողանանք բռնել աւագակներին:

*) Ստեփան Զօրեանը, Ռոստոմը:
 **) Բագրատ վարդապետ Թաւաթայեան. այն ժամանակ Պարսկաստանում դաշնակցական գործիչ էր:
 ***) Պետրոս Աղեքսանդրեան, Վանի յայտնի Պետոս:
 ****) Սարգիս Մեհրաբեան—խամաւորի վարդանը:

Մինչև ծառաների հասնելը աւազակները թոկ են կապում ու փախչում սարը: Սարում սկսում են կռուել իրար հետ, և մէկը սպանում է երկու հոգի: պատից թռչելիս էլ մէկի ոտքն է կտրուում:

Ես վերցրի փանջի բանալիները և գնացի Ալամտար Ծահ Զաքի մօտ, բորբեքի, որ չեմ կարող վանքում մնալ: Ծահ Զաքին ինձ հրաման տւեց, որ ինչ աւազակ դայ, նեղութիւն տայ վանքին, իրաւունք ունեմ սպանելու:

Յունիս ամիսն էր: Թարւրից նամակ ստացայ Չաքից և Տաշօից^{*)}, որովհետք կրկին Դերիկի վանքը գնամ: Մէկ թուրքի ձի վարձեցի այն երիտասարդի համար, ու գնացինք դէպի Ոյոյ: Դեռ Աւարայրի դաշտը չհասած, Սախկալ թուրքան կիրճում պատահեցինք մի խումբ աւազակներին: Նրանք պատճառ բերին, իբր թէ իրանց եղևերը դողացել են, մենք նրանք օգնենք, երաները խնկը դողերից: Ես հասիացայ նրանց միտք: Իմ ընկեր թուրքին ասացի. «Հեծի՛ր ձիդ, շուտ գնանք այժմորից»: Թուրքը սկսեց նախատել ինձ, թէ ես վախենում եմ թուրքերից, սկսեց կանչել աւազակներին. «Եկէ՛ք, ինձ մէկ թուրքան փող տէ՛ք, ես զամ ձեր եղևները առնեմ, յետ տամ ձեզ»:

Հէնց այսպէս խօսելիս, երբ հասանք վտանգաւոր տեղը, թուրքերը նստեցին զարբեր տակ: Ես տեսայ՝ բանը ինչու՞ն է, ասացի երիտասարդին, որ գնայ՝հեռանայ ձորից, իսկ ես մօտ 40 քայլ հեռու էի թուրքերից: Յետ նայեցի. իմ ընկեր թուրքը ձեռք տւեց նրանց և ասաց. «Սպասեցէ՛ք մինչև իմ դալը մօտիկ գերից, յետ կառնեմ եղևները ձեզ կը տամ»: Ես մտրակեցի ձիս, որ շուտ դուրս գամ ձորից: Հրացանները պայթեցին մեզ վրա: Իմ ընկեր թուրքը խոյն կանչեց՝ «Վա՛՛՛՛՛, Սարքից» ու մտաւ: Ես իջայ ձիուց, ձիս ինձ պարիսպ չինեցի ու սկսեցի հրացան արձակել աւազակների վրա, բայց նրանք ջարբեր ետէ էին, իսկ ես՝ դաշտում: Մըքանի անգամ հրացան արձակեցի, վերը տեսայ, որ ալ սարքերց զնդակ կպաւ: Թողի ձիս ու վազեցի մտայ ջարբի տակը: Աւազակներից մէկը իր դիրքից դուրս եկաւ, դալիս էր դէպի իմ ընկեր թուրքը, որ հրացանը վերցնի: Ես հրացանս ուղղեցի դէպի նա, երկու անգամ արձակեցի վրան. աւազակը ուզում էր փախչել, երբորդ զնդակը նրան դուրեց զետին: Այդ ժամանակ մօտիկ գերիլ հաւարը հասաւ, աւազակները փախան. վերցրինք իմ ընկեր թուրքի դեակը, սարինք դիւղ: Այն երիտասարդին ուղարկեցի Ոյոյ քաղաքը, ես մնացի մենակ ծառի տակին պարկած, ինձ մօտ էր դեակը: Մարդ ուղարկեցի թուրքը ազգականներին կանչելու: Գիշեր էր. ես շատ էի վախենում նրանցից, բայց եկա Մեխիք Զաքարը, սկսեց համբուրել ճակատս և ասաց. «Դու մեր արիւմը ստել ես, դու պէտք է դաս գնանք միևս դողերի յետից»: Իմ ոտքը շատ էր ցոււում, բայց ի՞նչ անէի, ստիպած պէտք է դնայի:

Առաւօտեան հեծայ ձին ու գնացինք Մարքան գերիւղը: Արդտեղ բերին երեսուներ չափ թուրքեր, որոնց մէջն էր մէկը: Ես ցոյց տւի դրան: Թուրքերը ուղեցին բռնել նրան, նա փախաւ: Իմ հետիս թուրքերը հաւաքեցին Մարքանի նախիրը և ստրան արեւելի փոխարէն:

Միև օր երկու թուրք ինձ հասցրին մինչև Մէյրաւար գերիւղը: Գիւղի վաճառականները և Մեխիքը հետս գնացինք Հոյի Իսամի-Իոյվէի մօտ, որը նահանգապետ էր Ոյոյում: Իմ ոտքիս ցաւից այլևս բան չեմ յիշում: Մէկ էլ տեսնեմ, դերուում, մէկ հայ կին վերքիս վրա մահւում էր գնում:

Պարկած էր երեք ամիս: Երբ լաւացայ, գնացի Դերիկ, Զաքիի մօտ: Զաքին սկսեց ինձ կարգաւորել սովորեցնել:

Հոկտեմբեր ամիսն էր: Գործով գնացի Սալմաստ: Երեկոյեան վանք վերադառնալիս հասայ Նիդրուաւ կողած գիւղը: Տեսնեմ՝ մէկ ջիւղը նստած է քարի տակին: Ես իսկի ուշադրութիւն չարձարի, ջրում էի ձին: Երբ երեք հարիւր քայլի չափ մօտեցայ, ջիւղը կանգնեց ու հրացան արձակեց իմ վրա: Ես ձայն տի ու հրացանս ուղղեցի դէպի ջիւղը: Յետոյ, ի՞նչ տեսնեմ, Տ՛՛՛՛՛՛՛՛ Ասուած. բոլորովին պաշարւած եմ, միայն կարող եմ դէպի Սալմաստ փախչել: Յետ դարձնելիս ձիս ընկաւ գնդակից՝ ես սկսեցի հրացան արձակել ու ոտքով վազել յետ: Վաղեցի մօտաւորապէս երկու հազար քայլ: Սաստիկ յոգնած էի: Ճանապարհի վրա, ագարակի մէջ, մի փոքրիկ սնակ կար, մտայ մէջը: Տնակն ունէր երկու բաց տեղ՝ մէկը լուսամուտն էր, միւրը՝ դուռը: Լուսամուտը ջարդով ծածկեցի, ինքս էլ կանգնեցի դրան մօտ: Ամբողջ դիշեր կուռեցի ինձ հետ: Լուսաղէ՛մին Հին քաղաքից քարւան էր գնում Վան: Գիւղերը երբ լսեցին քարւանի ձայնը, թողին ու հեռացան: Ես դուրս եկայ իմ պաշտպան սիրելի տնակից ու քարւանի հետ գնացի վանք: Այնտեղ էին Զաքին. Պետոն և Սարմեխը: Առաւօտեան գնացի Դիլման Հաւլի խանի մօտ բողբեղու:

Էլմիխանից հեռադիր եկա Զաքիի վրա: Զաքին վանքը յանձնեց ինձ, ինքը գնաց էլմիխանին: Ես վանքի վէճերի էի:

Գէ թիւ ապրիլ ամիսն էր: Վանքի ցորենը հատել էր. գնացի Սալմաստ ցորեն ժողովուրդու:

Այդ ժամանակ ջերդերը սաստիկ թշնամացել էին մեզ: Ես գիտէի, որ մեզանից մարդ պետի սպանելին: Առաւօտեան գնացի վանք: Վանքում էին յայտնի աւազակապետ Շէրօն և Զաթօն: Եկել էին թիֆլիսից Դաշնակապետեան ծախսով: Մեզինք էլ մի խումբ պէտք է գնար Վան: Զաթօն ուզում էր, որ միանանք արմենականներին: Երեկոյեան Զաթօն ասաց. «Պէտք է գնամ արմենականների մօտ, տեսնեմ, ի՞նչ են անում»: Ես շատ աշխատեցի յիջողել, բայց չլսեց:

Ձորս ընկերով դեպեցի Սալմաստ: Վանքից հեռացել էին երեք վերստաշափ, ձորի մէջ, երբ հրացանի ձայնը լսեցինք: Իսկոյն մտածեցինք, որ սղերը կուր են բռնել, վաղեցինք: Մինչև մեր հասնելը սպանել էին Կարօին և Գեօին: Արդէն մուրթի էր, թշնամուն չտեսանք: Վեցրեցին դիակներն ու վերադարձանք վանք: Արմենականներին էլ Հէնց այդ էր հարկաւոր որպէս փաստ:

Մէկ օր վանք եկան երկու արմենականներ և բերին մի զէչ ալիւր: Ես դարձացայ՝ տեսնելով ալիւրը: Ասացին, թէ զիտեն, որ վանքում հաց չկայ, այդ պատճառով էլ բերել են: Գիշերը կանչեցին Շէրօն և Դրբէին, ասացին, որ ուղարկում են Ուրմի: Այդ օրը մի խումբ

*) Յովսէփ Արղութեան — համաարի Խշխման:

արմենականներն գնում են վանքի հողերին մօտիկ սպանում են հինգ ջուրը, մէկին էլ վիրաւոր են թողնում, որպէս թէ Կարօի և Գեօր վրէժն են լուծում :

Ես չէի իմանում բանի էութիւնը : Տեսնեմ՝ երկու-յեան Նայ են տանում դէպի ձորը : Ես կասկածեցի վերջըի հրացանս ու դնացի դէպի այն կողմը, ուր Նայ են տանում : Տեսնեմ՝ մի խումբ արմենականներ : Ասացի՝ «Կերբապէս, ձեր նպատակին հասաք» : Շէթօս պատմեց, թէ ինչ նպատակով են արել այդ սպանութիւնը, որպէս թէ ապագայում վանքը իրենց ձեռքում մնայ :

Այդ վերաւոր զերգին տանում են Վանի կուսակալ Բահրի փաշայի մօտ : Քիւրդը պատմում է, թէ գերիկցիները կտորեցին իր շորս ընկերներին, իրեն էլ դիտմամբ վիրաւոր թողին : Բահրի փաշան հրամայում է ցեղապետ Շարաֆ աղային, որ վանքի մէջ եղողներին դուրսները կտրէ, վանքն էլ քանդէ ստանջ ուշացնելու :

Ես թողի վանքը ու դնացի Սալմաստ մերոնց մօտ : Այնտեղ էին Տաշօն, Պետօն, օրիորդ Ծաղիկը*) և միւս ընկերները, որոնք պատրաստուած էին դնալ Վան : Պատմեցի ամբողջ եղելութիւնը, և նոյն գիշեր ես ու Շէթօս վերադարձանք վանք : Երբ հասանք ձորը, յանկարծ, մեր վրա յարձակեցին մի խումբ զերգեր-կուրը քաշեց կէս ժամ, բայց մեզ համար աննկատելի էր, թէ արդեօք թշնամուց մարդ ընկնում է, թէ ոչ :

Հասանք վանքը : Առաւօտեան եկան Տաշօն, Պետօն և միւսները : Երեք օրից յետոյ ես ու Պետօն դնացիք օր. Ծաղիկին բերելու և վերադարձանք : Միւս օրը առաւօտեան ես, Պետօն, օրիորդը և Պապիկը վանքում թէյ էինք խմում, ծառերի տակին : Երկու շաբաթ է, որ համարուս պաշտօնը ձեռք է ձեռքի մտնում : Երբ Նախրը չէինք թողնում հետո սարը գնալու : Այն օրը ես սասից նախորդին, որ մի քիչ հեռացին : Մէկ էլ, թէյի վրա, լսեցինք վանքի պահապանի պայմանական նշանը : Ամենքս վեր թռանք, տեսանք՝ հարաւային կողմից քսանի շափ ձիււորների յարձակեցին շիմանում կապած ձիւների վրա : Մենք բոլորս հրացաններ ուղղեցինք դէպի այն կողմը՝ զերգերը նեղանք՝ թողին ձիւներ և ուղղեցին դէպի նախիրը : Տեսնեմ՝ նախորդի մայրը ճշարով եկաւ՝ «Վա՛յ, Սաքօ, ասաց, երկխայիս դուրսը տարան» : Հէնց որ այդ լսեցի, վազեցի դէպի նախիրը : Ինձ հետ եկաւ և Սախօն : Անցանք դեռ, հրացաններ արձակեցինք, մինչև որ երեսուն և նախորդը իմացան բանը ինչպէս է և վազեցին դէպի մեզ :

Երբ փորձեցինք մօտենալ նախիրին, ի՛նչ տեսնեցք շրջապայ բոլոր սարերի կատարներից մօտիկ է բարձրանում : Կանչեցի Սախօն, յետ-յետ դէպի վանքը վազեցինք, մտանք նախօրօք պատրաստած տեղը և սկսեցինք կատարի կռիւ, որ տեղց վեց ժամ :

Մենք թւով 17 հոգի էինք և բաժանուել էինք չորս տեղ, իսկ զերգերը՝ 4-500-ից աւելի համախօս գինւորներ, 50 հոգի էլ սուսարի ձիււորներ : Կուր ժամանակ օրիորդ Ծաղիկը հաւաքել էր մօտը վանքի կանանց :

Նրանք փամփուշտ էին սրբում և բաժանում կուրդներին :

Երբ Շարաֆ աղան տեսաւ, որ հէշտ չէ Բահրի փաշայի հրամանը կատարելը՝ տանել գերիկցիները դուրսը, սկսեց նախիրը բռնել, որպէսզի մենք դուրս գանք զիրգերից ու նախիրի յետեից դնալիս՝ կտորուենք : Ի հարկէ, մենք այդ սխալը չարինք : Գերիկցիների դուրս-նորի հոյաբարձն ստրին նախիրը : Կուր թունդ ժամանակ Սախօն վերցրեց շիփորը ու սկսեց փչել. ույզ ձայն սարափեցրեց զերգերին : Նրանք սարափայրին քել նախիրը և տարին Բահրի փաշայի մօտ : Սա բարկացած սասել է. «Ես ձեզ հրամայել եմ գերիկցիները դուրսը բերել և ոչ սևատաւար նախիր» : Շարաֆ աղան պատասխանել է. «Գերիկըմ գինւորական շիփոր փչեցին, այնպէս որ եթէ չսխալեցինք, ոչ մէկս ողջ չէր մնայ» : Միւս օրը ես և օրիորդը գնացինք Սալմաստ և յայտնեցինք դատաւորին : Օրիորդը, որպէս ոռուսաճր-պատակ, բողոքեց, թէ՛ «Գնացել էի տաք ջրից օգտուելու, որտեղից և պատահեց այս դէպքը» :

Ես հեռագիր տւի էջմիածին, Թէհրան և Թաւրիզ, ո՛չ մի տեղից օգնութիւն չեղաւ : Զաքիին էլ էջմիածնից ուղարկել էին ուրիշ տեղ գործով, իսկ տեղեկութիւն չունէր :

Այնուհետև համարեա պաշարած էինք բոլոր ժամանակ :

Ընկերներս պէտք է գնային Վան. ես էլ չէի ուզում նրանցից բաժանուել : Վերջապէս, եկաւ Ա. Վահուհի վարդապետը Գերիկին վանահայր : Ինձ շատ խնդրեց, որ մնամ վանքում, ես չմնացի, որովհետև վարդապետը արմենական էր : Վանքի իրերը յանձնեցի նրան և հեռացայ : Ինձանից յետոյ արմենականները իրենց նպատակին հասան. դնացին, բայց մի ութ օր հողի կարողացան մնալ, փախան : Վանքը վրկին մնաց ամայի, նախիրն աւերակ դրութեան մէջ :

Վանքի այդ դէպքի պատճառով մեր Վան դնալը յետաձգեց արշան : Օր. Ծաղիկին ուզում էինք ստանձնիլ Վան ճանապարհել, իսկ մենք՝ խմբով : Օրիորդը համար վերցրինք անցապահի և տեղական կանանց հագուստ : Ես և օրիորդը դնացինք թոյն, որպէսզի կոթուրի վրայով ճանապարհենք : Մնացինք երկու շաբաթ. քարան չգնաց. յարարութիւնը կտրուել էր : Մեր երկուր մնալը թոյնով վատ եղաւ. տաճկաց շահաճապար իմացաւ, միևնույն անկարելի էր օրիորդին մենակ ճանապարհել, ստիպւած եղանք վերադառնալ Սալմաստ : Վճռեցինք, որ օրիորդը առ այժմ մնայ Թաւրիզ : Իսկ մենք մնաս բարև սասցինք ու ճանապարհ ընկանք դէպի Վան :

Առաջին գիշերը հասանք Գերիկ, երկրորդ գիշերը՝ Երիօ հերում, երրորդ գիշերը՝ Ազգային կոչած այրում, չորրորդ գիշերը՝ Աչկերտաց սարում, հինգերորդ գիշերը՝ Կարմիր Գարբեր կոչած սարում, վեցերորդ գիշերը արդէն Վարազայ լեռան վրա էինք : Պէտք է սասել, որ մեր խումբը գինակիր խումբ էր. մեր մէջ կային և առաքեալներ*) : Իրա պատճառով ցերեկները

*) Օրիորդ Սաքենիկ Մատինեան, յետագային Տիկ. Արզաբեան, Յովսէփ Արզաբեանի — Իշխանի կինը :

*) Դաշնակցութեան գործուկուրեան առաջին շրջանում կուսակցական քարոզիչ-գործիչները կոչուում էին «առաքեալ» :

պահանջում էինք, իսկ զիջելիսը դնում:

Մեր հասցր հատել էր Վարազյայ սարում, հանգամանքները չէին ներում հաց ճարել: Սախօն ուղարկեցինք Վարազյայ վանքը, որ հաց բերի, նա էլ չվերադարձաւ իր ժամանակին:

Մեր քաղցածութիւնը երեք օր քաշեց: Մեր դրութիւնը անտանելի էր. մի կողմից Սախօն չէր վերադառնում, միւս կողմից հաց չունէինք. ամէն զիջեր գտնում էինք սրամանուրում տեղը — ոչ ոք չկար: էլի ստիպւած էինք բարձրանալ դադաթը: Բոլորովին ոյժ չէր մնացել մեր վրա:

Չորրորդ օրը տեսնեմք՝ պահապանը նշան տեց, թէ Սախօն դալիս է և հաց է բերում: Պէտք էր տեսնել մեր ուրբաթութիւնը: Սախօն եկաւ, հասաւ մեզ. բերեց մէկ աղլուխի մէջ մի քանի հատ գարուց պատրաստած կուտ, որով հովիւները կերակրուած են շներին: Պատմեց, թէ ինչպէս վարդապետները բանտարկել էին իրեն, հաց չէին տւել՝ առելով, թէ՛ դաշտիս ես: Սախօն յարմար ժամանակ է գտնում փախչելու: Բարբ հովիւները տեսնելով նրա դառութիւնը՝ առիտ են այլ կուտերը, որ մէկ-մէկ հատ ըստանեցինք մեր մէջ՝ վա՛յ այն ուտելուն, որ մենք կերանք...

Երեկոյեան էլի իջանք մեր պայմանաւորւած տեղը. դարձեալ ոչ ոք չկար: Մեր մէջ այլևս ոյժ չէր մնացել, բայց նորից բարձրացանք լեռը. արդէն չէինք ուզում մինչև անպակ իրար հետ խօսել: Տաշեն և Պետոս ասում էին. «Ներաչքնե՛ր, մի՛ թէ չի կարելի գաղափարի համար չորս օր քաղցած մնալ»:

Երկար պայտելուց յետո՛ւ, պահապանը ասաց, որ ձայն է դալիս: Մի զէշ ժամանակ անցած, լսեցինք պայմանական ձայնը: Պահապանը առաջ գնաց. տեսնեմք՝ եկան մեր ընկերները և բերին հաց: Նրանցից իմացանք քաղաքի դրութիւնը և այլ զիջելու մտանք վան:

Քաղաքում մնացինք 25 օր. ամէն զիջեր տեղափոխում էինք, իսկ ցերեկները պահում: Պատահում էին տներ, ուր կինը մեզ այնպէս էր թագցնում իւր տանը, որ ամուսինը, կամ որդին, կամ հարսը չէր իմանում: Առհասարակ, տեղացիք սարսափելի խորհրդապահ էին: Մեզ մի ընկեր ունէինք, որի հայրը վատ մարդ էր. սա ունէր և եօթ տարեկան տղայ: Մի օր մեր տեղափոխելու ժամանակ փողոցում զիջուրներ ի պատահեցինք. ստիպւած եղանք մտնել մեր այլ ընկերով տունը, բայց վախենում էինք, որ հայրը կիմանայ: Դուռը ծեծեցինք, դուրս եկաւ փոքրիկ երեխան: Դեռ մենք չհարցրած, թէ հայրը տանն է կամ ոչ, ինքը ուրախ-ուրախ կանչեց. «արե՛, արե՛, ի՞նչու մեռել է»: Մենք ուղղակի դարձացանք, որ այդ երեխան իմանում է, թէ հայրը վատ մարդ է, իսկ մենք՝ լաւ:

Վանում մնացին Պետոս ու Տաշեն, իսկ մենք 13 հարով վերադարձանք Սալմաստ՝ թողնելով մեր գէնքը:

ըր վանում: Միայն 6 հատ հրացան վերցրինք, որի հետ միայն 350 փամփուռու ունէինք:

Քաղաքից դուրս դալու օրը սկսեց փոթորիկ: Կառավարութիւնը իմացել էր մեր դուրս գալը և օգուտ քաղելով փոթորկից՝ մեր հետեւելով եկել էր մեր յետևից: Երբ հասանք Բողաղբասան գիւղը, գիւղացիք մեզ սպասում էին. ասացին, որ Ղըրք Սարգսրը 41 ձիաւորով մեր յետևից է եկել: Մենք շատ թրջած էինք, բայց ի՞նչ արած, պէտք էր դիւրը չմտնել:

Նոյն գիւղացի ծնգօ անունով մէկը տարաւ մեզ մօտիկ մեծ արջածորը և ինքը բարձրացաւ սարի գլուխ, որպէս պահապան: Յորտից չէինք իմանում ի՞նչ անել: Կէս օր էր. յանկարծ պահապանը ձայն տուց. «Տղե՛րք, եկա՛ն, եկա՛ն»: Մենք սկսեցինք առաջ վազել, տեսնեմք՝ մէկ ձիաւոր եկաւ մեր առաջ, հրացանը ուղղեց դէպի մեզ ու ասաց. «Կա՛ւ, մէին գիւղի գլխից» (մի՛ փախէք, մտէք ձորը): Մենք յետ դարձանք: Ենգօս կանչեց. «առա՛ջ, ստա՛յ, դէպի՛ քարերը»: Մեր բոլորիս հրացանները ուղղեցինք դէպի ձիաւորը. ձիս ընկաւ, մարդը փախաւ:

Բարձրացանք բլուրի գլուխը և նոր տեսանք, որ պաշարւած ենք: Կանչեցինք «ուռա՛» և հրացաններս արձակեցինք սուտարիներ վրա, որոնք բաժանեցին երկու մասի: Մենք ճեղքեցինք նրանց շղթան դէպի ձորը և նոյնպէս բաժանեցինք երկու մասի. Շէրօս, Ոսկանը, Փոխիկը, ստնելով անդէններին՝ վազեցին քարի գլուխը. ես, Սախօն, Վարդանը, Միհրանը և Օքմին կուտում էինք բլրի գլուխի, որպէսզի անդէնները սարը բարձրանալիս չուպուեն: Յանկարծ, տեսնեմ՝ Սախօն կանչեց. «Տղե՛րք ջան, ես գարկեցինք՝ ու վազեց առաջ: Մենք տեսնելով մեր սիրելի Սախօնի դրութիւնը՝ աւելի էինք ուզում վրէժ առնել թշնամուց, բայց մեր դիրքը լաւ չէր. վազեցինք դէպի քարերը, թողինք Սախօն ձորի մէջ ընկած, վերցրինք միայն հրացանը:

Իննեցինք քարերի լաւ դիրքը ու սկսեցինք կուտել: Գիւղում մէկ օնթաշ՝ տասնապետ իւր ու ձու ուտելիս է լինում, երբ լսում է հրացանի ձայնը. իսկոյն վազում է դէպի մեզ: Տեսնեմք՝ ուղիղ մօտեցաւ մեզ, հազիւ 3-400 քայլ տարածութեան վրա: Մեր հրացանները պայթելուն պէս մնաց տեղն ու տեղը. եզն ու ձուս բերանից դուրս էր եկել: Այդ կուրս այնպիսի սարսափ էր ազդել, որ այնուհետև Սուլթանի քաջ սուտարիները հինգ հողուց պակաս տեղ չէին գտնում:

Կուրս քաշեց մինչև ժամ ութը երեկոյեան: Երբ արդէն մթնեց, հասաքեցինք մեր դիրքերից, Ենգօին յանձնեցինք մեր սիրելի Սախօնի ու բաժանեցինք: Նոյն օրը անցանք սահմանը: Երեք օրից յետո՛ւ, Ոսյի վրայով անցանք Սալմաստ: Ես էլ սկսեցի կարգաւ-դրել սովորել օրիորդից՝ սպասելով յառաջիկայ դարանս իմբին:

(Շարունակելի)

Թ Ի Ի Ր Ք Ի Ո Յ Շ ՈՒ Ր Ջ

ՔԵՄԱԿԻՉՄՆ ԱՆԿՄԱՆ ՀՐ.ՋԱՆՈՒՄ

կուկուսի պաշտօնաթերթը՝ «Պրա.դա»-ն վերջերս բաւական մեկամադանո շնչուով է խօսում «դաշնակից և բարեկամ» Թիւրքիայի ներքին և արտաքին գործերի մասին: Պարզ նկատուում է, որ սև կատու է անցել Մոսկուայի և Անգորայի միջև: Իբրև նմաշ, ստորև առաջ ենք բերում 26 նոյեմբ. համարից «Քեմալիզմը անկման շրջանում» յօդածքը:

«Առաջին իսկ հայեացքից Թիւրքիայի տնտեսական վիճակի վրա աչքի է գարնում կատարեալ անշարժութիւնը երկրի տնտեսական կենսի բոլոր բնագաւառներում: 1924-26թ. երկամեայ փթթման շրջանից յետոյ, երբ քեմալական բուրժուազիան՝ արեցած իր յաջողութիւնից կողանում՝ ձեռք գարկեց մի շարք արդիւնաբերական և առևտրական ձեռնարկների, երկրի տնտեսական դրութիւնը սկսեց անշեղ փառանալ: Շատ գործարանների կառուցումը թողնած է անաւարտ, շինածներէց շատերը մինչև այժմ գործի չեն սկսած (օրինակ, սաւառնակների գործարանը Կեսարիայում, լուցկու գործարանը Էսյն): Աւելի ևս յատկանշական է առևտրական տների զանազանային հաշվարկարար, բազմաթիւ սնանկութիւնները: Ձեռնարկներից շատերը յուսահատական ճիգ են գործ դրել՝ պահելու ստեղծարարներից դիրքը չուկայում, բայց ընդհանրապէս ստեղծած են կրճատել արտադրութիւնը՝ կրճատելով և բանւորներին ու պաշտօնէութիւնը կիսով կամ երկու երրորդով:

Այստեղից՝ և ամենասուր գործազրկութիւնը երկրում: Պաշտօնական վիճակազրկական տեղեկութիւնների բացակայութեան պատճառով դժուար է ցոյց տալ ճշգրիտ թւեր, բայց մօտաւորապէս կարելի է հաշուել, որ գործազուրկ բանւորների և պաշտօնեաների թիւը կազմում է 50-60 հազար:

Տեւալկիքը արտաքին առևտրի մասին վկայում են ամենացայտուն կերպով, որ չուկայի ընդունելու կարողութիւնը կրճատել է և արտադրութիւնը խիստ ընկել է: 1924-25 թվականներին արտաքին առևտուրը սպրեց ծաղկման շրջան: Ապրանքների ներածութիւնը բարձրացաւ 25 տոկոսով, արտածութիւնը՝ 21%, իսկ ընդհանուր առևտրական հաշակչութիւնը՝ 36%: Բայց 1925 թիւից սկսած սեղի է ունենում ինչ ներածման և թէ արտածման անընդհատ անկում, և ապրանքների արտածումը ընկնում է աւելի սաստիկ, քան ներածումը: Մի հանգամանք ևս վատթարացնում է այդ առանց այն

էլ անփայլ դրութիւնը: Մաքսերի բարձրացման սպասելով՝ ներածողների մեծ մասը առաջուց մեծ քանակութեամբ ամէն կարգի, բայց, մանաւանդ, հիւսաածեղէն ապրանքներ մտցրեց երկիր, շատ աւելի, քան չուկան էր պահանջում: Այդ պատճառով, 1929 տարւայ առևտրական հաշակչութեան անխուսափելի է ներածման խիստ յաւելումը անցեալ տարւայ համեմատութեամբ, այն ինչ արտածումը մտնում է նախկին վիճակում, զուցէ և աւելի պակաս: Առևտրական կրաւորական հաշակչութեւ, ի հարկէ, աննպաստ կերպով կանդաղադանայ երկրի առանց այն էլ ծանր տնտեսական պայմանների վրա:

Առևտրական հաշակչոյ այս աստիճանական անկման հետ սերտ կապակցութեան մէջ է գտնուում և Թիւրքական դրամի արժէքազրկումը: Վերջին ամիսների ընթացքում Թիւրքական դրամի գնողական կարողութիւնը ընկել է 10 տոկոսով: Սրա անմիջական հետևանքն է ապրուստի մշտական սղումը, որին նպաստում են և մի շարք ուրիշ գործօններ, ինչպէս, օրինակ, բազմապիսի անուղղակի հարկերը, որոնց պատճառով բարձրանում են առաջին կարգի անհրաժեշտութեան մթերքների գները, որից ստուծում են առաջին հերթին ազգաբնակչութեան ամենաաղքատ խւերը:

Կացութիւնը վատանում է նաև շնորհիւ կառավարութեան կիրառած իւլտիսական քաղաքականութեան, որով հարկերի բովանդակ ծանրութիւնը դրուում է սպառողների լայն զանազանների վրա: Վերջին 5-6 տարւայ ընթացքում հարկերի ընդհանուր դուժարը հասաւ 90 միլիոն Թիւրքական լիրայի: Ներկայումս, կեանքի սղութեան այս պայմաններում, Թիւրքիայի աշխատաւորները պարտաւոր են երկու անգամ աւելի հարկ վճարել, քան 1924-ին:

Մեծ աղէտ է Թիւրքիայի աշխատաւորութեան համար կառավարութեան տած համաձայնութիւնը՝ վճարելու Օսմանեան կայսրութեան պարտքերը: Առնելով իրենց վրա պարտաւորութիւններ և դնելով իմպրիալիստների տրամադրութեան տակ Պոլսի նաւահանգստի հասոյթները՝ քեմալիստները արին առաջին քայլը, որով նահանջում են Թիւրքիայի լիակատար և անպարտան անկախութեան դիրքերից: Այս օրւանից Թիւրք բանւորներն ու դիւղացիները պարտաւորած են 12 տարւայ ընթացքում իւրաքանչիւր տարի վճարել միջազգային դրամական մեծաւորներին 32 միլիոն Թիւրքական լիրա:

Այս բորբի հետ միաժամանակ տեղի է ունենում մանր բուժօրհանի արագ զայլալուծը թէ՛ քաղաքում և թէ՛ դիւրում: Բովանդակ Փոքր-Ասիայում մանր-բուժօրհան խաները գտնուում են ծայրայեղ յուսահատութեան վիճակում: Տնտեսական անշարժութիւնը թոյլ չի տալիս, որ քաղաքած մանր-բուժօրհանը այդ զանազանները անցնեն բանուորների շարքերը:

Ամբողջ թիւրքիայում — փոքր քաղաքներից սկսած մինչև մեծագոյն քաղաքները — ամուսն է լայն դանդաղանքի դժգոհութիւնը: Այդ դժգոհութիւնը սպառնում է վերածուլ վրդովումի փոթորիկի: Իրենք քեմալականները դիտակցում են, որ արտաքին երևութեան անդրբուժեան տակ ուժգին խմորումներ են կատարում աշխատուորների կիսնրում: Քեմալականները չեն էլ ծածկում, որ դրա մէջ մեծ վտանգ են տեսնում իրենց դասակարգային տիրապետութեան համար:

Չանգուածները մեծագոյն ուշադրութեամբ հետևում են կոմկուսի յեղափոխական քարոզչութեան: Միայն տիրապետողների բողոքը մայիսի մէկի ցոյցերի արգելման դէմ, նրանց քաղաքական պահանջները, որոնց հետեւանքով ձերբակալւեցին մի շարք ընկերներ, Պոլսի շաֆերների յայտարարած գործադուլը իբրև բողոք ստիպանական ճնշումների դէմ և մի շարք ուրիշ նշաններ ցոյց են տալիս, որ ուժգին խմորումներ կան արգարանակութեան ամենադճատ զանգուածների մէջ: Հարկաւոր է մատնանշել նաև մի շարք հարկատուների մերժումը վճարելու յետեւալ տուրքերը, հակառակ բանտարկութեան սպառնալիքի (բանտարկածներէց շատերը յետեւալ տուրքերը վճարել մերժող մարդիկ են), մերժումը մասնակցելու կառավարական ցոյցերին, մասնակցել ընտրութիւններին և այլն:

Կոմկուսը միակ քաղաքական կազմակերպութիւնն է, որ բաց կերպով քննադատում է քեմալականներին*): Ուստի և կառավարութիւնը բոլոր շահիքեր ուղղում է

կոմունիստներէ դէմ: Մոսպրի**) և կարմիր արհեստագիտներէ վրա էլ կառավարութիւնը յարձակում է և ամենախիստ պատիժներն է դնում, իսկ արհեստաւորական միութիւնները կամ փոխադարձ օգնութեան դրամարկները աշխատում է զայլալուծ ներսից:

Քեմալականներն ամէն դնով ձգտում են ապահովել մեծ պետութիւնների բարեացակամութիւնը: Նրանք աշխատում են օգտադուրեւ առանձին իմպերիալիստական խմբաւորումների միջև եղած հակասութիւնները և սուլի կամ պակաս խոշոր վիշուսներէ միջոցով ձեռք բերել պետութիւններէ մի մասի գործակցութիւնը ուրիշ պետութիւններէ դէմ մղած պայքարում: Յուզիչ բարեկամութիւնը Փաշիստական Իտալիայի հետ գնեց, ի հարկէ, ոչ փոքր ստուտական դիշուսներով թիւրքիայի կողմէց: Լարւած յարաբերութիւնները Տրանսսիայի հետ, իբրև հետեւանք վէճի սերիական սահմանագծի և Կիլիկիայի երկաթուղագծի հարցերի, տեղի տւին կատարեալ փոխադարձ համաձայնութեան: Այս կապակցութեամբ նոյնիսկ հարց յարուցեց հակելու համար դէպի «Թիւրքիայի աւանդական բարեկամը»՝ Տրանսիան: Իսկ հիմա մենք վկայ ենք թիւրքիայի թշնամիին Անգլիայի հանդէպ (անգլիական միջերկրական նաւատորմիդի հանդիպումը Պոլսի, բրիտանական ծովակալի այցելութիւնը Քեմալ փաշային):

Կարճ ասած, քեմալիզմն այժմ գտնուում է կատարեալ միացման շրջանում միջազգային իմպերիալիզմի հետ: Սրա հետ են կապւած թիւրքական մամուլի վերջին մի շարք յարձակումները Պորտուգալիսի Միութեան դէմ: Իսկ ներքին քաղաքականութեան մէջ թիւրքական բուժօրհանը, որ դեռ չծաղկած արդէն գարնել է գաւառութեան ախտով, դիմում է փորձած ահաբեկչական միջոցների, որ գործադրում են դրամատիքութեան կողմից, ի թիւս որոնց և Փաշիստական միջոցների՝ իր դասակարգային դիրքերը պահելու նպատակով»:

*) Սրան ասում են՝ այրւած սրտի միջիքարանգ: Կոմկուսի գործունէութիւնը թիւրքիայում ինչու արգելւած է. Մոսկուսն իր կողմից պարտաւորութիւն է ստանձնել թոյլ չտալու, որ Կոմկուսը գործէ թիւրքիայում: Քեմալի անժիմի տակ Կոմկուս ու կամուխատու-

կան գործունէութիւն գոյութիւն չունի. «Պրաւդա»-ն ո՛ւմ է ուզում խտրել՝ պնդելով հակառակը:

**) Յեղափոխութեան Օմանգալութեան Միջազգային Ընկերութիւն.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ԶՐՈՅՑ ՊՍԱՍԱԽԱՆԱՏՈՒ ԲՈՂՇԵՒԻԿԻ ՀԵՏ

Վիեճնա. 2 Նոյեմբ. 1929.

Առիթ ունեցայ երկարորէն խօսելու մի անձնաւորութեան հետ, որ բարձր պաշտօններ է վարել խորհրդային արտաքին առևտրի և դիւանագիտութեան ասպարէզներում, ինչպէս նաև Կոմունիստական Կուսակցութեան մէջ, շատ մօտէն ծանօթ է բոլշևիկեան վարազորի յետևր կատարող ղէպերին և խորհրդային արևելեան քաղաքականութեան: Նրա տւած տեղեկութիւնները գուրկ չեն շահեկանութիւնից մեզ համար, ուստի, էական մասերը, ներկայացնում եմ «Դրօշակ»-ի ընթերցողներին»:

Ես նրան խնդրեցի լուսարանութիւններ տալ հետևեալ հարցերի մասին.

- ա). Թիւրք-խորհրդային յարաբերութիւնները.
- բ). Թիւրք-պարսկական յարաբերութիւնները.
- գ). Կովկասեան գործեր.
- դ). Բոլշևիկները գործունէութիւնը գաղութահայութեան մէջ:

Ան նրա հաղորդած տեղեկութիւնների ամփոփումը:

Ա.— Թիւրք - խորհրդային յարաբերութիւնները այսօր, կարելի է ասել, լարւած են: Այլ էր դրութիւնը 1920-ին, երբ Թիւրքերը պատերազմում էին յոյների դէմ: Այն ժամանակ կար Թիւրք-խորհրդային պաշտնի դաշնագիր, որով խորհրդային իշխանութիւնը պարտաւորութիւն էր ստանձնել օգնելու Թիւրքերին դիւանագիտորէն, դրամով և ռազմական միջոցներով: Թիւրքերը լիովին օգտագործեցին այդ դաշնագիրը. խուճոր դուժարները ստացան Մոսկուայից և մեծաքանակ ռազմամթերք: Մոսկուայից ստացած ռուսով Գեմալը պահեց իր բանակը, եւրոպացիներէց գէնք, զինուորական հագուստ ու կահաւորում զինեց: Զափազանցութիւն չի լինի, եթէ ասենք, որ ընթացիկանութիւնը յաղթող հանդիսացաւ գլխաւորապէս բոլշևիկները օժանդակութեան շնորհիւ:

Իսկ ի՞նչ եղաւ Թիւրքերի օգնութիւնը բոլշևիկներին: Առաւելապէս երկու բան. նրանք օգնեցին բոլշևիկներին զրաւել Թուրքեստանն ու Կովկասը և արևել-

եան մահմետական ժողովուրդների համակրանքը ուղղեցին Մոսկուայի կողմը:

Այժմ կացութիւնը զգալապէս փոխւած է. Թիւրքեան յայտնապէս սկսել է պաղել Մոսկուայից և դէպի արևմուտք հակելու տրամադրութիւն ցոյց տալ: Ի հարկէ, այս դեռ խղում չի նշանակում և խղում երբեք էլ չի լինի, բայց անհասանկան չէ, որ, ինչպէս պատահեց Գերմանիայի հետ, Թիւրքերը մտնեն կերպական քաղաքական շրջանակի մէջ, իսկ Մոսկուայի հետ պահեն սովորական դիւանագիտական յարաբերութիւններ: Եւ բոլշևիկները դրանից վախենում են. անցեալ տարի, երբ լուր տարածեց, թէ Լսմէթ փաշան ուզում է Եւրոպա գնալ, Կրեմլում ահազին իրարանցում ընկաւ և բազմաթիւ հեռագիրներ ուղղեցին Անգղոս, դեսպան Սուրբիցին՝ յետ կեցնելու համար Թիւրքերին նման քայլից:

Ի ղէպ, Սուրբիցի մասին դուրսը այն կարծիքը կայ, որ կարող մարդ է և մեծ ազդեցութիւն ունի Անգորայում: Բոլորովին սխալ է. ոչինչ մարդ է, և եթէ մինչև այժմ խորհրդային դիւանագիտութիւնը Թիւրքիայում յաջող է եղել, պատճառը ոչ թէ դեսպանի անձնական յատկութիւններն են, այլ՝ առարկայական պայմանները: Թիւրքերը իրենք են ձգտել սերտ բարեկամական կապեր պահել բոլշևիկների հետ: Հիմա, երբ դրութիւնը փոխւած է, հերթի է դրւած Սուրբիցին ուրիշ մէկով փոխարինելու հարցը: Մոսկուայում վերջերս խօսուած էր Կարախանի մասին. միտք կար Կարախանին ուղարկել Իբրև բանագնաց-պատուիրակ, ապա նշանակել դեսպան Սուրբիցի տեղը:

Այս միտքը հաւանական է համարւում երկու պատճառով. նախ՝ կարծում են, որ Կարախանի անունը հեղինակաւոր է Արևելքում: Զէ՞ որ ցարական արտօնութիւններից հրժարւող, արևելեան ժողովուրդներին ազատութիւն աւետող հեռագիրների մեծ մասը, 1919-20 թւերին, ստորագրւած է Կարախանի կողմից:

Երկրորդ՝ Լիտվինովի պարագան: Արագործկոմը շատ է ուզում գլխից ռազ անել Կարախանին, որը Ձիւրիքի զործակալներից է, իսկ Ձիւրիքինն ու Լիտվինովը, ինչպէս յայտնի է, իրար հետ չուն ու կատու են: Լիտվինովը ոխերիմ հակառակորդ է Ձիւրիքինին և ամէն կերպ աշխատում է արտաքին զործավարութիւնը մաքրել չիւրիքիականներից: Այդ է պատճառը, որ Ձիւրիքինը երբևէլ է չվերադառնալ Մոսկուա, քանի- իրովինովը նստած է արտաքին զործավարութեան մէջ: Ճիշտ է, Կարախանը Թիւրքերին կուսակիցը չէ, այլ միայն, նախկին զործակից, բայց և այնպէս Լիտվինովը նրան էլ չի տանում. այս բանում, զուցէ, որչ.

*) Յայտնի պատճառներով լրատուի անունը հանում եմք քաղաքացիականից: Նա մեզ ծանօթ է և հաղորդած տեղեկութիւնները անպայման արժանի են ուշադրութեան:

ԽՍԲ.

տեղ ունի և վախը. Լիտվիները չի սիրում այնպիսի մարդկանց, որոնք կարող են մրցակից լինել իրեն:

Կարախանին Անդրաբ ուղարկելով՝ Մոսկւան յոյր ունի Հարթել թիւրք-խորհրդային յարաբերութիւններին մէջ վերջնա կուտակուած բոլոր դժուարութիւնները, որոնց մէջ անկարեւոր տեղ չի գրաւում առևտրական հարցը. թիրաբիրը չափազանց դժգոհ են բուռնիկներին վերաբերումից դէպի թիւրք առևտրականները: Ըստ առևտրական դաշնագրի, Մոսկւան պարտաւարել է թոյլ տալ թիւրք առևտրականներին, որ Ռուսաստանում ծախած իրենց ապրանքների փոխարժէքը պարտով արտահանեն Ռուսաստանից, բայց չէրվոնցի անկումը ստիպեց խորհրդային Խլխատնութեան միակողմանի կիրպով խախտել այդ համաձայնութիւնը և արգելել արտահանութիւնը: Մոսկուայից դաշնագրի և ուրիշ կէտեր, ինչպէս, օրինակ, անանց արտոնագրի ապրանք ներածելու իրաւունքը: Այս խախտումները անպիսի յուզում առաջ բերին թիւրքիայում և մինչև այժմ էլ մնում են անյոյժ:

Փոխադարձ դժգոհութեանց տեղիք տեղ կէտ է և կոմունիստական պրոպագանդը թիւրքիայում: Մի քանի դէպքերից յետոյ, Մուսթաֆա Քեմալը վճռական կերպով պահանջ ներկայացրեց Մոսկւային՝ վերջ տալ կոմունիստական պրոպագանդին, այլպպէս կը խզէ յարաբերութիւնները: Մոսկւան վախեցաւ և համապատասխան այժմ իսկապէս կոմունիստական աշխատանք չի կատարում Պոլսում: Ասեմք հնարաւորութիւն էլ չկայ. Պոլսի կոմունիստները, ինչ որ մնացել են ազատ Քեմալի ճանկերից, ամբողջովին թեքել են Տրոյկիի կողմը:

Նոյնը չի կարելի ասել քեմալական պրոպագանդի մասին: Մոսկւայում այժմ տեղեակ են, թէ Պորհրդ-Միութեան մասնետականներով քնակած շրջաններում վստում են քեմալական գործակալները, որոնք բաց ու բացայայտ համաթրքական պրոպագանդ են անում: Վրդայից մինչև Ամու Դարիա ու Արաքս, ամբողջ տարածութեան վրա, նկատուած է ուժեղ համաթիւրքական-ազգայնական շարժում: Թուրք ցեղերի մասուրականութեան համար, ամէն տեղ, բայց, մանաւանդ, Աղբրէջանում Անդրան համաթիւրքական ուխտավայր է և Մուստաֆա Քեմալը՝ ազգային հերոս ու սրբազնազոյն առաքեալ:

Մոսկւան այս ամենը գիտէ, բայց չի համարձակուած կտրուկ միջոցներ ձեռք առնել. վախենում է վըշտացնել Քեմալին, պարզապէս վախենում է, որ Անդրան երես կը դարձնէ իրենից և կանցնէ արևմտեան-դրամատիրական պետութիւնների կողմը:

Աւելին պէտք է ասել. բոլշեիկները թէև կովկասի սահմանները համարում են վերջնական, բայց Մոսկւայում լուրջ երկիւղ են կրում, որ թիւրքերը կարող են յարուցանել սահմանների սրբապրութեան հարց: Երանք մինչև այժմս չեն հաշտել Բաթումը ուսաններին յանձնելու փաստի հետ: Բոլշեիկների համար Բաթումը, իբրև Բազիի նախախորհրդակի բերան, ահապին կենսական նշանակութիւն ունի: Թիւրքերի համար Բաթումը համարուած է Կովկասի անսահման քանալիններէց մէկը, և Անդրայի ազգային շրջանները շարունակուած են փայտիայի Բաթումի վերագրաւման յոյսը:

Կայ և սրանից աւելին. Բագուն էլ չի դադարում թիւրք ազգայնականների ձգտումի առարկայ լինելուց: Մոսկւայում այդ էլ դեռ են: Այնտեղ գրեթէ ամենքը համոզուած են, որ որևէ խառնակութեան դէպքում թիւրքերը, այս կամ այն ձևով, ներս կը խուժեն Կովկաս՝ առաջին հերթին Աղբրէջանը գրաւելու նպատակով:

Մոսկւայում այսպէս են դիտահասում դրութիւնը. թիւրքերի մէջ կայ երկու մտայնութիւն ու ձգտում: Մէկի մէջ տիրապետող են Խոլիբ փաշայի գաղափարները՝ համիլաումութիւնը. սրանք փոքրամասնութիւն են: Երկրորդը ներկայացնում է համաթիւրքական կամ համաթուրանական հոսանքը արդէ Անգորան է Մուսթաֆա Քեմալի գլխաւորութեամբ: Երկու հոսանքն էլ ունի «Խորհրդային օրէկնացիայ». երկուսի հետ էլ Մոսկւան կապեր է պահում, բայց, ի հարկէ, երկուսն էլ չի հաստատւած, իսկ վերջինից և վախենում է:

Այդ պատճառով բոլշեիկները կապեր են պահում և թիւրքիայի այն տարրերի հետ, որոնք, ի պահանջի հարկին, կարող են ուղղել Քեմալի դէմ. Մոսկւան մասնաւոր ուղարկութիւն է դարձնում ջիւրդերի վրա, որոնց ցեղապետներից շատերին պահում է իր ձեռքին: Արևելքում այս գործը հնչող է ու շատ պարզ. տուր, որ առնես: Բոլշեիկները նման գործերի համար դրամ չեն խնայում:

Այն էլ պէտք է ասել, որ առ այժմ կապը աւելի պարսկական ջիւրդերի հետ է. Թիւրքիայի ջրդերի վերաբերմամբ շատ զգոյշ են՝ չվարկաբեկելու: Համար Անգորայում: Բայց դրանից խնդիրը չի փոխուած. չէ՛ որ պարսկական ջիւրդերը սահմանակից են թիւրքիային:

Ի հարկէ, այս կապերը պահում են գաղտնի: Պորհրդային դեպպանտներին ու հիւպատոսարաններին մէջ կան բոլորովին աննշան, երկրորդական դիրք ունեցող պաշտօնեաներ, որոնք և վարում են այս գործը. աննշան պաշտօնի տակ թագնւած են լինում, սովորաբար, հմուտ զինտրականներ:

Չպէտք է անտես անուն և հետեւել պարագան. ինչպէս բոլոր երկրներում, Պորհրդ. Միութեան մէջ էլ բանակի ու արտաքին գործոց նախարարութեան քաղաքականութիւնները, յաճախ, իրար չեն զուգարդիպում. Կարծիք Բանակի էլ ունի իր սեփական քաղաքականութիւնը: Կովկասի սահմանների վերաբերմամբ Կարմիր Բանակի կատարած քայլերը, շատ անգամ, խաչաձևուած են Լիտվիներով ձեռնարկած քայլերի հետ. տեղի վրա գտնուող վարիչները աւելի յստակ են տեսնում կացութիւնը և աւելի պորձնական քայլեր առնում:

Թիւրքերի մար փակելու համար պէտք է աւելացնել և այն, որ այժմ թիւրք-խորհրդային զաղտնի դաշնապի գորտթիւն շուտի, բացի ծանօթ պակտին կցւած մի գաղտնի յաւելածից, որով երկու կողմերը պարտաւորուած են իրար տեղեկութիւն տալ արտաքին դիւանագիտական ձեռնարկների և կնքած դաշնագրերի մասին: Նոյն իսկ քաղաքականութեան համաձայնեցման պայման չկայ. Թիւրքիան ապաս է վարել և վարում էլ է անկախ, ինքնուրոյն և իորհրդային քաղաքականութեան շեղարշակուող քաղաքականութիւն:

Այս փաստը մտկոլովցիներին լուրջ մտահոգութիւն և անհանգստութիւն է պատճառում :

Բ. — Պարսիկ-խորհրդային յարաբերութիւնները արտայայտում են աւելի շատ տնտեսական հողի վրա — նաւթային կոնցեսիա, առևտրական դաշինք, երկաթուղիներէ հարց և այլն, բայց հիմքը, ի հարկէ, քաղաքական է : Պորհրդային դիւանագիտութիւնը փաստորէն շարունակում է ցարական քաղաքականութիւնը, որ շատ դէպքերում երևան էր կալիս աւելի դատան ձևերով : Ճարի կառավարութիւնը ձգտում էր իր ազդեցութեան տակ առնել Հիւսիսային Պարսկաստանը՝ տնտեսական-առևտրական ազատ մրցակցութեամբ, արհեստական միջոցներով ամփոփելով Պարսկաստան ներմուծող ուսուսական ապրանքները : Նոյնը յուշակները անում են բռնի միջոցներով՝ քմահաճաբար շահագործելով Ջուֆա-Բաթում տրանզիտ ճանապարհը կամ արդիւններ հանելով պարսիկ վաճառականների դէմ : Այս հողի վրա բուռն դժգոհութիւններ տեղի ունեցան, և Մոսկուան ստիպւած եղաւ գիշնել, ի հարկէ, առժամաբար, մինչև որ նոր պատեհ առիթ ներկայանայ :

Պարսիկ-խորհրդային յարաբերութիւնները ձգտման առտ նկատ էր տալիս և նաւթային կոնցեսիայի հարցը : Բոլշևիկները դնել են ցարական իշխանութեան օրով կնքուած ծանօթ մի կոնցեսիայի (Պոշտարիա) իրաւունքները և այժմ աշխատում են ուսուս-պարսկա-Ֆրանսական մի ընկերութիւն հաստատել յիշեալ կոնցեսիայի շահագործման համար : Այս հարցի լուրջ կայ հասարակ պայքար, կան և խոշոր անձնական ու խմբական շահեր և սուր բախում Մոսկուայի ու Քիւրնայի միջև : Ի հարկէ, կրակի վրա իւր է լեցում և Լոնդոնից ու Նիւ-Եորքից :

Պորհրդային — պարսկական յարաբերութիւնները տեսակետից կարեւոր նշանակութիւն ունի և Անգլիայի քաղաքականութիւնը Պարսից Մոցի եղբայրներին ու նաւթարք շրջաններում : Անգլիացիք, օրինակ, ձեռք են բերել իրաւունք օդանաւային կայաններ հիմնելու մի շարք կէտերում՝ Լոնդոն—Հնդկաստանի օդային ճանապարհի ապահովութեան համար : Սրա դէմ խիստ բողոք ներկայացրին բոլշևիկները և դեռ շարունակում են բողոքել :

Քիւրնայում յուզում է առջ բերում և բոլշևիկներին դաւադիր գործունէութիւնը պարսկական ջրղերի մէջ : Այնտեղ համոզուած են, որ թիւրք-պարսկական սահմանի վրա մերթ ընդ մերթ տեղի ունեցող ջրղական խռովութիւնները արդիւնք են թիւրքական դաւերի, միայն թէ թիւրքիս գործում է իր դաշնակից բոլշևիկներին միջոցով : Մանաւանդ այժմ, երբ թիւրք-պարսկական սահմանից ճնշող ճնշում է ստացել, բոլշևիկներն սարձանները շիւրջերի մէջ լուրջ անհանգստութիւն են պատճառում պարսիկ ղեկավարներին : Այս առթիւ Քիւրնայը մի քանի անգամ կտրուկ բողոքներ է արել Մոսկուայում : Յայտնի է, որ Բեյրութում ու Փարիզում էլ պարսից դեսպանները տեսակցութիւններ են ունեցել խորհրդային դեսպանների հետ և նրանց ուշադրութիւնը հրահայրել այս խնդրի վրա :

Արձանագրեմք և դաշնակցականների խնդիրը : Բոլշևիկները մեկից աւելի անգամներ Քիւրնայում բողոքեցին դաշնակցականների պրոպոնիւտիւններին :

Նրանք պնդում էին, որ Դաշնակցութիւնը Հիւսիսային Պարսկաստանում զինուած խմբեր է պահում Հայաստանի վրա յարձակումներ գործելու նպատակով : Պարսից կառավարութիւնը միշտ էլ հերքեց այս մեղադրանքը դաշնակցական խմբեր չկան, իսկ դաշնակցական տարազիրները Պարսկաստանում քաղաքականութեամբ չեն զբաղւում և ապրում են, իրեն տարազիրներ, օգուտելով պարսիկ ժողովրդի աւանդական հերատիրութիւնից . . .

Կարո՞ղ է զինուած բախում տեղի ունենայ բոլշևիկներին և հարաւային հարևաններին միջև : Ի հարկէ, ո՛չ : Ո՛չ — որովհետև նախ՝ խորհրդային իշխանութիւնը երբեք զէնքի չի դիմի. նրա ներքին դրութիւնը թո՛ւ չի տալ արտաքին բարդութիւններ ստեղծելու : Մոսկուան ամէն դեմը կը խուսափէ պատերազմից, թէկուզ անհնարին գոհորդութիւնների գնով : Երբորդ՝ ո՛չ Պարսկաստանը և ոչ թիւրքիս չեն ուզում զինուած ընդհարում ունենալ բոլշևիկներին հետ : Ինչո՞ւ համար պիտի ընդհարեն. ո՛չ մի Ռուսաստան այնքան ձևանտույճ նրանց շահերի տեսակէտից, որքան տկար Ռուսաստանը, իսկ Պորհրդային Ռուսաստան, նախ և առաջ, նշանակում է տկար Ռուսաստան : Պէտք է տեսնել, թէ Ի՞նչպիսի յարուսն թափով ու յամառութեամբ պայքարում է Պարսկաստանը իր անկախութիւնը, Ի՞նչպիսի լեզուով է խօսում Մոսկուայում կամ Մոսկուայի ներկայացուցիչների հետ : Կարո՞ղ էր որևէ պարսիկ երբևէ իցէ երևակայել, ցարի ժամանակ, թէ մի օր այսպէս անկախ պիտի լինէր Ռուսաստանից . . .

Գ. — Կովկասեան գործերի մասին շատ տակիւր լուծում : Ըստ էութեան այնտեղ նախկին դրութիւնն է տրուում. ազգային համերաշխութիւնը պատրանք է առաջայ պէս վրայից, հայն ու թուրքը իրար միս են ուտում : Փոխել է միայն պայքարի ձևը և ժողովուրդների տեսակարար կէտը : Երեք հանրապետութիւններից Մոսկուային ամենից շատ դիմացաւանք է պատճառում Վրաստանը. այնտեղ աւելի ուժեղ են անվատողական ձգտումները, իսկ քաղաքական տարազիրների կապը Լոնդոնի և Վարշուայի հետ մտածել և տալիս, որ խռովութիւններն անհնար չեն : Հէնց մի քանի ամիս առաջ ուժեղ ապստամբութիւն պատահեց Աջարիտանում. խորհրդային մամուլում այդ մասին ոչինչ չգրուց, իսկ արտասահմանեան թերթերը միայն հատուկտոր լուրեր տարին, մինչևեւ շաբթուով բաւական ընդարձակ էր ու լուրջ : Բոլշևիկներն անմիջապէս ռազմական և Նովորոսիսկից զօրք բերին և ճնշեցին՝ երկուտեք բաւական մեծ կորուստներով :

Հետաքրքրական մի մանրամասնութիւն. համամիութեանական կառավարութիւնն նախազան Ռըկովը այս ապստամբութեան մասին իմացաւ ճշուումից շատ ուշ, պատահաբար, համազումարում արտասանուած մի ձտուց : Գէպէտև նոյնիսկ նրանից դապտին էր պահել : Այսպիսի ապստամբութիւնը ուրիշ տեղեր էլ են պատահում, բայց իշխանութիւնը ամէն դեմը ձածկում : Այբրէջանում խորհրդային իշխանութիւնը վախեցում է ազգամիջեան կռիւներից ու Գարդեբից : Մոսկուայում անհնար չեն համարում, որ մուսաւաթականները թիւրքերի աջակցութեամբ Բապուում առաջ բերեն հայ-

Յրբազանք ընդհարումները, որոնք կարող են վերածուել, ընդհանուր խառնակութիւններին և առիթ ստեղծել թիւրքերի միջամտութեան: Այդրէջանում շատ ուժեղ է թիւրքապիւղութիւնը, մուսուլմանները շարունակում են գործել, մանաւանդ զաւստներով: Կարգէջանի կոմունիստներին մէջ էլ շատ տարածւած են ազգայնական շովին տարրեր, մանաւանդ նոր սերունդը սնուած է թիւրքապիւղական դաղափարներով:

Բուլղոզիին այլ է դրուութիւնը Հայաստանում 1 Հայերի վերաբերմամբ: Հայաստանը երկու կրակի մէջ է, մի կողմից Ազրբէջան, միւս կողմից՝ Թիւրքիա: Եթէ մի բան պատահի, ամենից ստաջ Հայերը կերթան ոտքի տակ: Այդ է պատճառը, որ Հայ մուսուլմանները թիւրքերի հետ չեն ընդհարուել, խորհրդային օրիջնադարի կողմնակից:

Պօսքս Հայ մուսուլմանութեան մասին է և ոչ կոմունիստներին: Սրանք ամէն տեղ էլ Մոսկուայի կուսակառարներն են և ոչ մի ազգային գոյն կամ գիծ չունեն: Ազրային կոմունիստները Հայաժուտ են: Մղիկանիի, Բաւթարաձէի նման հին ու վառասակաւոր կոմունիստներ այժմ բանտում են և Միբրդ պիտի աքսորուեն միայն իրենց «ազգային գծի» Համար:

Միսլ է տարածւած այն կարծիքը, որ Ստալին, Օրջոնիկիձէ, Միկոյան և ուրիշներ, իբրև դեկաւար անհատներ, մտածում և օգտագործ են լիմուձ իրենց ազգի Համար էլ: Նախ՝ Միկոյանը պարզ ոչնչութիւն է և առաջ է քաշւած միայն Ստալինին հուստարիմ լինելու հետևանքով: միամտութիւն կը լինի նրան որևէ ազգային յատկութիւն վերագրել: Նա նոյնքան Հայ է, որքան և չինացի: Կարծում եմ, նոյնն են և Ստալինն ու Օրջոնիկիձէն, նրանցից վրացի ազգը շահ չունի*): Ընդհակառակը, Լենինը Ստալինին մեղադրում էր իբրև «ուսկ վեհագոյնական» ձգտումներ անդցանոց, և վրացի կոմունիստներին պաշտպանում էր նրա գէժ: Իսկ Օրջոնիկիձէն հէց իր առանձնատեսնակում ծեծեց Վրաստանի գործադարներին մէկին՝ ամբաստանելով նրան ազգայնականութեան յանցանքի մէջ: Այլ է պարագան Պորոգոզներին Գործկոմի ընդհանուր քարոտուար Ենուկիձէի: Իսկական վրացի է և վրացիների ու Վրաստանի Համար շատ բան է անում, բայց այժմ բուլղոզիին երեսից ձգւած է և ո՛չ մի ազդեցութիւն չունի:

Դ. — Գաղութահայրութեան մասին իմ ունեցած տեղեկութիւնները շատ չեն: Ստոյգ գիտեմ միայն հետևելով: մի ժամանակ, երբ Մեանիկեանը ողջ էր, Մոսկուայում էլ, Թիֆլիսում էլ կարևոր նշանակութիւն էր սուրում արտասահմանի թիւրքահայերին, որոնց միջոցով յայտ ունէին կոմունիստական պրոպագանդանէլ դպրութիւններում: Այդ նպատակին պիտի ծառայէին Հօկերը: Պոլսը դումարներ յատկացուցին. նոյն գործի վրա ծախսուած էին և արտասահմանի Հօկերի եկամուտները: Պոլիս, Աթէնք, Բեռլին, Փարիզ, Նիւ-Եօրք,

*) Փաստերը, սակայն, հակառակն են ցոյց տալիս: Ստալինն ու Օրջոնիկիձէն, իբրև Միկոյանից աւելի խիճօ մարդիկ, իրենց «ազգային գծը» տանում են շատ նարպաւրքեամբ: ԱՍԲԲ.

ԹէՀրան և ուրիշ տեղեր հիմնեցին յատուկ գործակալութիւններ: շուտ-շուտ պատուիրակներ ու պատուիրակութիւններ էին ուղարկում: Սակայն, դրանից բան դուրս չէկաւ: դրամը ջրի պէս հոսում էր, իսկ արդիւնք չէր ստացւում: Այն ժամանակ ծրագիրն ու յատկացուող դրամները զգալի չափով կրճատեցին և աշխատում էին տեղական ուժերի — Հօկերի, Հնչակեանների, ռամկավարների, Բարեգործականների միջոցով գործել:

Հիմա, այս տեսակէտից, Եւրոպայի գլխաւոր կենտրոնը Փարիզն է, ուր մի ժամանակ գործում էր դեսպանատան երկրորդ քարոտուար Ս. Փիբրումեանը օգնական ունենալով Ե. Չուպարը: Քարոտուարութիւնը միայն ձև էր, անուն, իրապէս Փիբրումեանը կուսակցութեան և Գէպէտի ներկայացուցիչն էր, լրտեսութիւն էր անում, Գէպէտի յանձնարարութիւնները կատարում և աշխատում էր դադուրը պատահել: Մի ժամանակ Հայ բուրժուազիայի շրջաններում էլ մուտք ունէր, որովհետև նրանց ցոյց էր տալիս, թէ ինքը ձև է Համար է կոմունիստ, իսկ իրօք նոյնպէս բուրժուազ է ու ազգային: Եւ կեանքով էլ բուրժուական կեանք էր վարում:

Փիբրումեանին հետացնելուց յետոյ, որոշեց Պոլսից Եւրոպայի կենտրոնի տեղափոխել Փարիզ, բայց Ֆրանսիան վարակարութիւնը մերժեց զիջա տալ:

Այն ժամանակ Փարիզ ուղարկեց վրացի Վաչնաձէն, որ մնաց մէկ շաբաթ և թողեց ու հեռացաւ՝ գերադասելով մանկանէկի ընկերութեան տեսի պաշտօնը: Վրացիք ուղեցին Վաչնաձէի տեղը մէկ ուրիշին ուղարկել, բայց Մոսկուան դալարած Վաչնաձէի հեռանալուց, թոյլ չուեց:

Հիմա Փարիզում անդրկովկասեան գործակալ չկայ: վրացիք մարդ չունեն: ազրբէջանցիներին առհասարակ որոշւած է տեղ չտալ, քանի որ թուրք տարագիրներին թիւրք մեծ չէ: Միայն Հայերը ուղարկել են Դրաստամատ Տէր-Սիմոնեանին, որի առաքելութեան որոշւած է պաշտօնական գոյն չտալ: Տէր-Սիմոնեանը ուղարկւած է Սորբոնում ուսանելու պատրւակով: Նա խմբադրում է «Երկրի» թերթը, վարում է «Հօկ»ի գործերը և պաշտօն ունի քայքայել դադուրը և լրտեսութիւն անել յօգուտ Երևանի: Նրան ենթակայ է «Հօկ»ի նախագահ բժ. Միխասեանը: նրա հետ կապ են պահում և

ԽՍԲԲ. — Հետաքրքրական է, որ Ս. Փիբումեանի և Դ. Տէր-Սիմոնեանի մասին հազարաւոր այս տեղեկութիւնները ամբողջապէս հաստատուել և բոլշևիկներին Փարիզի դեսպանատան Բախիկի խորհրդական Բեհեդալիկին: Սա ևս պնդում է, որ Ս. Փիբումեանը դիւանագիտական դեր չունէր Փարիզում և Հայկազկուսի ու Չեկայի ներկայացուցիչն էր, որ լրտեսութիւն էր անում այդ հիմնարկութիւնների հաշիին: Փիբումեանը պատմել է Բեհեդալիկուն, որ տեղեկութիւններ գաղութահայրի մասին, առհասարակ, քաղել է ռամկավարների պայապալսյաներից: հաշի է երախիքի նրանց և մաշի ժամանակ տաղել պտանալուց միւրքը: Բեհեդալիկու անել տալով Տէր-Սիմոնեանի տրամադրութեան տակ Երևանից Անարկուս է ամսական 750 դարալ:

Բարեգործականի վարիչները, ինչպէս նաև ուսմակալար դեկավարները:

Դրաստամատ Տէր-Աիմոնեանի տրամադրութեան տակ դրւած են «Հօկի» հասոյթիները և Երևանից ուղարկուած է մասնակի 800 դրար (19,000 Փր.): Այդ գումարներով Տէր-Աիմոնեանը լրտեսութիւն է անուած, կաշառք է տալիս զանազան անհատներին, գնում է քաղցած ուսանողներին և մտաւորականներին խիղճը, այսինքն՝ անուած է այն, ինչ որ ամէն տեղ անուած են բոլրէկ գործակալները:

Մոսկւայում գոհ չեն հայ կոմունիստներին արտասահմանեան գործունէութեան արդիւնքներէից. գլխաւոր խնդիրը՝ Դաշնակցութեան քայքայումը աւելի քան երբեք մնում է չիրագործուած, իսկ ուսմակալարներ կամ հնչակեանների համակրանքին մեծ արժէք չի տրուած: Համոզուած են, որ գաղութիւնայն բուրժուական անկեղծ չէ իր «խորհրդային օրինակագրի»-յի մէջ: Եւ, իրօք, ինչպէ՞ս կարող է դրամատէրը անկեղծ սէր տա՞ծել գէպի մի իշխանութիւն, որ ձգտում է ոչնչացնել դրամատիրութիւնը...

ՎԻՆՆՑԻ

«ՄԵՐ ՆՆԱՃՈՒՄՆԵՐԸ»

Երիպ, 14 օգոստոս. 1929.

Ազգում եմ «Իրօչակ»-ի ընթերցողներին մի քանի տեղեկութիւններ տալ խորհրդային իշխանութեան կատարած նաճումների մասին: Առնենք նրա զասակարգային գծով տարած աշխատանքը խորհրդային և կոլեկտիւ (հաւաքական) տնտեսութիւնների քնազաւառում. ինչքան նպատակայարմար և շահաւէտ են այդ տնտեսութիւնները թէ իշխանութեան և թէ հասարակութեան համար:

Այդ տնտեսութիւնների շուրջ, ամենից առաջ, հաւաքած են աշխատանքից խուսափող, ծոյլ մարդիկ, որոնք մինչև այդ պարիչ են ուրիշ աշխատանքով, զանազան ստոր միջոցներով: Այժմ այլևս չկարողանալով այդ միջոցներով ապրել, հաւաքել են կոմունային և կոլտնտեսութիւնների շուրջը: Դրանց ճնշել մեծամասնութիւնը ոչ մի հասկացողութիւն չունի նման տնտեսութիւնների մասին. չեն էլ հետաքրքրուած նրանցով և իրենց շահն են փնտրում: Իւրացումներ, գեղծաբարութիւն, առաւ-փախաւուութիւն և, իբրև այդ ամենի հետևանք, քայքայում — սովորական բան է: Ապացուցողները խիստ շատ են:

Ահա երկրորդ գաւառակի Դուլիջան գիւղի կուլտնտեսութիւնը, որը հիմնւեց կուսակազմ և նոյն գաւառի վարիչնիկերութեան նախագահ Անտոն Յարութիւնեանի և կուսակազմ Աղասի Յարութիւնեանի ձեռնբեղութեամբ. հասմարբեցին բաւական ջգատ որ միջակ գիւղացիներ. որպէս վարի Անտոնը բաց թողեց մի պատկառելի գումար: Չանցած մի քանի ամիս ընկերութիւնը լիւրիւրացիայի ենթարկեց, որից խոշոր չափով օգուտեցին դեկավարներ Յարութիւնեանները իրենց համախոհներով և սուսեցին անդամները, որոնք

իրենց ունեցածը դրել էին կոլտնտեսութեան մէջ: Յարութիւնեանները մնացին անպատիժ և կուսակցական ստմար գրպաններում:

Մի ուրիշ օրինակ. առաջին գաւառակի Օջախ-Ղուլի գիւղի կոլտնտեսութիւնը, որը համարում էր ամենալաւը, իր ոգով ու ծրագրով համապատասխան էր կոլեկտիւի պահանջներին: Սրա շուրջն էլ հաւաքած են յայտնի գեղանահատներ և աւագակներ, որոնք օրը ցերեկով թալանում են գիւղահասարակութիւնը, գեղի ու փարթամ կենք են վարում և իրենց կատարած ծախսերը ծածկելու համար զանազան պատրականերով և անուղղակի ճանապարհներով գիւղացիներից ապօրինի տուգանքներ են առնում կամ չէնքերի կառուցման անւան տակ թալիների միջոցով դրամ են հաւաքում, կամ գիւղի ունեւորներին հանրեկում են չէկայի անուսով և փողեր կորցում ու քե՞ք անում... Այսպիսի օրինակներ շատ կան, բայց անցնենք:

Խորհրդային թերթերը ամէն օր հուրովում են, թէ գիւղական տնտեսութիւնը բարձրացել և անցել է նախապատերազմեան շրջանից: Յանքերի տարածութեան լայնացման համար յատուկ կամպանիաներ են մղում: Խօսում են երկրագործութեան վերելքի մասին: Ես գոնէ, իբրև գիւղացի, պիտի ասեմ, որ իրականում այդպէս չէ, այլ ընդհակառակը. ոչ թէ նախապատերազմեան վիճակին է հասել, այլ բարիս բուն նշանակութեամբ գիւղացու տնտեսութիւնը քայքայուած է, և այդ քայքայումը հետեւանք է բացարձակ թալանութեան և ուղղակի ու անուղղակի հարկերի խորհրդային իշխանութեան կողմից, չափից դուրս կատարած գանձումների — գանձումների, որոնք տարէց տարի աւելանում են և անհնարին դարձնում գիւղացու օրական պարենի հայթայթումը:

Առնենք, օրինակի համար, մի գիւղ, որ բաղկացած է 250 տնտեսութիւնից: Դրանցից 7-10 տնտեսութիւն, իրենց անձը գրելով, շարաշար աշխատութեամբ ունենում են մի քանի դուլի մանր և խոշոր անասուն ու մի քանի փութ հացահատիկ և հէնց դրանով դառնում են կուլակ՝ ձայնագուրկ և ենթակա անհատական հարկադրման: Նմանների հանդէպ կիրաւուում է հետեւեալ դրութիւնը. նախ՝ ընտանիքի անդամների հաշուով նրանցից զանձուած է ձայնագրկման ստիւք. երկրորդ, անհատական կարգով, տրուում է 500-1000 բուբլի հարկ, յետոյ՝ գիւղական թաւը մեծ մասամբ ծանրանում է նրանց վրա հարկային կողպաբով, որպիսի գուժարը, յաճախ, լինում է աւելի, քան նրա ամբողջ ստացւածքի արժէքը: Երբ գիւղացին որոշուած ժամկէտին չի կարողանում մուծել դրամը, վրան աւելանում է սովորը, որը հետզհետեւ բարձրում և աճում է, որից յետոյ բռնագրաւուում է ունեցւածքը — անասուններ, երկրագործական գործիքներ, տան իրեր — և ծախուում է աճուրդով:

Այս էլ չի փրկում խեղճ գիւղացուն: Մնանկանալուց յետոյ էլ նրան հանդիստ չեն ձգում. հիմա էլ նա «անհարպատ տարր» է, «նախկին կուլակ», «վարձու աշխատանքը շահագործող» և մնում է ձայնագուրկ, թէկուզ յետին աղքատից էլ աղքատ է:

Աւելի լաւ չէ և միջակ գիւղացուութեան վիճակը: Սրանք քաղաքացիական իրաւունքներից զրկուած չեն,